



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

19709 -  
19712

371.7  
Z-20  
1910



Վ Տ Ա Ն Գ Ը

ՆՈՒԻՐՈՒԱԾ  
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

ՈՐՈՆԲ

ԱՆԿԵՆԾՕՐԷՆ ԿԸԲԱՂՁԱՆ ԱՊՐԻԼ ՄԱՔՐՈՒԹԵԱՄԲ

Գ Ր Ե Ց

Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ A. B., A. T. S. (Associate of Theol. Senate)

ՀՈՎԻՒ ԱԻԵՏ. ՀԱՅՈՑ ՅԵԳԻՊՏՈՍ

«Երիտասարդական ցանկութիւններէ փախիր»  
«Դուն զից մաքուր պահի»

ՏԱՐՍՕՆԱՅԻ ԳՕՂՈՍ

Կ. ՊՈԼԻՍ

ՏԵԼԵԳՐԱԳՐԱԿԻՆ Թ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1910

25303-45

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Թէ որ երկրի մը վրայ սուր բերեմ, ու ան երկրին ժողովուրդը իրենց մէջէն մէկ մարդ մը ընտրեն և զանիկա իրենց համար դէտ դնեն, ու անիկայ ան երկրին վրայ սուրին գալը տեսնէ, և փողը հնչեցընէ ու ժողովուրդը զգուշացընէ. ան ատենը թէ որ փողին ձայնը լսողը չզգուշանայ, և սուրը գայ՝ զանիկա վերցընէ, անոր արիւնը իր գլուխը պիտի ըլլայ: Անիկա փողին ձայնը լսեց ու չզգուշացաւ, անոր արիւնը իր վրայ պիտի ըլլայ. բայց զգուշացողը իր հողին կ'ազատէ: Իսկ թէ որ դէտը սուրին գալը տեսնէ և փողը չհնչեցընէ, ու ժողովուրդը չզգուշանայ, և սուրը գայ և անոնցմէ մէկ հողի մը վերցընէ, անիկա իր անօրէնութեանը համար վերցուեցաւ. բայց անոր արիւնը դէտին ձեռքէն պիտի պահանջեմ:»

Այս տողերուն արտայայտած ստիպողականութեան զգացումէն դրդուելով է որ «Վտանգ»ը հրատարակութեան կու տանք: Սուրին գալը կը տեսնենք և ժողովուրդը զգուշացնել կ'ուզենք: Երիտասարդներուն առջեւը գտնուած վտանգը կը նշմարենք և ի ձայն փողոյ յայտարարել պարտականութիւն կը սեպենք: Չէ որ մենք ալ դէպի դէրը սպաննած ենք այս երկրին մէջ: Ինչպէս պիտի կրնանք մեր նպատակութեան հաշիւը տալ գործին Տիրոջ, եթէ զանցառու գտնուինք այս էն կենսական պարտականութեան մէջ: Ո՛հ, գիտնալ և լուել, տեսնել սուրին գալը և չեփորը չթմանց չբարձրացընել, աւելի քան վատութիւն է, դաւաճանութիւն է: Մեր դիրքէն՝ ուր կը գտնուինք, պաշարուած քաղաքի մը

4480-56

պատնէշին վրայ կեցած դէտին նման, կը տեսնենք բովանդակ պատերազմի դաշտը, և հոս ու հոն կ'ընդունուինք թշնամուտն սուրէն ինկած երիտասարդներուն հոգեւարքի գալարումները՝ արիւնշաղախ տիղմին մէջ, և կը լսենք միջրոպայից կոկորդներէ ելած մահուան կակըծալի հունդիւնները: Ոչ ոք՝ որ զգայուն սիրտ մը կը կրէ իր մէջ՝ պիտի կարենար լռել, եթէ գիտնար՝ ինչ որ մենք գիտենք:

Երբոր առաջին անգամ այս գիրքը գրելու ծրագիրը յղացանք, մտաւորապէս երեք ամիս առաջ, մտադրեցինք կարդալ մեր նիւթը շօշախող բոլոր հեղինակութիւնները որոնք մեզի տրամադրելի էին: Տոքթ. Սիլվէյնըս Սթոլի, What A Young Man Ought to Know գիրքը ճիշդ մեր փնտռածն էր: Անոր առաջին երկու գլուխները կարդալէ յետոյ երբ մեր գրքին այն հատուածը կը գրէինք որ «Երիտասարդական Յանկութիւններ»ը խորագիրը կը կրէ, գարմացմամբ տեսանք որ Տոքթ. Սթոլի խորհուրդները այնպէս գրուած էին մեր միտքը որ անոնցմէ անջատօրէն գրելու անկարող կ'ըլլայինք: Այս՝ ընտանաբար հաճելի չէր: Աւելի կը փափաքէինք խօսիլ մեր երիտասարդներուն, մեր տեսակէտէն, մեզ շրջապատող վտանգներուն վրայ և մեր զգացած կերպովը: Անմիջապէս մէկ կողմ դրինք օտար հեղինակութիւնները և ասպարէզ տուինք մեր գրչին և գրեցինք ինչ որ մեր սիրտը կը թելադրէր: Հեաեւարար յետագայ գրութիւնները ուրիշ բան չեն, այլ մեր անձնապէս գիտցած ու տեսած, և տեղւոյն վրայ՝ տարիներէ ի վեր՝ ուսումնասիրած կարգ մը իրողութեանց պատկերացումները, մեր սրտի արտաղեղումներն են:

Երիտասարդութեան այն դասակարգին նուիրած ենք գիրքը որ անկեղծօրէն կ'աչխատի մաքուր կեանք մը ապրիլ և խորհրդատուի կը կարօտի: Գործ չունինք այն յաւակնոտ երիտասարդին հետ որ կը կարծէ թէ ամէն

բան գիտէ, և կ'արհամարհէ խրատը: Անիկա փողին ձայնը կը լսէ ու չզգուշանար. խօլարար կը վազէ դէպի կորուստի անդունդը, ուրկէ՝ եթէ երբեք օր մը դուրս գայ ալ, իր մարմինը շարաւալից վէրքերով գոցուած, միտքը բթացած և հողին ապականուած պիտի գտնէ: «Անոր արիւնը անոր գլուխը պիտի ըլլայ:»

Որևէ նիւթական շահ կամ գրական փառք վատը կելու նպատակ չունինք: Մեր միակ բաղձանքն է տեսնել որ երիտասարդները կ'ունինդրեն աղղարարութեան ձայնին և կ'զգուշանան դայիք վտանգէն: Անչուշտ վարձատրութեան կը փափաքինք, բայց ոչ սովորական տեսակէն: Եթէ հասկնանք թէ գէթ մէկ հողի, այս սողերը կարդալով, կրցած է ճողոպրիլ բարոյական մահուան ճիւղաններէն, մեծագոյն վարձատրութիւնը ընդունած պիտի ըլլանք:

11 Մարտ, 1910  
Գանիլէ

Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ



# Վ Տ Ա Ն Ք Ը

Ա.

## Դ Է Տ Ը Ե Ի Ի Ր Դ Ե Ր Ը

Միջավայրի մը մէջ կ'ապրինք որ բարոյական  
ապականութիւն կը բուրէ և մեր Հայ երիտասար-  
դութեան ֆիզիքական, մտաւորական և հոգեկան  
առողջութեանը կ'սպառնայ: Եզիպոսս շատ մը  
մարուր երիտասարդներու բարոյական դերեզմանը  
եղած է: Մեծ հակապատկեր մը կայ մեր երկրին  
և այս տեղոյն միջեւ: Հոն կեանքը պարզ, խաղաղ  
և անդորր է, հոս՝ բազմադիմի, տենդոտ և աղ-  
մըկալից: Հոն նահապետական սովորութիւնները  
դեռ տեղ տեղ կը տիրեն և ծերունին կը յար-  
գուի, հոս՝ ազատութեան սխալ ըմբռնումով մը՝  
ոչ միայն մեծին ու պզտիկին, չափահասին ու դե-  
ռատիին միջեւ եղած տարբերութիւնը վերցած է,  
այլ նաև սոգէտ և անփոյթ երիտասարդներ մե-  
ծամտութեամբ կ'անարդեն փորձառուներու ա-  
ռողջ հրահանգները իբր հինցած ու ատենը ան-

ցած գաղափարներ : Հոս յարգանք , պատկառանք , համեստութիւն , ամօթխածութիւն անիմաստ բառեր են . աւելի յատկանշական են լրբութիւն , անամօթութիւն և վաւաշոտութիւն : Ուստի երբ անփորձ երիտասարդ մը , որուն նկարագիրը տակաւին կազմուած չէ , յանկարծ կը փոխադրուի Հայաստանի մաքուր և առողջ մթնոլորտէն , Գահիրէի պէս ապականեալ վայր մը , անոր անկումը անխուսափելի կ'ըլլայ , եթէ զօրաւոր կամք մը իբր նեցուկ չունի և դուրսէն՝ զայն փրկելու համար օգնող ձեռք մը չկարկառի : Իրենց երկրին մէջ ծանօթ և լաւ վկայեալ քանի՜ երիտասարդներ կը ճանչնանք որ այժմ այս վատառողջ քաղաքին անբարոյականութեան գարշահոտ ցեխին մէջ անյոյս կերպով կորսուած են :

Եթէ այս է մեր միջավայրի կացութիւնը , ո՞վ պիտի երիտասարդներուն վրայ դէտի պաշտօնը կատարէ : Ո՞վ պիտի բարոյական ամբուլթիւններէն ահազանգի փողը հնչեցունէ , ազդարարութեան ձայնը բարձրացնէ : Այո , Ո՞վ :

Այլազան նպատակներու համար կաղմակերպութիւններ ունինք : Աղքատախնամ , Բարեգործական , Ընթերցասիրաց , Ուսումնասիրաց ընկերութիւններ կան . Յեղափոխական և Ռամկավար կուսակցութիւններ կազմուած են և իւրաքանչիւրը առաւել կամ նուազ օգտակարութեամբ դեր մը կը կատարեն . բայց չունինք ընկերակցութիւն մը որուն նպատակը ըլլայ երիտասարդները — մանա-

ւանդ նորեկները — գտնել և զանոնք զգուշացնել միջավայրի բարոյական վտանգներէն : Արդեօք կարելի չէ՞ ինքնագիտակից և փորձուած անհատներէ խումբ մը կազմել , որոնք « փրկութեան բանակ » զինուորներուն նման՝ իրենց պարագոյ ժամերը յատկացնէին մասնաւոր վայրեր այցելելու , և հոն մտորած երիտասարդները գտնելով զանոնք ուղղութեան առաջնորդելու :

Բայց մինչև որ այսօրինակ ընկերակցութիւն մը կազմուի , դէտի պարտականութիւնը կը ծանրանայ ծնողաց , երէց եղբայրներու , ուսուցչաց և հոգեւորականներու վրայ : Ասոնք պէտք է որ հսկեն իրենց խնամքին տակ գտնուած պատանիներուն վրայ , և ի դէպ ժամանակի առաջնորդեն զանոնք ուղիղ շաւղի մը մէջ : Մնունդ , դաստիարակութիւն , կրօնք անհրաժեշտ են . բայց առանց այս բարոյական աջակցութեան , ատոնց աղքեցութիւնը կը չեղդքանայ : Ի՞նչ օգուտ ունի զաւակդ համադամ կերակուրներով սնուցանել , երբ անիկա իր մարմինը կ'եղծանէ անբարոյական ապրելակերպով մը : Ի՞նչ կրնայ ընել լաւագոյն դաստիարակը երբ տղուն միտքը բթացած է կրից ապօրինի գործածութեամբ : Ի՞նչպէս կրնայ կրօնքը հոգին փրկելու իր դերը կատարել , երբ մարդուն հոգեկան աչքերը մթազնած են մարմնաւոր ցանկութեանց անսանձ կիրարկումովը : Բարոյականութիւնը կրօնքի , առողջութեան և ճշմարիտ դաստիարակութեան հիմը կը կազմէ :



Մեր մէջ սովորութիւն եղած է, կեղծ համաստութեան մը քօղին տակ, լուութիւն պահել երիտասարդական խնդիրներու վրայ: Չափահասներ անպատշաճ կը նկատեն խօսիլ իրենց կրթասերներուն հետ, այն փորձութիւններուն նկատմամբ, որոնց կ'ենթարկուին անոնք իրենց կեանքի ամենափափուկ ժամանակամիջոցին մէջ, և կամ լուութեամբ կը կարծեն տղաքը անտեղեակ պահել այս փորձութիւններէն: Բայց ծնողք կը սխալին այս մասին: Մէն մի պատանի ուշ կամ կանուխ կը սորվի այն ամէն բաները որոնցմէ դուք հեռու պահել կ'ուզէիք զինքը և թերեւս այնպիսի ընկերներէ որ իրեն աւերման պատճառ կ'ըլլան: Առարկութիւնը թէ այս տեսակ չարիքները յիշելով աւելի թելադրած քան թէ խափանած կ'ըլլանք, սնտաի է: Թող տալու չէ որ տղայ մը իր դառն փորձառութեամբը անոնց մահացու արդիւնքը ճաշակէ: Վտանգի երկիւղը և գիտակցութիւնը կ'ստիպեն մեզ անտես ընել այսպիսի փցուն պատճառաբանութիւնները և որոշ ու պարզ բառերով զգուշացնել մեր դեռահաս երիտասարդութիւնը: Այս խնդրոյն վրայ պէտք է խօսիլ և գրել այնպիսի մանրամասնութեամբ և շեշտով, այնպիսի փափկանկատութեամբ և շարժառիթով որ սոսկում և ատելութիւն յարուցանէ այս չարեաց դէմ:

Ասով չենք ուզեր շատագովել Էմիլ Զօլայի «Գեղարուեստի մէջ իրապաշտութիւն» վարդապե-


տութիւնը: Զօլայի դպրոցին պատկանող հեղինակները արդարև կը պատկերեն՝ խիստ իրական բառերով այն չարիքները որոնք մարդկային ազգին անէծքը եղած են. սակայն զայնս դատապարտելու համար խօսք մը չունին: Անոնց շարժառիթը կասկածելի է: Փայլուն գոյներով նկարագրելէ վերջ չարիքին մութ կողմը երեւան չեն հաներ: Միլտոնի «Կորուսեալ Դրախտ» ին մէջ սատանայապետը այնպէս կը նկարուի մեր առջև որ ընթերցողին առաջին տպաւորութիւնը անոր նկատմամբ հիացում և սքանչացում կ'ըլլայ: Սակայն այս զգացումը երկար չտևեր: Քիչ մը անդին, Միլտոն կը թուէ անոր դիւային արարքները և մեր պժգանքը ու ատելութիւնը կը գրգռէ այդ ճիւղին դէմ: Զօլաեանները, սակայն, զանց կ'ընեն գործին այս երկրորդ մասը և կը թողուն որ չարիքին պարզ պատկերացումը իր իսկ տպաւորութիւնը գործէ կենաց շաւղին մէջ առաջին անգամ մոռնողներուն վրայ: Իրապաշտական վարդապետութիւնը այն ատեն օգտակար կ'ըլլայ, երբ անոր յետսագոյն նպատակը հրահանգել, զգուշացնել և սարսափ ազդել է: Առաջնորդը պէտք է, իբրև Մենտոր, բունէ պատանւոյն ձեռքէն և այն ծաղկազարդ և դիւթիչ պարտէզին մէջէն անցնելէն վերջ անոր միւս եզերքը՝ զոհուած մարդոց ոսկորներով լի վիհը ցոյց տայ: Թատերաբեմին վրայի հրապուրիչ տեսարաններուն ականատես ընելէ յետոյ, պէտք է յանկարծ վարագոյրը

մէկ կողմ՝ քաշել և մահը իր զազիր երեւոյթով ի յայտ բերել:

Յիրաւի ծնողքի մը համար հաճելի չէ այս գործը ստանձնել, և շատ շատ տղաքը ընդհանուր բառերով զգուշացնելէ անդին չեն անցնիր: Սակայն ասիկա պարտականութեան մէջ թերանալ է և արդիւնքը աղէտաբեր: Կարբեդոնացի երիտասարդի մը համար կը պատմուի թէ իր ոճրագործութեան համար մահուան դատապարտուած ըլլալով կախադան տարուելու պահուն խնդրեց որ իր մօրը վերջին հրաժեշտը տայ: Երբ մայրը անոր մօտեցաւ գուրդուրանքով, երիտասարդը զայն իր հուժկու բազուկներուն մէջ առնելով... խածաւ անոր ախանջը ու մէկ կողմ՝ նետեց՝ աղաղակելով, « Ս, յս է վրէժը զոր կը լուծեմ՝ զիս ժամանակին զգուշացուցած չըլլալուդ համար: » Արդեօք քանի՞ զաւակներ կան որ այս Կարբեդոնացիին նման իրենց մեծերը կ'անսիծեն անխօսուկ իրենց պարտականութիւնը խղճի մտօք կատարած չըլլալուն համար: Եթէ խօսելու քաջութիւնը չունիք, գոնէ Ս. Օգոստինոսի մօրը, Մոնիգայի, օրինակին հետեւեցէք: Խեղճ Մոնիգա. հակառակ իր մատուցած աղօթքներուն, հակառակ իր թափած արցունքներուն՝ Օգոստինոս չար, անառակ, արբեցող և շնացող երիտասարդ մը եղած էր: Բայց վերջապէս հնարքով մը զայն փրկեց: Պարտէզին մէջ անոր քնացած մէկ պահուն Աւետարան մը տարաւ և դաղտուկ անոր գլխուն քովիկը զետե-

ղեց: Երբ Օգոստինոս արթնցաւ, առաջին բանը զոր տեսաւ՝ այդ Աւետարանն էր: Առանց կասկածելու զայն բացաւ, և նախախնամաբար սա առդերն էին որ իր աչքին զարկին: « Իբրև ի տուրնջեան... չըջեցուք պարկեշտութեամբ, մի անառակութեամբք և արբեցութեամբք, և մի խառն անկողնովք և պղծութեամբք... և մարմնոյ խնամ մի տանիք ի ցանկութիւնս: » Ս, յս տողերը այն աստիճան իր ուշադրութիւնը գրաւեցին որ շարունակեց կարդալ, ուսումնասիրեց ամբողջ գիրքը, և արդիւնքը այն եղաւ որ եկեղեցին ունեցաւ Ս. Օգոստինոս մը, հայրապետաց ամենէն պերճախօս քարողիչը, Գրիստոնէութեան մեծագոյն աստուածաբանը, և եկեղեցական պատմութեան էն վայրուն աստղը: Հայրեր, մայրեր, եթէ ուրիշ միջոց չէք կրնար գործածել ձեր դեռահաս զաւակներուն համար, գոնէ անոնց ձեռքը սպրդեցուցէք այնպիսի գիրք մը որ անոր փրկութեանը պատճառ պիտի ըլլայ:

Հասկնալու համար թէ « Վտանգ »-ը որ աստիճան մեծ է այս երկրին մէջ, հետեւեալ փողոցի տեսարանին ախանատես ըլլանք:



Բ.

### Փ Ո Ղ Ո Ց Ի Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ր

Առակաց Գլ. Ե.

Օրը տարածամ է : Գիշերուան մութը արդէն տիրած է : Սակայն խանութներուն ելեկտրական լամբարները և քաղաքապետութեան օդային կազի լապտերները առատ բայց տժգոյն լոյս մը կը սփռեն Էզպէքիէի գլխաւոր պողոտաներուն և հրապարակներուն վրայ :

Ահա երիտասարդ մը կու գայ փողոցին միւս անկիւնէն : Մաքուր հագուած շիք պատանի մըն է : Զգեստը նորաձեւութեան տիպար է : Օձիքը բարձր, փողկապը բաց կանաչ, և կօշիկները փայլուն կաշիէ շինուած են : Յայտնի է թէ պտոյտի ելած է : Մինչ կը շրջագայի, իր աչքերը շուրջ կ'ածէ փողոցի անցուդարձը դիտելու : Շարժումները դանդաղ են և քայլերը՝ անհաստատ :

Երբ Գաֆէ Էժիրսիէնի առջեւէն կ'անցնէր և աչքերը պատուհանէն ներս յառած նուագածու աղջկանց խումբը կը դիտէր, միւս կողմէն յանկարծ մեղմ ու հմայիչ ձայն մը իր ուշադրութիւնը գրաւեց : Կնոջ մը ձայնն էր ան, այնպիսի յուզիչ եղանակով մը թրթռուն որ երիտասարդին ուրտին թելերը շարժման մէջ դրաւ : Անմիջապէս ձայնին եկած կողմը դառնալով՝ սալայա-

տակին վրայ աղջիկ մը տեսաւ, դէմքին վրայ հրաւիրող ժպետով մը, իր դիմացը կայնած : Մէկ ձեռքովը փողբիկ պայուսակ մը, իսկ միւսովը՝ շքեղագետտին քղանցքը վեր բռնած, ինքզինքին գօքէթիչ դերք մը տուած էր :

Ո՛վ էր այս կինը և ի՞նչ կ'ուզէր իրմէ : Անոր կերպարանքը ու հանդերձը կը մատնէին զինքը : Տունէն դուրս ելած էր անդգոյշ և անփորձ թըռչուններ որսալու : Նենգաւոր և անսիրտ արարած մըն էր : Անամօթ և լիբր կեցուածք մը ունէր : « Աղաղակող և անդգամ էր : » Միշտ կը ցանկար անբանին որ արգիլուած է : Ընտանեկան խաղաղ կեանքը անտանելի էր անոր համար : « Անոր ոտքերն անոր տան մէջ չէր կենար : » Հրապարակի յարափոփոխ տեսարաններէն աւելի կ'ախորժէր և միայն անոնցմով կրնար իր խռովեալ միտքը հանդարտեցնել : Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները, և ամէն անկեան քով դարանամուտ կ'ըլլար :

Ո՛րչափ տարբեր է այն դերէն զոր ստանձնելու համար կինը ստեղծուեցաւ : Ան կանացի բնաւորութիւնը որ եթէ լաւ մշակուած ըլլար՝ պիտի դարդարէր քաղցրաբոյր ընտանեկան յարկ մը, որ նուիրական սիրոյ անսպառելի աղբիւր մը պիտի հոսեցնէր, յանձին այս կնոջ բոլորովին աղարտած ու խանդարուած էր : Կիրքերը թունաւորուած, մարմինը ախտացած, կորովը սպառած, սիրտը կարծրացած՝ հակապատկեր մը կը կազմէ ճշմարիտ

կնոջ : Ինչ որ ունի իբր հրապոյր՝ կեղծ է : Փոշոցներուն ստուերաւոր կողմէն կը քալէ և մթին անկիւնները կը փնտռէ , որպէս զի լապտերներուն ըյսը անոր երեսին տգեղութիւնը և աչքերուն խորամանկ շարժումները երեւան չըբէ : Շպարին ու պճնապաճոյճ հաղուստին տակ պառաւ կնիկ մը , լիտի վհուկ մը կայ պահուած : Բայց այն ժամանակաւոր բոցէն զոր ցօփ խորհուրդներ և դրամ շահերու ակնկալութիւնը կը բռնկեցնեն , անոր աչքերը , իրենց բնական փիճակին մէջ , աղօտ են և նսեմ : Ձայնը , որ կը մնջէ աղաւնոյ մը պէս և կը ծփայ առուակի մը կոհակներուն նման , յուսահատութեան հեծեծանք մը կը խեղդէ : Որեւէ խորատես մէկը պիտի կրնար գուշակել այս փայլուն դիմակին տակ սքողուած տգեղութիւնը :

Բայց մեր անփորձ երիտասարդը իր առջև միայն գեղեցիկ աղջիկ մը կը տեսնէ , որ իրեն հետ խօսերու բարեմտութիւնը կ'ունենայ : Ի՞նչ ալ սիրուն դէմք մը ունի : Արդեօք ի՞նչ կ'ուզէ : Կրնայ իրեն ընկերանալ քիչ մը տեղ :

Հազիւ թէ քայլ մը առած էր անոր հետ , մէկէն մտքը կը բացուի , անմիջապէս կը հասկնայ թէ ո՛վ էր իր ընկերը : Առաջին զգացումը կ'ըլլայ քայլերը արագցնելով անկէ հեռանալ , ականջները գոցելով փախչիլ : Բայց յետոյ կը խորհի , « Ի՞նչ հարկ կայ շիտթելու , յուզուելու , զինքը պիտի չուտէ ես : » Մանաւանդ որ ինքը կը ճանչնայ իր անձը : Բնաւ իյնալու վախ չունի : Յաղ-

թուիլ այդ կնիկէն : Ամենեւին : Ոչ միայն հաճոյք կ'զգայ , այլ նաև քաջութիւն կը սեպէ այդ դիրքին մէջ գտնուիլ առանց սայթաքելու : Կը փափաքի իր արիութեան փորձը տալ փորձութեան դիմադրելով , փորձիչը ինք փորձելով :

Ի՞նչ անուն տանք այս երիտասարդին : Ապաքէն ի՞նչ անուն պիտի տայինք ան յիմարին որ կը կարծէ թէ կրնայ մատուրներուն ծայրերէն կախուիլ անդունդի մը եզերքէն՝ առանց վար իյնալու , կամ վառած ածուխ մը բռնել՝ առանց իր ձեռքը այրելու : Սողոմոն զայն « սակասամիտ պատանի » կը կոչէ : Ուրիշ մը որ նուազ յանձնապատան էր , վտանգին այսչափ մօտենալու չպիտի յանդգնէր : Բայց ինքը խնդրոյն վրայ տարբեր դաղափար ունի : Մենք որ հեռուէն կը դիտենք այս տեսարանը , կը տեսնենք թէ անիկա իր անձին վրայ ունեցած բոլոր սնտոի համարումներովը հանդերձ , փորձութեան ճիրաններուն մէջ , փոթորկալից ծովուն վրայ խաղալիկ դարձած նաւակի մը կը նմանի : Անոր կեցուածքէն , շարժումներէն և նայուածքէն արդէն կրնանք հետեւցնել այս ընդհարումին ելքը :

Կինը քաջալերութիւն կը գտնէ : Աւելի կը մօտենայ : Գլուխէն մինչև ոտքերը ակնարկ մը կը նետէ . երեսը լաւ մը կը զննէ տեսնելու համար թէ գրպանը դրամ կ'ա՞յ : Որովհետև չուզեր զուր աշխատանք թափել քսակը դատարկ մարդու մը համար : Բռնազրօսիկ ժպիտով մը վեր կը նայի , և խօսակցութիւնը կ'սկսի :

Կնոջ աչքերը վարժ են գտնելու մէն մի անհատի տկար կողմը : Փաղաքչական խօսքերով կը ջանայ հաւտացնել այս ունայնասէր երիտասարդին թէ զինքը չափազանց կը սիրէ , և թէ կը հիանայ անոր գեղեցկութեան ու առնական երեւոյթին վրայ : Առաջին տեսութեամբ իսկ անոր սիրահարած է եղեր : Ո՛հ , զարմանալի զուգադիպութիւն . ճիշդ այդ օրինակ երիտասարդ մըն էր զոր կ'երեւակայէր , և ահա հիմա բաղդը կը ժպտի իրեն : « Անոր համար ելայ քեզ գիմաւորել , քու երեսդ փնտռել , և գտայ քեզ : » Շաղակրատութիւնները և համոզական խօսքերը հեղեղի նման կը յորդեն անոր բերնէն : Իրական բառերով կը պատկերացնէ հաճելի ժամերը որ միատեղ պիտի անցունեն , ըմպելիներուն մի քանի տեսակները զորս պիտի վայելեն : « Եկուր մինչև առաւօտ սիրով զուարճանանք , և ցանկութիւններով զբօսնունք : » Կը նկարագրէ իր հանգստաւէտ սենեակը , որուն օդը տոգորուն է անուշահոտ իւղերով , պատերը գեղազարդուած են թովիչ պատկերներով և յատակը գոցուած է պատուական գորգերով : Հասպ հեշտալի և գրգասուն անկողինը . . . « Անկողինս ծածկոցներով զարդարած եմ » Եգիպտոսի ծաղկանկար բեհեզով . անկողնոյս վրայ զմուռս , հալուէ և կինամոն ցանած եմ : » Ո՛հ , սրչափ դատարկ և փցուն կը թուին այս փաստերը անոր որ զանոնք հանդարտ մտքով քննելու կարողութիւնը ունի : Իր գանկին մէջ կուտ մը խելամտութիւն

ունեցող մարդը պիտի չհանդուրժէր այս խօսքերուն , և խրոխտ արհամարհանքով և բողաչունչ զայրոյթով պիտի պատասխանէր և բաժնուէր անկէ : Բայց այս մեղկ երիտասարդը , որ այնչափ վստահութիւն ունենալ կը թուէր իր անձին վրայ , կը զիջանի առանց ամենատկար ճիգի մը իսկ : « Իր շատախօսութեամբը հրապուրեց ու շրթանց շողքորթութեամբը ստիպեց զանիկա : »

Եւ հիմա դիտէ զայն որ « յիտակ կնոջը ետեւէն » կ'երթայ դէպի կործանում . . .

Վաղեմի իմաստունն հանգիտութիւն մը կը գտնէ այս երիտասարդին և « սպանդանոց գացող արջաւին » միջև : Ո՛րչափ սրտաշարժ է տեսնել ոչխարը որ անգիտակցաբար մտրթուելու կ'երթայ : Խեղճ անասունը կը պատրեն կեր ցոյց տալով : Ան չգիտեր թէ իր առջեւը ծուղակ կայ լարուած : Բայլ մըն ալ , և ահա իր կենաց ճգնաժամը կը հասնի , մահացու հարուածը կ'իջնէ որ զինքը դիտապաստ յերկիր պիտի տապալէ :

Բայց , աւանդ , սպանդանոց գացողը այս անգամ արջաւ մը չէ , այլ ընկեր արարած մը , մարդկային էակ մը , դեռատի կեանք մը , որ իր մէջ կը պարունակէ անհուն կարելիութիւններ : Երիտասարդը կ'առաջնորդուի բողանոց ինչպէս ոչխարը սպանդանոց : Սպանդագործը կը ժպտի յաղթական , հանդիսականք կը հասկնան ու կ'ափսոսան , բայց ինքը չիմանար , չհասկնար . բոլորովին անզգայացած է : Կը քալէ առանց վարա-

ներու, դիւթուած, մագնիսացած շողորթ լեզուի մը ազդեցութենէն : Կը խորհի միայն այն ժամանակաւոր հաճոյքին վրայ որ իրեն կը խոստացուի : « Պատժուելու գացող կապուած յիմարի պէս, կ'երթայ . . . » Որով գութը չչարժեր այս տեսարանը : Անարդ մահուան մը համար չստեղծուեցաւ այս պատանին : Անոր հոգեկան ու մտաւորական աղնիւ կարողութիւնները այս դժոխային վայրին մէջ ոչնչանալու համար չէր որ իրեն շնորհուեցան :

Դուռը կը գոցուի անոնց ետեւէն . վարագոյրը կ'իջնայ : Երկու գիրգ բայց հուժկու բազուկներ անոր պարանոցին շուրջը կը փաթթուին և կը քաշեն զինքը վար, վար, վար : Ակնախտիդ տեսիլներ անոր աչքերը կը շլացնեն, յուզեալ զգացմանց մառախուղին մէջ խիղճը կը բթանայ, իմացակա՞նութիւնը կ'աղօտանայ, և հոգին կը մթագնի : Ամբողջը հաղիւ վայրկեան մը կը տեւէ . . . և ահա կը բռնուի սոսկալի յուսախարութենէ մը որ ցովութեան կը հետեւի անվրէպ : Դատարկութիւն մը, խղճի խայթ մը, ամօթի զգացում մը, ստորանացումի անտանելի դիտակցութիւն մը միայն կը մնայ իրեն : Նողկանք և զզուանք, մանաւանդ, երբ առաւօտեան ըյսը կը ծագի և մերկապարանոց ցոյց կու տայ այն գարշելի իրերը որոնք այնչափ հրապուրեր էին զինքը նախընթաց երեկոյ : Ի՞նչ մեռելատիպ և կապարագոյն են այտերն որ այն-

չափ գեղեցիկ և սիրուն կը թուէին իր գերագրգռուած երեւակայութեան : Դեռատի և թարմ դէմքով երեւցող աղջկան տեղ՝ պառաւ կին մը կը տեսնէ իր դիմացը, որուն երեսը ներկով ու փոշիով գոցուած է՝ մորթին կնճիռները ծածկելու համար : Ամէն կողմ անկանոնութիւն, աղտոտութիւն և դարչահոտութիւն կը տիրէ : Ո՞ր են այն գեղարուեստական նկարները : Անոնց տեղ ստորին թերթերէ կարուած հասարակ պատկերներ կախուած են պատէն : Շնորհքով կարասի մը չկայ սենեակին մէջ, ոչ ալ վրան նստելու համար հաստատուն աթոռ մը : Հոգւոյն վրայ ճնշող թշուառութիւն մը կ'զգայ, մահուան երկիւղ և սարսափ մը կը պատէ զինքը : « Նեաղ մինչև անոր լեարդը կը ծակէ : »

Ելեմ, փախչեմ, կ'ըսէ իւրովի, այս զզուելի տունէն, և անգամ մըն ալ ուզքս անոր սեմէն ներս չզնեմ : Բայց, աւանդ, բողոքողին ճամբան զառիվայր է եւ սահուն : Հոն իր ուզքը դնողը այլ եւս ետ չկրնար քաշել . պիտի շարունակէ յաճախել մինչև որ օգնութեան ձեռք մը կարկառի և փրկէ զինքը : Ծուղակը ինկած թուշունի մը պէս է . իր թեւերը կը զարնէ վանդակին կողմերուն և ընդունայն կը փորձէ դուրս ելլել : Վաղուան արեւը մարը չմտած նորէն պիտի բռնուի այն ախրող կիրքէն : Անդիմադրելի մղում մը կրկին պիտի բերէ զինքը այս կորստական դռներէն ներս : Այս անգամ զմայլման յափշտակութիւնը չունի, ըլլայ

իրական, ըլլայ երեւակայական, այլ մարմաջ մը, տանջող իղձ մը որ յագեանալ չգիտեր, կը խթանէ զինքը դէպի յառաջ: Անուշահոտ իւղերուն բուրմունքը և գինիներուն ճաշակը կը յափրացնեն զինքը. բայց տարբերութիւն չընէր, պիտի վերադառնայ: Որովհետև «անոր գացողները բնաւ չեն դառնար, և կենաց ճամբաներուն չեն հասնիր:»

Յայնժամ կ'իմանայ թէ առաջին քայլը զոր առաւ՝ մահուան քայլն էր: Երբ թակարդը մտաւ, բաղդը որոշուեցաւ: Տունն որ այնչափ դրաւիչ կը թուէր, թագուն ճամբայ մըն էր Տարաարոսը տանող: Ննջասեռեակը որ այնչափ բերկրապատար զուարճութիւններ կը խոստանար, խոտորնակ շաւղով մը գերեզման կը տանի: «Անոր տունը դժուար ճամբան է, անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն:»

Քանիներ կան այսօր, այս երկրին մէջ և ուրիշ երկիրներու մէջ, որ ամէն կերպ յորդորներու դէմ ականջնին խցած՝ «մահուան շաւղին» մէջ կը քալեն: Քանիներ կան որ անաւ չեն ուղեր իմաստութեան ձայնին որ դարերու մէջէն արձագանդ տալով կ'ղգուչացնէ մարդիկ չխոտորիլ անոր ճամբաներուն մէջ: Գիտեմ ոմանք որ փորձառուներու խրատներուն արհամարհանքով կը պատասխանեն, ըսելով թէ անոնք անցուցած են իրենց ժամանակը, կորսնցուցած են իրենց երիտասարդական կորովը, վայելած են կեանքի հաճոյքները և հիմա... «մանր կը ջարդեն:» Ո՛հ, կրնայ

այդպէս ըլլալ: Բայց ո՞վ է այն իմաստուն երիտասարդը որ դիտէ օգտուիլ այլոց դառն փորձառութենէն, փոխանակ ինքը անձամբ ըմպելու անոր մահացու պարունակութիւնը: Թերեւս Սոզոմոնի խօսքերը իրենց ազդուութիւնը չեն կորսնցուցած, թէև անոնց վրայէն երեք հազար տարիներ անցած են, անոր համար որ անիկա կը խօսի ուղղակի իր սրտէն, զգացած, դիտցած ու տեսած բաներուն վրայ:

Ոմանք ալ չափազանց յանձնապաստան են: Կը կարծեն թէ կրնան փորձութեան հետ զուարճանալ առանց յաղթուելու և ուստի անկէ չեն հրաժարիր: Կամ միջոյնը ձեռք առած են անոր աղետաբեր արդիւնքներէն զերծ մնալու: Սակայն անոնք շուտ պիտի հասկնան թէ ոչ միայն իրենց պէս անփորձները, այլ մինչև իսկ Յուդայի պէս նահապետներ, Սամիսոնի պէս կտրիճներ, Դաւիթի պէս հզօր թագաւորներ անոր զոհ գացած են: «Անիկա շատերը խոցոտեց և կործանեց, և անոր բոլոր սպաննած մարդիկը զօրաւոր էին:» Դուն ո՞վ ես որ պիտի կրնաս դիմադրել:

Գասակարգ մըն ալ կայ որ առողջապահական օրէնքներու վրայ հիմնուելով կը պահանջէ այս սոսկալի մոլութեան գործադրութիւնը: Բարեկամներու խրատներուն բժիշկներու հրամաններովը կը պատասխանէ: Արդեօք իրաւ է այս: Կա՞ն բժիշկներ որ յանուն գիտութեան և առողջապահութեան կը հրամայեն երիտասարդներուն շնութիւն

ընել: Հաւատանք թէ ժուժկարութեամբ ապրող երիտասարդները վատաւող կ'ըլլան: Կեղծ բժշկութիւն, կեղծ գիտութիւն: Ընդհակառակը կարելի է երեւակայել թէ մարդ մը տարիներով բողանոցներու ախտաժէտ ճախիններուն մէջ ապրելէն յետոյ կրնայ պրծիլ ապահով, առանց այդ տեղերուն յատուկ ախտէ մը վարակուած ըլլալու:

Ուրեմն, փախէք, երիտասարդներ, փախէք օտար կնոջմէն, առաջին վայրկեանին իսկ՝ երբ անոր հանդիպիք: «Մի մօտենար, մի դպչիւր, համը մի առներ» է ապահովագոյն կանոնը: Դաս առէք փորձառուներու խրատէն, սորվեցէք անոնց սայթաքումներէն շրջահայեաց, զգուշաւոր և արթուն մնալ և շարունակ յիշել թէ, թէև «օտար կնոջ շրթունքէն խորսխի մեղր կը կաթի, և անոր քիմքը կակուղ է քան զիւղ, բայց անոր վախճանը օշինդրի պէս դառն, և երկսայրի սրոյ պէս սրած է»:



Գ.

**Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք Ա Ջ Ո Ւ Յ Ի Ի Ն**

Ճիղիքական քաջութիւնը գնահատելի յատկութիւն մըն է: Ամէն մարդու հիացումը կը գրաւէ հուժկու բազուկներով յաղթանդամ և Հերքիւլէան մարմնով ըմբշամարտը: Ամէն մարդու սքանչացումին առարկայ կ'ըլլայ հերոսը որ վտանգի մէջ անվեհեր և մահուան հանդէպ աներկիւղ է:

Ճիղիքական քաջութիւնը երկու տեսակ է: Առաջինը տգիտութենէ յառաջ կուգայ: Մարդ մը որ վտանգին գիտակցութիւնը չունի՝ կը կորսնցնէ իր արիութեան արժէքը: Ստոյիկեան անտարբերութիւնը, ճակատագրի կոյր հպատակութիւն ըլլալով, զուրկ է կարեւորութենէ: Բարբարոս Սուտանցիին, իր մերկ նիզակովը, Անգղիացուց առաջահարուածեան թնդանօթին վրայ յարցուց արագահարուածեան թնդանօթին վրայ յարձակումը, առանց դիտնալու անկէ նետուած ուռմբին աւերիչ ազդեցութիւնը, հիացումի տեղ արգահատանք կը շարժէ:

Իսկ ուրիշ տեսակ մը քաջութիւն կայ որ գիտակցութեան վրայ հաստատուած է: Գիտնալով վտանգին մեծութիւնը՝ երբ մարդ անկէ խոյս չտար և ի պահանջել հարկին զայն կը դիմադրաւէ, ճշմարիտ արիութիւն ցոյց կու տայ: Անգամ մը Նաբոլէոնի ըսուեցաւ թէ իր սպաններէն մին, երբ



վտանգաւոր դիրք մը գրաւելու համար հրաման ստացաւ, դոյնը նետեց և դողալ սկսաւ: « Ի՞նչ ըրաւ, » հարցուց Նաբոլէոն, « սրուած հրամանը կատարե՞ց »: « Այո, » պատասխանեցին, « ամենայն ճշգրութեամբ »: « Ուրեմն, » յայտարարեց մեծ ռազմագէտը, « անիկա բանակիս ամենէն արիասիրտ զինուորն է, որովհետև տեսնելով հանդերձ վտանգը՝ անկէ երեսչդարձներ, երբ պարտականութեան ձայնը կը կանչէ: » Նմանապէս քաջն Վարդան անվեհեր էր Աւարայրի դաշտին վրայ, քանզի հասկնալով Պարսից բանակին թուոյ ստուար առաւելութիւնը և իր դիրքին դժնդակ կացութիւնը, կրօնքի և ազգին հանդէս իր ստանձնած պարտականութիւնը կատարելու չվարանեցաւ:

Սակայն կայ մի երրորդ տեսակ քաջութիւն, որ ասկէ ալ վեհ է: Ասիկա բարոյական քաջութիւն կոչուածն է որ կը գերազանցէ ֆիզիքականը այնպէս ինչպէս հոգին գերազանց է մարմինէն: Առաջինը և երկրորդը մարդուս մարմնաւոր կազմուածքին կը պատկանին, իսկ երրորդը՝ հոգւոյն: Մին գիտէ տոկալ ցաւերու, տառապիլ և մեռնիլ արիաբար. իսկ միւսը գիտէ ապրիլ հաւատարմաբար: Մինչ մարդ կը կարօտի ֆիզիքական քաջութեան վտանգաւոր պարագաներու տակ, բարոյական քաջութիւն պէտք է շացուցիչ փորձութիւններէ չյաղթուելու և հոգին անաղարտ պահելու համար:

Հայերէն քաջասիրտ բառը կը ցուցնէ թէ այս առաքինութիւնը սրտին հետ կապ ունի: Քա-

ջասիրտ ըլլալ՝ ուրիշ բառերով առողջ և զօրաւոր սիրտ մը ունենալ կը նշանակէ: Առողջ սիրտ մը ունենալ՝ ճշմարիտ, ուղիղ և բարի սիրտ մը ունենալ կը նշանակէ: Սիրտ մը որ չարութեամբ չէ թունաւորուած, մոլութեամբ չէ ապականած, անգըթութեամբ չէ կարծրացած և մեղքով չէ ակստացած: Սիրտ մը՝ որ համերաշխաբար գիտէ գործել մաքուր խղճի, պայծառ մտքի և անյողողոգեկամքի մը հետ: Սիրտ մը՝ որ յետս չընկղկիր դժուար պարտականութեանց առջև, չընկճիր ծանր պատասխանատուութեանց տակ և կը դիմագրաւէ դժնեայ ճակատագիրը: Քաջասիրտ ըլլալ, ուրեմն, կը նշանակէ, բառին ճշգրտագոյն իմաստովը, կենցաղավարութեան մէջ ուղիղ, ճշմարիտ և կորովի ըլլալ: Խօսիլ ինչ որ ճշմարտութեամբ է, դործել ինչ որ արդարութեամբ է և ապրիլ պարկեշտութեամբ և մաքրութեամբ: Ծառանալ փորձող տեսարաններու առջև, մերժել մեղսալից ընկերակցութիւնները, տեղի չտալ վատառողջ թելադրութեանց, չերկնչիլ ծաղրանքէ՝ սկզբունքի համար, չամաչել բարոյականութեան և մաքրութեան կողմնակից ըլլալէ՝ չար միջավայրի և չըջակայքի մը մէջ, վերջապէս ժայռի մը պէս անսասան և անպարտելի մնալ ընդհանուր անբարոյական հոսանքի մը առջև: Ասոնք են այն մի քանի հանգամանքները, որոնցմէ քաջասրտութիւնը կը բաղկանայ և որոնց գործագրութիւնը աւելի արիութիւն կը պահանջէ քան որևէ խիղախի արարք:

Բարոյական քաջութիւնն իրական և տեւական ըլլալու համար համոզման վրայ հաստատուած ըլլալու է : Կրօնքի , բարոյականութեան , անաղարա կենցաղի , առաքինութեան վրայ գաղափար չունեցող անձ մը անոնց համար չկրնար մարտիլ , փորձութեան չկրնար դիմադրել , չար ընկերներու չկրնար ընդդիմանալ : Էտիսըն կ'ըսէ . « Ֆիզիքական քաջութիւնը յաճախ կը լքանէ զմարդ երբ անոր ամենէն աւելի կարօտութիւն կայ . իսկ այն քաջութիւնը որ համոզման վրայ հաստատուած է՝ շարունակաբար անոր հետ կը մնայ : » Ասոր իբր օրինակ կրնանք առնել Իսրայելացի երեք պատանիներուն ընթացքը Բարեւրնի թագաւորին առջև : « Քեզի յայանի ըլլայ , ով թագաւոր , որ մենք քու աստուածներդ չենք պաշտեր , և քու կանդնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չենք ըներ : » Եւ ինչո՞ւ : Որովհետև համոզուած էին թէ Աստուածային հրամանը գերազանց է որևէ մարդկային կամ արքայական հրամանէ : Թող բռնապետը զայրանայ , թող հակառակորդները խայտան , թող փողերը հնչեն և խուժանը աղաղակէ , թող կրակի հնոցը բորբոքի , իրենք պիտի չհետեւին բազմութեան ձայնին , պիտի չխոնարհին ոսկի արձանին առջև , պիտի դիմադրեն մեղացու փորձութեան մինչև ի մահ : Ի՞նչ էր այս յամառ ընդդիմութեան գաղտնիքը : Համոզումը թէ մեզք էր , անբարոյութիւն էր , նուաստացում էր երկրպագութիւն ընել մարդու մը՝ իբրև Աստու-

ծոյ : Եւ ուստի նեղութեան և չարչարանքի որևէ սաստկութիւն կարող չեղաւ զանոնք տապալել :

Իարձեալ , բարոյական քաջութիւնը անպատճառ զօրաւոր և առողջ մարմին մը չպահանջեր հրաշալիքներ գործելու համար : Չար մարդիկ առհասարակ ֆիզիքապէս աւելի տոկուն կ'ըլլան : Խստասիրտ ոճրագործը թէև տանջանքներէ չվախնար , այսու ամենայնիւ վատ մըն է : Անիկա կրնայ թշնամոյն հարուածներուն կուրծք տալ , կամ օրէնքին տրամադրած պատիժները աներկիւղ կրել . բայց բարոյական պայքարի մը մէջ թուլասիրտ է : Մինչ միւս կողմէ կրնայ ըլլալ որ ֆիզիքապէս տկար և երկչոտ անձ մը , որ արիւնահոս վէրք մը տեսնելով կը նուաղի , ունենայ բարոյական այնպիսի կորով մը որ անկարելի կ'ընէ շեղեցնել զինքը արդարութեան , ուղղութեան և առաքինութեան շաւղէն : Եդեսիոյ մեծ կոտորածին ժամանակ ժողովուրդը , մեծ մասամբ կին և տղայ , Մայր Եկեղեցի հաւաքուած էր : Խուժանը քաղաքին ամէն կողմը աւերումներ գործելէն յետոյ եկեղեցին պաշարելով կրակի տուաւ զայն : Ոճրագործներէն մին վերնաստունը կ'ելլէ հոն խմբուած կիներէն և աղջիկներէն գեղեցիկները աղատելու : Կը տեսնէ գեղանի կին մը որ իր երկու մանուկ զաւակներովը վախէն ու սարսափէն անկիւն մը կ'ծկուած էր : Շիտակ անոր կ'երթայ և կ'առաջարկէ իր հետ դուրս ելլել այս կրակի հնոցէն . Կինը կ'ընդդիմանայ : Մարդը համոզելու կը ջանայ : Բայց երբ կը տեսնէ

Թէ խօսքերը օգուտ չեն ընել, և որովհետև միտքը դրած էր անպատճառ զայն իրեն կին ընել, անոր թեւէն բռնելով դէպի սանդուխները կը բաշէ : Կինը կը տեսնէ որ այլ եւս ազատում չկայ, համաձայնիլ կը կեղծէ և իբրև թէ կը պատրաստուի իրեն հետ գալ, յանկարծ, ակնթարթի մը մէջ, իր երկու սրտի հատորները բաղկաց մէջ սեղմած՝ կը նետուի վար եկեղեցւոյն յատակը, լափող բոցերուն մէջ, և իր հաւատարմութիւնը կը կնքէ իր մահուամբը : Այս կինը պարզ հերոսուհի մը չէ . աւելի է : Տկար, անզօր, փափկակենցաղ մարմնով, անսպարտելի, արի, անվեհեր հոգւով մարտիրոսուհի մըն է որ իր կեանքը, և իր երկու զաւակներուն կեանքը, զոհեց՝ իր պատուոյն, ամուսնոյն, ազգին և Աստուծոյ հաւատարիմ մնալու համար : Արդարև Հոմերոսի դիւցազանց սրխրագործութիւնները կը նսեմանան այսօրինակ բարոյական քաջագործութեանց հանդէպ, երբ մարդ մահը նախապատիւ կը սեպէ անպատիւ և ամօթալի կեանքէ մը :

Թերեւս երիտասարդները աւելի լաւ պիտի կրնան հասկնալ Յովսէփ Գեղեցիկին ընթացքը և զգածուիլ անոր ցոյց տուած հաւատարմութենէն : Իր տէրոջ Պետափրէսի կինը իրեն կը սիրահարի : Կրկին և կրկին կ'առաջարկէ իր հետը ըլլալ : Ա՛լ ի՞նչ կ'ուզէ երիտասարդ մը ասկէ աւելի : Կարելի՞ է այդպիսի փորձութեան մը դիմադրել : Կինը ինքը կը փափաքի, կը խնդրէ, կը պաղատի : Ո՞վ պիտի

իմանայ, ի՞նչ զնաս ունի : Յանցանքը իրը չէ : Ո՞ր երիտասարդը պիտի կրնայ մերժել կնոջ այսօրինակ մէկ առաջարկը, նոյն պարագաներուն տակ : Կրնայ լեռան կողէն փրթած ժայռի կտորը կէս ճամբան յանկարծ կանգ առնել : Յովսէփ արժանաւորապէս պատմութեան մէջ համբաւ ստացած է, ոչ թէ որովհետև Հին Կտակարանի նահապետներէն մին է, ոչ թէ որովհետև զերութեան վիճակէ մը մինչև եգիպտոսի գահը բարձրացած է, այլ ասոնցմէ խիստ գեր ի վեր ըլլալով՝ որովհետև կրցած է իբրև երիտասարդ՝ փորձութեանց մեծագունին յաղթել : Կարդա անոր խօսքերը : « Ահա իմ տէրս տանը մէջ ինչ որ կայ չգիտեր . և իր բոլոր ունեցածը իմ ձեռքս յանձնեց . այս տանը մէջ ինձմէ մեծը չկայ . ու բան մը ինձմէ չարգիլեց՝ քեզմէ ի զատ, քանզի դուն անոր կնիկն ես, ուրեմն ես ի՞նչպէս այս մեծ չարութիւնը ընեմ, ու Աստուծոյ դէմ մեղանչեմ : » Ահա երկաթեայ կամք մը, ահա հաւատարմութեան անմահ կոթող մը, ահա սկզբունքի խորարմատ վէ՛մ մը, զոր որևէ փոթորիկ, արտաքին թէ ներքին, սարսերու կարող չէ :

Երիտասարդներ, ի միտ առէք այս խօսքերը, խորհեցէք, որոճացէք անոնց վրայ : Կրնա՞ք դուր ալ՝ Յովսէփի պարագային մէջ գտնուելով՝ խրոխտ, անթեքելի, անտեղիտալի գիրը մը բռնել : Զրպարտուելու երկիւղին հակառակ, յաշտօն, օրապահիկ կորսնցներու սպառնալիքին ի հեճուկս,


նախապատիւ կը համարի՞ք տառապիլ, նեղուիլ, տանջուիլ, բանտարկուիլ և մինչև իսկ սովամահ լինիլ քան թէ անհաւատարիմ ըլլալ ձեր տէրոջ:

Երբեմն ալ փորձութիւնը դուրսէն չգար, ներսէն կը բղխի: Ասոր ալ ուշադրութիւն դարձնել պէտք է: Անձի դէմ քաջութիւնը էն դժուարն է: Ոմանց համար դուրսէն եկած չար թելադրութիւնները անտեսել դիւրին է. բայց սրտին յոռի հակամիտութեանց դիմադրելու անզօր են: Ան որ իր անձին կը յաղթէ՝ մեծագոյն յաղթանակը կը տանի, ըսուած է: Ճիշդ է այս խօսքը: Անձը միշտ մեր հետն է, անկէ կարող չենք փախչիլ: Լեռները առանձին ասլորդ ճգնաւորը իսկ, թէև փախած է ընկերութեան յատուկ փորձութիւններէն, բայց մարմնաւոր կրից յարձակումներէն ազատ չէ:

Ինչ որ կը պակսի ձեզի այսօր, և ինչ որ կը կարօտիք ամէն բանէ աւելի այս երկրին մէջ, բարոյական քաջութիւնն է: Զեղմէ շատերը կը ճանչնամ որ քաջ էք և աներկիւղ վտանգի մէջ: Վերջին տարիներու մեր երկրին արհաւիրացի կացութիւնը, կոտորածներու ահուսարսափը, ձեզ վտանգի վարժեցուցած է: Երբ դեռ աղայ էիք, ձեր ծնողաց և սիրելիներու խողխողուելուն ականատես եղաք և անոնց թափած պատուական արիւնը ձեր սիրտը ամրացուց: Կրնաք հիմա թշնամոյն առաջ ելլել անվեհեր և, եթէ հարկ ըլլայ, Ազգին ու Հայրենիքին համար զոհուիլ: Բայց արդեօք ու-

նի՞ք նոյն աստիճան արիութիւն երբ բարոյական թշնամոյն դէմ յանդիման կը գտնուիք: Բարի տրամադրութիւնները, վեհ որոշումները, թուօցիկ բառերը բանի տեղ չեն գար՝ երբ անոնց ետեւը զօրաւոր նկարագիր մը չկայ իբր նեցուկ: Անգղիացիք կ'ըսեն Ողնայար չունեցող մարդը խխունջի նման կակուղ և դիւրաթեք է: Այսպիսի մէկուն չկրնար մարդ վստահիլ. ծովուն ալեաց պէս յեղյեղուկ է ան: Կ'որոջէ այլեւս չէյնալ, չյաղթուիլ. բայց, երբ փողոց կ'ելլէ, առաջին փորձիչը զայն յերկիր կը տապալէ:

Առէք, ուրեմն, ձեր վրայ բարոյական քաջութեան սպառազինութիւնը, որով պիտի կարող ըլլաք, փորձութեան ժամանակ, «մարել չարին ամէն կրակոտ նետերը», դէմ դնել ընկերներու յոռի թելադրութեանց, և կառավարել ձեր սեռական բնութեան պահանջները: Որովհետև պատերազմը «արեան և մարմնոյ» հետ չէ, այլ ներքին և արտաքին բարոյական թշնամիներու հետ:



Դ.

### ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

### ԱՆՈՐ ԶԱՐԱԶԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Մարդ սեռական բնութեամբ օժտուած է շատ իմաստուն և բարերար նպատակի մը համար : Ինչ որ է քաղցի զգացումը անհատին՝ նոյն է սեռական վաճառքը ցեղին : Անհատին ֆիզիքական պահպանման համար բնութիւնը պարզեւած է անոր անօթութեան և ծարաւի զգացումները, որոնցմով անիկա կ'իմանայ իր մարմնոյն կարօտութիւնները, և զանոնք լեցնելու միջոցները կը հայթայթէ : Նոյնպէս մարդկային ցեղը տեւական ըլլալու համար, Արարիչը օժտած է զայն այս խորհրդաւոր յատկութեամբ, որուն միջոցաւ անիկա կը շարունակէ գոյութիւն ունենալ աշխարհի վրայ սերունդէ սերունդ :

Այս կարգադրութեան իմաստութիւնը մանաւանդ այն ատեն կը տեսնենք երբ զայն աւելի մօտէն կը քննենք : Սեռական բնութիւնը տարբեր է անօթութեան և ծարաւի զգացումներէն, անով որ մինչ մարդ կարող չէ ապրիլ առանց ուտելու և խմելու՝ կրնայ երկար կեանք ունենալ զանց

ընելով իր սեռական բնութեան պահանջները : Բայց այս զանցառութիւնը չափազանցութեան չտարուելու համար՝ անոր պահանջմանց կատարումը զուգորդուած է հեշտ և եղական հաճոյքներու հետ, որոնք արդարեւ մեծ բաժին ունեցած են մարդկութեան պահպանման գործին մէջ : Եթէ սեռական բնութեան պահանջները յագեցնել լոկ պարտականութիւն ըլլար՝ առանց յարակից հաճոյական զգացումներուն, յայտնի է թէ աշխարհ իր արդի բազմամարդութիւնը պիտի չունենար : Ո՛ր չգիտեր թէ, եթէ կարելի ըլլար ապրիլ առանց ուտելու և խմելու, շատեր պիտի զանց ընէին զայն : Սակայն թէև կարելի է ապրիլ առանց մեր սեռական պահանջներուն գոհացում տալու, մարդ իր ամենականութիւն հասակին մէջ իսկ բնադրմամբ գիտէ անկէ յառաջ եկած հաճոյքը :

Այսպէս կը տեսնենք թէ մարդուն սեռական բնութիւնը մասնաւոր նպատակի մը համար տրուած է : Սակայն վտանգը այն է որ անփորձ երիտասարդներ, ոչ թէ անոր նպատակին իրագործմանը համար, այլ միայն անկէ յառաջ եկած հաճոյքներէն հրապուրուած՝ չարաչար կը գործածեն զայն : Ուստի յետագայ մի քանի իրողութիւնները անոնց ուշադրութեան կը ներկայացնենք, և կը յուսանք թէ կարգաւրով այս տողերը պիտի աշխատին զգուշանալ իրենց կրկն չարաչար գործածութենէն :

Սեռական բնութիւնը չարաչար կրնայ գոր-

ծածուիլ երկու կերպով. Գիշութեամբ և շնութեամբ : Առաջինը պատանիներու յատուկ է, իսկ երկրորդը՝ աւելի մեծերու : Երկու կերպն ալ կործանարար է : Գիշութիւնը կը ցամբեցնէ կենաց աղբիւրը, կը մաշեցնէ մարմինը և ջղային դրութեան մէջ աւերում կը գործէ : Յաճախ կը հանդիպինք պատանիներու որոնք մէկէն ի մէկ կը կորսնցնեն իրենց կորովը, կ'ըլլան դունատ, նիհար և անզօր : Կ'ըսենք, Հոգ չէ, կ'անցնի . ամէն պատանի կը պատահի այդ : Բայց կարծեմ հոգ է : Իմաստուն ծնողքը, երէց եղբայրը, կամ խնամակալը պէտք չէ որ զանց ընեն այս նշանները : Երեսին վրայ դուրս եկած բիծերը որոշապէս կը յայտարարեն անոր ներքին կացութիւնը : Զգուշութեամբ, փափկութեամբ, սիրով խօսեցէք անոր : Մի վախնաք սորվեցնելէ անոր՝ կենաց դաղտնիքները : Եթէ դուք չսորվեցնէք, անիկա ուրիշ մը և թերեւս շատ անյարմար անձէ մը պիտի սորվի : Կեղծ համեստութիւնը մէկդի նետեցէք և ուղղեցէք անոր քայլերը առողջ շաւղի մը մէջ :

Կենաց միջօրէականը հաղիւ անցած քանի՛ քանիներ յանկարծ ջղային անկում կ'ունենան : Ոմանք զայն գործերու շատութեան կը վերագրեն, ուրիշներ՝ մտատանջութեան, և այլք՝ կլիմայի փոփոխութեան : Ասոնք կրնան արդարեւ բանաւոր պատճառներ ըլլալ, բայց չկան արդեօք մեր յիշողութեան խորերը պահուած այնպիսի գործեր և արարքներ որոնցմով, եթէ հաւատարիմ գտնուէինք

մեր անձին, պիտի կարենայինք բացատրել ներկայ ջղային տկարութեան բուն պատճառը : Ուստի թող զգուշանան պատանիները, թող սորվին օգտուիլ մեծերուն փորձառութենէն, թող անսան անոնց խրատներուն և պաշտպանեն իրենց անձերը գիշութեան սոսկալի հետեւանքներէն :

Թերեւս կարծուէր թէ չափահասները աւելի խոհեմ կը գտնուին այս մասին : Անոնցմէ կ'ակնկալուէր որ իրենց զարգացած մտքովը և տարիներու փորձառութեամբը աւելի պատրաստ վիճակի մը մէջ գտնուին սեռական կիրքերը զսպելու : Բայց ամէն անոնք որ մօտէն ծանօթ են մեր արդի երիտասարդութեան բարոյական վիճակին, պիտի վկայեն թէ իրողութիւնը այս ակնկալութենէն շատ հեռու է : Արդարեւ անոնք գիշութեան գէշ սովորութենէն աստիճան մը ազատ են, բայց քանիներ կան որ կրնան Աստուծոյ առջև խոստովանիլ թէ անպարտ են սեռական մոլութենէ : Անգամ մը Փարիսեցիները շնութեան մէջ բռնուած կին մը բերին Յիսուսի որ տեսնեն թէ ինչ պիտի ըսէ : Նա, գիտնալով անոնց կեղծաւորութիւնը, ըսաւ . « Զենէ անմեղը նախ թող նետէ քար ատոր վրայ : » Այս որ լսեցին, « ծերերէն սկսեալ մինչև յետինները, մի ըստ միովէ դուրս ելան : » Կարծեմ թէ նոյն բանը պիտի պատահէր այսօր մեր հասարակութեան մէջ, եթէ նոյն փորձաքարը մեր առջեւ դրուէր : Ո՛հ, այն աստիճան ապականած ենք : Վատահամբաւ տուններ այ-

ցելելը խիստ հասարակ բան մը եղած է : Երիտա-  
 սարդները արձակ համարձակ կը խօսին անոր  
 վրայ : Իրարու կը պատմեն պարծանքով և երբեմն  
 այն աստիճան կ'ստորնանան որ զիրար կ'առաջ-  
 նորդեն : Ամուսնացեալներ իսկ զերծ չեն այս մո-  
 լութենէն : Հազուադիւտ են այն այրերը որ իրենց  
 ոտքը բողանոցի մը սեմէն ներս դրած չունին : Ամ-  
 բողջ միջավայրը կարծես այս տարափոխիկ ախտէն  
 վարակուած է : Անգամ մը պարկեշտ սեպուած  
 կին մը չէր կրնար հաւատ ընծայել այն խօսքին  
 թէ այսինչ երիտասարդը մաքուր կեանք մը կ'ապրի :  
 « Կարելի՞ բան է , » ըսաւ , « որ Եգիպտոսի մէջ  
 գտնուի այր մը որ ապօրինի յարաբերութեան մէջ  
 չգտնուի : » Կը լսէք , երիտասարդներ , թէ ինչ  
 համարում ունի իգական սեռը ձեր վրայ : Ձեր  
 հայրենի երկրին մէջ այսպէս չէիք , հիմա ինչ  
 եղաւ ձեզի : Թէև տեղույս բարոյական մթնոլորտը  
 վատառողջ է , բայց այդչափ չո՞ւտ պիտի իյնայիք  
 անոր աղդեցութեանը տակ : Ո՞ր մնաց ձեր նկա-  
 րագրի կորույթ , Բրիտանոնէական եռանդը , երի-  
 տասարդական խանդը : Ինչո՞ւ կը վատնէք ձեր  
 դրամը այն բանին համար որ գոհացում չտալէ  
 զատ աւելի կը գրգռէ ձեր կիրքերը : Ինչո՞ւ գի-  
 տակցաբար ձեր անձին աւերումը կը գործէք :  
 Այո , գիտէք անոր վտանգները : Այդ փայլուն  
 շպարին տակ ինչ զաղրելի ախտեր պահուած ըլ-  
 լալը ձեզի անձանօթ չէ : Ի՞նչ , կը պարծենան այդ  
 գիտութեանդ համար : Կը կարծես թէ որովհետև

գիտես՝ կրնաս քու անձդ պաշտպանել վարա-  
 կումէ : Արդեւիչ միջոցներ ձեռք առած ես : Խեղճ  
 տղայ , ատիկա քեզի ասպար ըլլալու փոխան՝ որո-  
 գայթ պիտի ըլլայ : Անոր կըթնած՝ աւելի դիւրաւ  
 զո՞հ պիտի երթաս : Բարեկամ , լաւ խորհէ : Խորհէ  
 ան ատեն երբ հանդարտ է միտքդ և խաղաղ է  
 հոգիդ : Գերագրգռուած շիզերով տրամաբանու-  
 թիւն չես կրնար ընել : Առանց պախուցի ձի հեծ-  
 նողը ուշ կամ կանուխ պիտի իյնայ : Անխուսափելի  
 վախճանը շարունակ մտքիդ առջև թող ըլլայ :  
 Սկիզբի քաղցրութիւնը չէ՛ այլ վերջի դառնութիւնը  
 միշտ յիշէ : Ամէն անգամ որ փորձուիս , այդ վերջը  
 միտքդ բեր :

Սեռական բնութեան չարաչար գործածու-  
 թիւնը կարգ մը աղէտներու դուռ կը բանայ :  
 Նախ , կ'եղծակէ մարմինը եւ զայն սուկաչի  
 ախտերու բոյն մը կ'ընէ :

Մարդ այնպէս յօրինուած է որ անոր իւրա-  
 քանչիւր անգամին վնասուելովը միւսները կը տու-  
 ժեն : Եթէ աչքը վնասուի , ամբողջ մարմինը մթու-  
 թեան կը մատնուի : Ստամոքսին հիւանդութիւնը  
 կը խանգարէ միւս անդամներուն հաւասարակը-  
 ռութիւնը : Սրտի անկանոն բարախումով մարմնոյն  
 ներդաշնակութիւնը կը կորսուի : Բայց թերեւս  
 աւելի սերտիւ կապուած է մեր սեռական բնու-  
 թիւնը ամբողջ մարմնոյն հետ : Դժուար չէ նայիլ  
 երիտասարդի մը դէմքին վրայ և գուշակել թէ

անիկա ինչպիսի կեանք մը կ'ապրի : Մեծ սխալ մը կը գործեն երիտասարդները՝ կարծելով թէ ծածուկ տեղեր գործած իրենց մեղքերը մարդ չգիտեր : Անոնց հետքերը որոշ կերպով դրուած են ճակատին ու դէմքին վրայ և կարող են զանոնք տեսնել ամէն անոնք որ տեսնելու աչք ունին :

Կը տեսնեն սա երիտասարդը : Հայրենիքէն դեռ նոր եկած է : Կայտառ է դէմքը . թարմ են այտերը , լայն են ուսերը և հաստ են բազուկները : Հաստատուն քայլերով և փայլուն ակնկալութիւններով գործի ասպարէզը կ'իջնէ : Կ'զգայ իր մէջ առոյգ կեանքի եռուղեւը , վհատութիւնն ինչ է՝ չգիտեր : Եթէ մէկ դիմումը մերժուի , ուրիշ մը կ'ընէ : Ապագան իրեն համար շողշողուն խոստումներով առլի է : Իր յաջողութեանը համար վախ չունի , բնաւ չյուսահատիր :

Կ'անցնին տարիներ , կ'ընտելանայ երկրին կլիմային և սովորութիւններուն , և կը տեսնէ թէ այս նոր միջավայրը բոլորովին տարբեր է հայրենիքին մէջ եղածէն : Նոր ընկերներ և բարեկամներ կը շահի : Անոնց կեանքը կը տեսնէ : Կը հարցնէ իւրովի . « Պէ՞տք է յարմարիլ միջավայրին . պէ՞տք է հետեւիլ իր ընկերներուն շաղին . պէ՞տք է ընել ինչ որ ուրիշներ կ'ընեն : » Նախ իր խորհուրդները կ'ընդվզին այս բաներուն դէմ : Ծնողաց բարերար աղդեցութիւնը դեռ չէ անհետացած , ընտանեկան յարկի սուրբ տպաւորութիւնները դեռ չեն եղծուած : Այսու ամե-

նայնիւ մտային պայքար մը կ'սկսի և ժամանակ մը կը շարունակէ : Մէկ կողմէն ձայն մը , ներքին ձայն մը , իրեն միայն լսելի ձայն մը , հայրենի օրհնեալ մթնոլորտէն արձագանգող ձայն մը , իրեն կ'ըսէ հանդարտ բայց ազդու շեշտերով , Ո՛՞ջ : Միւս կողմէն փորձութեան ասեղ հոսանքը անընդհատ զինքը կը հարուածէ և տապալել կ'սպառնայ : Ի զուր օգնութիւն կը փնտռէ : Իր ընկերները փոխանակ նեցուկ ըլլալու , իր խղճահարութիւնները ծաղու առարկայ կ'ընեն : Հայհոյութիւններով , անպատկառ խօսակցութիւններով այդ ներքին ձայնը խեղդել կ'աշխատին , մինչև որ ան տակաւ առ տակաւ բոլորովին անլսելի կ'ըլլայ : Օր մըն ալ , սեւ օր մը , իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով , « դժոխոց ճամբան » ձեռք կ'առնէ : Աւանդ , ինկաւ երիտասարդը : Բարի սիրտ մը ապականեցաւ , աղնիւ հոգի մը կորսուեցաւ :

Մի քանի տարիներ եւս կ'անցնին : Դարձեալ կը հանդիպինք այդ երիտասարդին : Կը զարմանանք անոր երեւոյթին վրայ : Ձեռք կրնար հաւատալ թէ այն նոյն անձն է : Ո՛րչափ փոխուած է : Այտերը կորանցուցած են իրենց թարմութիւնը , աչքերը փոսը ինկած են , ուսերը կարծես զիրար ընդգրկելու ճիգ մը կ'ընեն : Դողդօջ քայլերով , կմախք դարձած մարմնով , անգործ կը շրջի : « Ա՛խ սա հազս չդադրեցաւ որ գործի սկսէի , » Իրամ ալ չունի խեղճը : Կ'ողորմին իրեն բարեգործական ընկերութիւնները : Ծանօթներէ փոխ կ'առնէ : Կը



յուսայ թէ օր մը պիտի առողջանայ և վերագարձնէ իրեն տրուած նպաստները : Կեանքին կը կառչի այնպէս՝ ինչպէս երբէք չէր կառչած : Յոյսը չքանիր : Միշտ կը նայի դէպ ապագան յորում կը յուսայ մեծ գործեր ընել : Աւանդ, զինքը դիտողներ տարբեր գաղափար ունին : Օր մըն ալ կ'իմանանք թէ մարած է ճրագը, հատած է շունչը, անհետացած է կենդանեաց աշխարհէն դեռատի կեանք մը : Կ'երթանք, զինքը սեւ հողին կը յանձնենք, և գլուխնիս երերցնելով անոր յուղարկաւորութենէն կը դառնանք և ճամբան իրարու կը հարցնենք . « Աղբար, ո՞ւրկէ առաւ այս խեղճ տղան այս սոսկալի ախար : Ո՞ւրկէ առաւ : Գնա, հարցուր անոր ընկերներուն : Թող պատմեն քեզի թէ ի՞նչ էր որ այդ քաջ երիտասարդը դերեղման իջեցույ :

Երիտասարդներ, մի խարուիք : Բնութիւնը սոսկալի վրիժառու մըն է : Երբ չարաչար գործածէք անոր ձեզի պարգեւած կարողութիւնները, անոնք փոխանակ ձեզի օրհնութիւն բերելով՝ ձեր կործանման պատճառ կ'ըլլան : Սեռական բնադդը մեզի տրուած ազնիւ յատկութիւններէն մին է : Անոր բարւոք գործածութիւնը մարմնաւոր անոյշ հաճոյքներու հետ՝ մեծ բարիքներ կ'արտադրէ : Ես անոնցմէ չեմ որ, զայն մեղապից նկատելով, անոր պահանջները բոլորովին անտեսել կը քարոզեն : Ասիկա միջին դարու կարգ մը անհեթեթ վարդապետութիւններէն է : Ներքինները զուրկ

են առնականութենէ : Արարիչը օժտած է ամէն առողջ մարմին՝ առողջ սեռական զգացումներով : Եթէ գործածենք զայն պատշաճօրէն, անիկա պիտի նպաստէ մեր առողջութեան, մեր անդամներուն մէջ ներդաշնակութիւն յառաջ պիտի բերէ և մանաւանդ ապահովէ մեր ցեղին պահպանումը : Ընդհակառակն անոր չարաչար գործածութիւնը, յախուռն կերպով և չափազանց դրդուումով, կը տկարացնէ մարմինը, կը ջլատէ շրջերը և կերպ կերպ ախտերու և հիւանդութիւններու պատճառ կ'ըլլայ :

Դարձեալ, սեռական բնութեան շարաչար գործածութիւնը կը բթացնէ միտքը եւ կ'ապականէ հոգին :

Մարդ լիկ նիւթէ կաղմուած չէ : Անիկա ունի միտք և հոգի : Սեռական բնութիւնը սերտ առնչութիւն ունի մարմին և հոգեոյն հետ : Մարդակազմութիւնը անժխտելի փաստերով կ'ապացուցանէ այս իրողութիւնը և մեր փորձառութիւնը կը հաստատէ զայն : Միտքը ի բնէ պայծառ է և հոգին՝ անաղարտ : Որչափ ժամանակ որ սեռական բնութիւնը դեռ չէ արթնցած, մտաւորական և հոգեկան կարողութիւնները գործելու ազատ ասպարէզ կը գտնեն : Անոնք կը յառաջդիմեն անարգել ըզեզին և ամբողջ մարմնոյն զարգացմանը համընթաց : Բայց երբ առաջին անգամ անոր զարթնումին նշանները երեւիլ կ'սկսին, անոնց գործունէութեան մէջ խանգարում մը կը նշմարուի :

Միտքը կը կորսնցնէ իր կանոնաւորութիւնը և իմացականութեան աչքերը կ'աղօտանան : Ամէն փորձառու ուսուցիչ գիտէ թէ տղայոց ուսանողութեան ընթացքին մէջ կու գայ շրջան մը, երբ մտքին յարաճուն զարգացումը զարտուղութեան կը հանդիպի : Ասիկա անցք մըն է, ուրիշ պիտի անցնին բոլոր պատանիները իրենց այսինչ տարիքին մէջ : Ինչպէս որ երկրիս շարժումին պատճառաւ աստղերու զարտուղութիւն տեղի կ'ունենայ, և մենք չենք կրնար տեսնել զանոնք իրենց իսկական դիրքին մէջ, նոյնպէս երբ առաջին անգամ պատանիին մարմնոյն մէջ սեռական բնութիւնը շարժիլ կ'սկսի, անոր մտաց լոյսին ճառագայթները կը բեկբեկին և իրերը տարբեր դոյնով և դիրքով կը ցուցնեն : Եթէ այդ պատանին բաղդաւոր գտնուի, ու իր բնական կազմութեան բերմամբ կամ զօրաւոր կամքի մը գործածութեամբ զսպէ, կառավարէ և ուղղէ այդ ներքին շարժումը, փրկուած է, և նորէն պիտի շարունակէ իր յառաջխաղացումը :

Հոս է որ խորատես ուսուցիչը և խոհեմ ծնողքը մեծ դեր մը ունին կատարելու : Անոնց վրայ պարտք մը կը ծանրանայ յարմար առիթով և պատշաճ եղանակով տղուն միտքը լուսաբանելու, այս խանգարումին պատճառները յայտնելու, անբնական գրգռումներէ զգուշացնելու, գիշտութեան աղետալի հետեւութիւնները բացատրելու, վերջապէս զայն ղեկավարելու և ուղիղ ճամբու մէջ դնելու :

Երիտասարդները երբեմն դանդատ կ'ընեն իրենց մտքի բթութեանը համար : Անոնք կ'ըսեն, « երբ տղայ էինք մեր միտքը աւելի սուր էր : » Այո, այնպէս է : Յաճախ տղայ մը որ դպրոցին առաջնակարգ ուսանողներէն մին էր, ունէր զօրաւոր յիշողութիւն, կրնար սորվիլ ինչ որ դասատուն իր առջև կը դնէր, հիմա կարծես բոլորովին ապուշցած է : Բան մը չկրնար պահել իր միտքը, նոր լեզու մը, ուսմունք մը չկրնար սորվիլ : Ի՞նչ է պատճառը : Ուրիշ բան չէ, այլ սեռական բնութեան չարաչար գործածութիւնը : Կը ճանչնամ երիտասարդ մը, որ անձնապղծութեան զոհ գնաց : Այն աստիճան դերի եղած էր գիշտութեան որ ամուսնանալէն վերջ իսկ, չկարենալով դոհացում տալ իր աղաւաղեալ կիւրքերուն, կը շարունակէր գործածել իր ձեռքը, մինչև որ լուսնոտութեան ակտէն բռնուեցաւ և օր մըն ալ ինքզինք սանդուխներէն վար նետելով անձնասպան եղաւ : Անկարելի է պայծառ միտք և առողջ հոգի ունենալ առանց կարենալ զսպելու սեռական կիրքերը :

Վերջապէս սեռական բնութեան չարաչար գործածութիւնը այնպիսի հետքեր կը թողու մարմնոյն, մտքին եւ հոգւոյն վրայ՝ որոնք անցնելի են եւ ժառանգական :

Բնութեան մէջ չկայ շարժում մը որ շփում յառաջ չբերէ : Ոչ միայն կարծր նիւթերը, այլ

նաև կազային մարմինները և մինչև իսկ այդ եթեր-  
կոչուած անիմանալի գոյութիւնը, իրենց շարժման  
վիճակին մէջ, շփում կ'արտադրեն: Եւ շփումը  
հետքեր կը թողու: Լեռնէն վար խուժող փրփրա-  
դէզ հեղեղը անոր կողերուն վրայ ախոսներ կը  
փորէ: Ծովուն կատաղի ալիքները ապառաժուտ  
հրուանդանները անգամ կը մաշեցնեն: Մըրիկը իր  
անցած տեղին վրայ հազարաւոր վիաներ կը կանգնէ:  
Նոյնպէս ալ սեռական անսանձ կիրքը, ո՛ր անձի  
վրայէն որ անցնի, աւերներ կը գործէ անոր  
վրայ, իբր տխուր կոթողներով ցուցնելու համար իր  
ընթացքը: Աշխարհի պատմութիւնը առ լի է այս  
զսպարատեսիլ արձաններով: Անոր էջերուն վրայ,  
ամենէն աւելի աչքի զարնող բանը, սեռական  
կրից այն արարքներն են զորս ժամանակը չէ կրցած  
անհետացնել: Այս երկնաստուր պարգեւին յուրի  
գործածութիւնը՝ մարդուն ստեղծագործութեան  
առաջին օրերէն իսկ՝ արեան և արտասուքի լիճեր  
գոյացուցած է: Ոչ միայն հին դարերու կուսապաշտ  
ժողովուրդները, և ներկայ ժամանակներու բար-  
բարոս ցեղերը և անուս ազգերը անոր դառնու-  
թիւնը ճաշակած են, այլ նաև քաղաքակիրթ և  
զարգացեալ կոչուած արգի ընկերութիւնը անոր  
հետքերէն զերծ չէ: Ո՛հ, այդ «զարգացում»  
կոչուած փայլուն գիմակին տակ ինչ աղտեր կան  
պահուած: Քօղին միայն մէկ ծայրը վեր առնել  
կը բաւէ տեսնելու համար մոլութեան արտադրած  
վէրքերը, բորստութեան ճերմակ կեղեւը:

Մարդիկ, սակայն, հակամէտ են ուրանալու  
այս իրողութիւնը: Անոնք կ'աշխատին անգիտանալ  
այս չարիքին գոյութիւնը: Բայց ուրացումը, ան-  
գիտանալը, չարիքը չբառնար: Մարդ կրնայ ուրա-  
նալ անոր բարոյական իմաստը: Կրնայ մոլի կեան-  
քի մը՝ Բրիտանոնէական տեսակէտով Աստուծոյ դէմ  
մեղք ըլլալը ծաղրել և «ծթռած», «նախապա-  
շարեալ» վարդապետութիւն անուանել զայն. բայց  
երբ վերացականէն իրականին կ'իջնանք, երբ ան-  
տեսանելիէն տեսանելի և շոշափելի մակարդակի  
մը կ'անցնինք և հոս՝ մարդկային մարմնոյն վրայ՝  
կարգ մը խորունկ ախոսներ կը նշմարենք, զորս մեղք  
ըսուած բանը պեղած է, կը շփոթինք և, Ադամի  
նման, «թզենիլի տերեւներ» առնելով զսնոնք  
ծածկել կը ջանանք: Ընկերութիւնը ըստ բաւա-  
կանին խորատես չէ մեղքին գոյութեան համոզ-  
ուելու, բայց անոր հետքերը չտեսնել չկրնար:

Եւ արդէն այդ հետքերը բառնալու համար  
գործածուած միջոցները անուղղակի ապացոյցներ  
են թէ մարդկութիւնը ակամայ կ'ընդունի անոր  
գոյութիւնը և դարման մը հայթայթել կ'աշ-  
խատի: Հիւանդանոց, յիմարանոց և բանա ուրիշ  
բաներ չեն, այլ հաստատութիւններ՝ ուր կը պա-  
տըսպարուին մեղքին յառաջ բերած աւերումները,  
մոլութեան արտադրած արգասիքները և անբա-  
րոյականութեան տխուր հետքերը: Ասոնք վիաներ  
են թէ մարդիկ թէև կրնան ուրանալ պատճառ-  
ները, բայց չեն կրնար ուրանալ արդիւնքները:

Այս ալ Աստուծմէ է: Ինչպէս որ ցաւը մեզի ցոյց կու տայ թէ մեր մարմնոյն տյսինչ տեղը խանդարուած է և հոգատարութեան կը կարօտի, նոյնպէս ալ անբարոյական կեանքի մը թողած արատները Աստուծոյ կողմէ տրուած ազդարարութիւններ են, իմացունելու համար մեզի մեր մարմնաւոր, հոգեւոր և մտաւոր կեանքին խանդարումը:

Բայց, աւանդ, մարդկութիւնը դեռ չէ սորված այն մեծ դասը թէ հիւանդութեան մը արգելումը բուժումէն դիւրին է: Ո՞րը աւելի հեշտ է. ցուրտէն անձը պաշտպանելը թէ ցրտառութենէն վերջ զայն բժշկելը: Այսպէս է նաև բարոյական հիւանդութիւնը: Փոխանակ զայն արգիլելու՝ կ'ըստպասենք մինչև որ անիկա աւերումներ գործէ մեր անձին մէջ, և ան ատեն կ'սկսինք անոր հետքերը բառնալու աշխատիլ: Եթէ բանտի, հիւանդանոցի և յիմարանոցի համար ծախսուած դրամը և տրուած աշխատութիւնը գործածուէր այնպիսի հաստատութիւններու համար, ուր երիտասարդները կարենային սորվիլ բարոյագիտութեան և առողջապահութեան դասերը, ուր կարենային վարժուիլ զսպելու իրենց կիրքերը և դաստիարակուիլ ոչ միայն մտաւորապէս, այլ նաև հոգեւորապէս, ըլլալու առաքինի, բարեպաշտ և աստուածամկախ անհատներ, ան ատեն պիտի արգիլուէր միջութեան յարակից ախտերու և հիւանդութիւններու բաւական մեծ մաս մը:

Բայց մարդիկ ս'ըշափ ալ աշխատին, ինչ մի-

ջոցներ ալ հնարին, մոլի կեանքի մը արատները չեն կրնար անհետացնել: Նայէ սա պարոնին: Յայտնի է թէ տարիքը դեռ շատ չէ, բայց մազերը արդէն ճերմկիլ սկսած են: Անոր դէմքին վրայ որոշ կերպով կը տեսնես ցոփ և շուայտ անցեալի մը տխուր հետքերը: Անցեալը անցած է. բայց անոր ախտաժէտ հետքերը անջնջելի կերպով խարանուած են իր ճակտին վրայ: Կար ժամանակ մը երբ անոր հանդերձը մաքուր էր ու ճերմակ: Կը յիշէ այն սիրելի ձայնը որ իր ականջին խօսեցաւ, երբ առաջին անգամ իր հօրը տունէն դուրս կ'ելէր օտար երկնքի տակ իր բաղդը որոնել: « Զաւակս, անձդ անարատ պահէ աշխարհէն: » Ո՞հ, կը յիշէ նաև այն սև բիծը որ առաջինն էր իր ճերմակ հանդերձին վրայ: Կարելի չէ մոռնալ զայն: Դեռ կ'այրի ան իր հոգւոյն վրայ: Երիտասարդութեան առաջին մեղքը բնաւ չմոռցուիր: Յետոյ եկաւ ուրիշ մը: Երրորդ մը անոր վրայ բարդուեցաւ, և այսպէս շարունակեց մինչև որ ամբողջ հանդերձը ցեխին մէջ թաթխուեցաւ: Հիմա այլևս նոր բիծեր չես կրնար տեսնել, որովհետև ամբողջ հոգին ազարտած է: Վերջապէս Աստուծոյ շնորհքովը դարձի եկաւ, նոր կեանք մը սկսաւ և թողուց իր առջի ընթացքը: Անկեղծ ապաշխարութեան ներքին դիտակցութիւնը վերցուցած է իր հոգւոյն վրայէն մեղաց դատապարտութեան զգացումը, բայց բան մը կայ որ յիշեցնար իր անձին վրայէն — ՄԵՂԱՅ ԱՐԱՏՆԵՐԸ:

Տեսա՞ծ էք ծաղկախոտէ բռնուած մարդ մը :  
 Հիւանդութիւնը կրնայ բուժուիլ, առողջութիւնը  
 կրնայ վերադառնալ, բայց այս ախտին ամէ-  
 նէն սոսկալի բանը սա է որ անջնջելի հետքեր  
 կը թողու իր ետեւ : Կը վնասէ իր զոհին կամ  
 լսողութեանը, կամ տեսողութեանը, և կամ անոր  
 դէմքը կը ծածկէ բշտիկներով որոնք ցկեանս կը  
 յայտարարեն անոր այդ ախտէն բռնուած ըլլալը :  
 Այսպէս է նաև ան անձը որ իր կեանքը վատնած  
 է անառակութեամբ : Ոչ միայն անոր մարմնոյն  
 գաղտնի մասերուն վրայ կը գտնուին մէկէ աւելի  
 ախտերու սպիւնները, եթէ երբեք այդ ախտերը  
 բուժուած ալ ըլլան, այլ նաև անոր երեսը, աչ-  
 քերը կը յայտարարեն թէ անիկա մոլի անցեալ  
 մը ունեցած է : Անոր յիշողութեանը պատկերա-  
 սրահին մէջ կախուած են կարգ մը նկարներ,  
 որոնցմէ չկրնար հեռացնել իր ներքին տեսութիւնը :  
 Անոնք հոն են և հոն պիտի մնան ցմահ : Տունը,  
 շուկան, փողոցը անոնք անբաժան ընկերներ են :  
 Ամէն անգամ որ ծանօթ տեղէ մը կ'անցնի, ծա-  
 նօթ անհատի մը կը հանդիպի, ուրուականներու  
 պէս անոնք իր առջեւը կը ցցուին և կը տանջեն  
 զինքը : Կան արարքներ մեր կեանքին մէջ որոնց  
 հետքերը, յիշատակը ջնջելու համար, զանոնք  
 իսպառ մեզմէ հեռացնելու համար, ի՞նչ պիտի  
 չտայինք :

Մեր սեռական ընօրէնական յարայար գործա-  
 ծուքեան աղէտալի արդիւնքներուն ամենասու-

կալի հանգանակներ սա է որ անոր թողած արաս-  
 ները մեր կեանքին հետ չեն վերջանար :

Իւրաքանչիւր անհատի ներկայ կեանքը առըն-  
 չութիւն ունի անոր անցեալին և ապագային հետ :  
 Մտլութեան արատները ժառանգական են : Զա-  
 նոնք մեր նախնիքներէն կրնանք ընդունած ըլլալ :  
 և վատահարար մեր զաւակներուն պիտի փոխան-  
 ցենք : Անոնք համաճարակ ախտի մը պէս տարա-  
 ծուելու ընդունակ են : Ուրիշ կեանքերու գործերը  
 և անոնց հետեւանքները մեր կեանքին մէջ տե-  
 սանելի են : Նոյնպէս մեր գործերը և անոնց ար-  
 դիւնքները ուրիշ կեանքերու մէջ երեւան կու գան :  
 Այս իմաստով ճշմարիտ է առածը թէ « Հայրերը  
 ազոխ կերան, ու որդւոցը ակռաները առին : »  
 Մեր կեանքերը պիտի կրկնուին մեր զաւակներուն  
 մէջ : Հօր մը մոլի և վաւաչոտ կեանքը պիտի յայտ-  
 նուի իր զաւակներուն խելագարութեամբը : Գինե-  
 մոլ ծնողները ապուշ և պակասամիտ սերունդով  
 մը պիտի պատժուին :

Ո՛հ, երանի թէ միայն գործողը կրէր իր գոր-  
 ծերուն արդիւնքները : Երանի թէ սահման մը  
 դրուէր այս ահուելի վարակման : Բայց, ոչ, բնու-  
 թիւնը տարբեր կերպով տնօրինած է, և անոր  
 օրէնքները անյեղլի են :

Ինչո՞ւ կը տառապին այս անմեղ մանուկները  
 իրենց աշխարհ եկած օրէն ի վեր : Տես սա երա-  
 խան : Իր մօրը որովայնէն իսկ հիւանդութիւններ  
 և ախտեր անոր մարմնոյն մէջ բոյն դրած են :

Դեղ, դարման, բժիշկ անօգուտ կը մնան : Օրն ի բուն կը ճշէ, կը ճուայ, կու լայ, և բոլոր շուրջը գտնուողներուն սիրտը կը ճմլէ : Երբեմն ալ կը դառնանք և զՍտուած կը դատապարտենք այսպիսի խեղճ արարած մը աշխարհ զրկած ըլլալուն համար : Ի՞նչ տգիտութիւն, ի՞նչ յանդգնութիւն : Գիտցիր, ով մարդ, որ դուն, կամ քու հայրդ, և կամ նախնիքներէդ մին պատասխանատու էք այս բոլոր թշուառութեանց : Ինչ որ կը տեսնես՝ բնական է, անխուսափելի արդիւնքը այն պատճառներուն որոնք գոյութիւն ունեցած են մանկան ծնողաց կեանքին մէջ : Ինչ որ սերմանած ես, ան է որ կը հնձես :

Եթէ այս է իրողութիւնը — և ոչ ոք կրնայ ուրանալ զայն — եթէ սեռական բնութեան չարաչար գործածութիւնը այսօրինակ սոսկալի արդիւնքներ ունի թէ մեր և թէ մեր զաւակներուն կեանքին մէջ, ուրեմն, հայրեր, խօսեցէք ձեր զաւակներուն, խօսեցէք անոնց առանց երկիւղի, առանց քօղի : Մի վախնաք անոնց պատմելէ ձեր անձնական փորձառութիւնը : Անոնց վտանգաւոր կացութիւնը թող ձեզ դօտեպնդէ : Եթէ նշմարէք այնպիսի հետքեր անոնց կեանքին մէջ որոնք ձեր գործերը կը մասնանշեն, ըսէք անոնց առանց վարանումի և զգուշացուցէք զանոնք նոյն յանցանքներէն :

Եւ դուք, ով երիտասարդներ, անսացէք ձեր մեծերուն : Անոնց փորձառութենէն օգտուեցէք :

Մի կարծէք թէ երիտասարդութեան ծաղիկները միշտ իրենց թարմութիւնը պիտի պահեն : Կորովը, ոյժը, աւիւնը որոնցմով օժտուած էք այժմ՝ պիտի լքանեն ձեզ : Օրեր պիտի գան որ պիտի զղձաք այն գործերուն համար զորս անխորհրդաբար կը կատարէիք : Մէն մի գործ իր արդիւնքը, մէն մի մղութիւն իր հետեւանքը, մէն մի մեղք իր հետքը, մէն մի չարիք իր արատը ունի որ պիտի դրոշմուի ձեր ճակտին վրայ աշխարհի մասնանիշ ընելու ձեր անցեալ կեանքը : Մի մռռնար իմաստունին խրատը . « Քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ, դեռ թշուառութեան օրերը չեկած, ու ան տարիները չհասած, որոնց մէջ պիտի ըսես թէ անոնց չեմ հաւնիր : »



է.

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամէն մարդ կը գնահատէ առաքինի և անաղարտ կեանքը : Ոչ ոք կրնայ ուրանալ անոր առաւելութիւնները անբարոյական և շուայտ կենցաղի մը վրայ : Ամէնէն ապականեալ անձը իսկ՝ թէև խոստովանելու պիտի դժկամակի, բայց իր սրտին մէջ կ'զգայ թէ անարատ կեանք մը ապրողը լաւագոյն և բարձրագոյն մակարդակի մը վրայ կը գտնուի քան թէ ան որուն ապրելակերպը ցօփ է և պագշոտ :

Սակայն ինչպէս որ բարի բան մը ձեռք ձգելու համար յաճախ զոհողութիւն ընել պէտք կ'ըլլայ, նոյնպէս առաքինի և պարկեշտ կեանք մը ապրելու համար բուն ճիգի և աշխատութեան կը կարօտի մարդ : Երիտասարդը որ օտտուած է առողջ և կորովի մարմնով մը, չկրնար խոյս տալ իր կրից և ցանկութեանց յարձակումներէն : Կատաղի և անզուսպ գազաններու պէս անոնք կը մռնչեն և գոհացում կը պահանջեն : Հօր կամք մը, անյողդողդ նկարագիր մը պէտք է զանոնք սահմանի մէջ պահելու համար : Ուր որ երիտասարդական ցանկութիւնները տկար և թոյլ են, դժուար չէ անոնց վրայ իշխել : Բայց

անոնք որ ի բնէ կրքոտ և տուփասէր են՝ տաժանելի և յարատև պայքարով միայն կրնան այդ ցանկութիւնները նուաճել :

Մեր միջավայրի բարոյական վիճակը և երիտասարդները դիւրաւ պաշարող փորձութիւնները նկատողութեան առնելով՝ յետագայ մի քանի թելադրութիւնները կը ներկայացնենք իբր միջոց և պայման այն երիտասարդներուն՝ որոնք անկեղծօրէն կը բաղձան իրենց ցանկութիւններուն յաղթել և անոնց վրայ տիրապետել :

Առաջին . Եթէ կ'ուզես երիտասարդական ցանկութիւններդ նուաճել՝ միտքդ մաքուր պահէ :

Մարմնաւոր կիրքերը մտքին հետ սերտիւ կապուած են և անոր հետ ուղղակի յարաբերութեան մէջ կը գտնուին : Անոնք մտքէն կ'ընդունին իրենց գործունէութեանը հրամանը : Մտքէն կը բղխին շնութիւն, գիշութիւն, սղծութիւն և բոլոր սեռական գրգռումները : Եթէ միտքը առլի է պիղծ ու ապականեալ խորհուրդներով, ցանկութիւնները կը յուզուին և կը բորբոքին : Ընդհակառակն եթէ բարի ու մաքուր են մտածումները, ցանկութիւններն ալ հանդարտ ու անխռով վիճակ մը կ'ստանան :

Անշուշտ յոռի խորհուրդները մտքին մէջ մուտ գտնելէն բոլորովին արգիլել կարելի չէ, միայն թէ անոնց գոյութիւնը զգալի եղածին պէս՝ զանոնք արտաքսելու ջանալու է : Յանցանքը չար ու ապականեալ խորհուրդներ ունենալուն մէջ չէ, այլ զանոնք կամաւ հիւրընկալելուն մէջ է : Որչափ ժա-

մանակ որ մարդ կ'ապրի և կը խորհի, միտքը ենթակայ է պիղծ խորհուրդներու։ Անոնք ախտի մանրէներու կը նմանին։ Բժիշկները կ'ըսեն թէ ախտի մանրէները կերակուրին և օդին միջոցաւ շարունակ մեր մարմնոյն մէջ կ'ընդունուին։ Բայց եթէ մեր կազմութիւնը առողջ է, ու որեւէ տկարութիւն չունինք, ասոնք մեզ վնաս չեն կրնար հասցնել, մեր կենսական ոյժերուն գերակշիռ զօրութեամբ կը չեղորացնենք անոնց վնասաբեր ազդեցութիւնը։ Եթէ առողջութեան չափանիշը ըստ բաւականին բարձր չըլլայ, ախտին մանրէները արգաւանդ հող կը գտնեն մեր թոքերուն և ստամոքսին մէջ, և մահացու արդիւնքներ յառաջ կը բերեն։

Նմանապէս ոչ ոք կրնայ խոյս տալ ակտաժէտ և ապականիչ խորհուրդներէ որոնք շարունակ մտքին կը թելադրուին մեր շուրջը գտնուած առարկաներէն, տեսարաններէն և անձերէն։ Բայց եթէ միտքը ի բնէ քաջառողջ է, եթէ մարդ հոգեկան տկարութիւններէ զերծ է, եթէ բարոյական սկզբանց հիմը խորունկ և լայն կերպով դրուած է, անոնք կը կորսնցնեն իրենց թունաւորիչ ազդեցութիւնը և մեր վրայէն կ'անցնին առանց վնասելու։ Պարսաւելի կէտը այն է որ յաճախ մենք կը հրաւիրենք և գուրգուրանքով կը պահենք զանոնք մեր մտքին մէջ, մինչև որ ուրիշներ ալ բարդուելով անոնց վրայ՝ ցանկութիւն կը գոյանայ, և « ցանկութիւնը յղանալով կը ծնանի մեղք, և մեղքը կատարուելով կը ծնանի մահ »։

Ուստի երբոր անբարոյական խորհուրդներու գոյութիւնը կ'ընդունուարես մտքիդ մէջ, անմիջապէս զանոնք արմատախիլ ընելու և անկէ հեռացնելու աշխատէ։ Պարապոյ ժամերուդ մէջ միտքդ օտտակար մտածումներով դրաղեցուր։ Որեւէ պարագայի տակ թող մի տար որ երեւակայութիւնդ իշխանութենէդ դուրս ելլէ։ Շինիչ և հրահանգիչ գիրք մը միշտ քեզի ընկեր ըրէ, որպէս զի առանձին գտնուած պահուդ կարգաս և ժամանակդ պարապ տեղը չվատնես։ Մինչև որ քնանալու պատրաստ չըլլաս՝ անկողին մի մտներ։ Առտունները արթնցածիդ պէս, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու, մահճակալէդ վար ցատկէ։ Վերջապէս խորհուրդներդ անընդհատ սանձահարէ, և տակաւ պիտի վարժուիս զանոնք քու ուղած ուղղութեանդ առաջնորդելու։

Երկրորդ. Անմաքուր գրկերու ընթերցանութեան զգուշացիր։ Անմաքուր գրքերը անմաքուր խորհուրդներ կը յարուցանեն, և անմաքուր խորհուրդները ցանկութիւնները կը գրգռեն։

Թէև մեր Հայ գրականութեան մէջ Զօլայական իրապաշտութիւն բուրոյ գիրքերը բազմաթիւ չեն, բայց վնասակար գրութիւններու և յօդուածներու թիւը համեմատաբար մեծ է։ Եգիպտոսի պէս անձուկ չըջանակի մը մէջ իսկ, վերջին մի քանի տարիներու միջոցին, հրապարակ նետուած ազտոտ անէքթոտներու հաւաքածոները, Հայ մտքին ու մամուլին պատիւ չեն բերեր։ Այս



օրինակ գիրք մը անգամ մը տասնեւութը տարեկան դեռատի աղջկան մը պայուսակին մէջ աչքիս զարկաւ, զոր գուրգուրանքով կը պահէր և անշուշտ հաճոյքով կը կարդար երբ առանձին կը գտնուէր։ Ի՞նչ է գրքի ընթերցանութեան նպատակը։ Մըտային զարգացում և պաշար ստանալ։ Բայց մտային ի՞նչ պաշար, ի՞նչ զարգացում կ'ընդունի երիտասարդ մը կարդալով այնպիսի պատմութիւններ որոնք կը նկարագրեն ընտանեկան կեանքի մութ կողմերը և կիրքերը գրգռելու արուեստակեալ միջոցներ կը սորվեցնեն։

Վէպի ընթերցանութեան հակառակ չեմ։ Անձամբ ասկէ շատ օգտուած եմ։ Բայց պէտք է խնամքով ընտրել վէպերը։ Կան պատմական վէպեր, որոնց ընթերցումը աւելի բան կը սորվեցնէ և դէպքերը մտքին վրայ աւելի խորին կերպով կը սպաւորէ քան որեւէ պատմական գիրքի կուռ գրուածքին և քրտոզութիւնը։ Սակայն երիտասարդները վէպ կը կարդան՝ սովորաբար անոր մէջ նկարագրուած յուզիչ դէպքերուն համար։ Հեղինակին այդ երեւակայական պատմութեան միջոցաւ սորվեցնել ուղած դասերը ի միտ առնել չեն աշխատիր։ Մանաւանդ կը սիրեն կարդալ սիրահարական վէպերը որոնք իրենց հեշտասիրական զգացումները կը գգուեն։ Տեսած եմ դպրոցական տղաք որոնք իրենց դասագրքերը մէկ կողմ նետած՝ ժամերով կ'ընկղմին վէպի մը մէջ, մինչև որ ամբողջ միտքը և երեւակայութիւնը հոն պատմուած

միջադէպերէն կը համակուին ու կը պարուրուին։ Զգայնական տարրը այնչափ ընդհանուր է վէպերուն մէջ որ Սիլվէյնըս Սթոլ ապահով կանոն մը կը նկատէ որեւէ երիտասարդի վէպ չկարդալ քսանեւհինգ տարեկան չեղած։ Անոնք նախ թող կարդան, կ'ըսէ, այնպիսի գիրքեր որ ճաշակի մշակութեան և նկարագրի զարգացման անհրաժեշտ եղած ծանօթութիւնները կը պարունակեն։ Եթէ մէկը իր մտքի կազմուած տարիները լուրջ հեղինակութիւններ կարդալու վարժութիւն ըրած չէ, և անոնց համար մասնաւոր ճաշակ մը ստացած չէ, բնաւ պիտի չկարդայ զանոնք վէպի ընթերցանութենէն յետոյ։ Որեւէ պարագայի տակ ի սպառ խոյս տալու է այն հեղինակներէն որոնք բարոյական բարձր մակարդակի մը վրայ գտնուելու համբաւը չունին։

Անոնց որ անկեղծօրէն կը փափաքին իրենց երիտասարդական ցանկութիւնները նուաճել և միջոցներու կը կարօտին, խորհուրդ կու տանք գտնել և կարդալ այն գիրքերը որ ուղղակի այս խնդրոյն վրայ կը ճառեն։ Մեր աղքատիկ գրականութեան մէջ իսկ կրնանք գտնել « Աշնան Տերեւներ»-ու և « Ասպար Կենաց »-ի նման պատուական գիրքեր, որոնք շատ մը երիտասարդներու ֆիզիքական և բարոյական փրկութեան պատճառ եղած են։ Նաև կը յանձնարարենք անոնց կարդալ Ս. Գիրքը։ Մանաւանդ Ս. Գրոց այն մասերը որ փորձութեան դիմադրելու միջոցները կը սորվեցնեն։

Յովսէփի, Սամիսոնի և Դաւիթի պատմութիւնները, անոնց փորձութիւնները, անկումները և ելքը պիտի գօտեպնդեն նոյն պարագաներուն տակ գտնուող անձերը : Սողոմոնի առակները, մանաւանդ « օտար կնոջ » նկատամբ անոր ըսածները, կ'արժէ որ մարդ գոց սորվի և « զանոնք սրտին տախտակին վրայ գրէ : » Ծերունազարդ Պօղոս առաքեալի առ երիտասարդ Տիմոթէոս գրած յորդորները, Մեծ Վարդապետին լեռան քարոզը և այլ առիթներով իր աշակերտներուն տուած հրահանգները մէյմէկ անդին դոհարներ են և ոչ ոք կրնայ անոնց ուսումնասիրութիւնը զանց ընել որ մաքրակենցաղ ապրելու իր ճիգերուն մէջ անկեղծ է :

Երրորդ . Խօսակցութեանը աչ մաքուր եղիւր :

Մի խաբուիք, չար ընկերակցութիւնները կ'ապականեն բարի վարքը : Մինչ չար խորհուրդներ հիւրընկալելը կ'ապականէ միայն հիւրընկալը, անմաքուր խօսակցութիւնը կ'ապականէ թէ խօսողը և թէ ունկնդրողը : Պատանեկութեան ատեն լրուած անպարկեշտ պատմութիւններ երբեմն անջնջելի կերպով կը քանդակուին մտքին վրայ, զորս վերջին տարիներու մէջ անկէ վտարել կամ մոռացութեան մատնել անհնարին կ'ըլլայ : Եթէ կ'ուզես փախչիլ երիտասարդական ցանկութիւններէ, հրաժարէ բոլոր անոնցմէ՝ այր թէ կին՝ որոնք խորհուրդով, կենցաղով և խօսակցութեամբ ցանկասէր են : Գոցէ ականջներդ անբարոյական խօսակցութեանց : Անոնց սրարանութեամբ զարդար-

ուած ոճը թող քեզ չխաբէ : Թէև այդ վայրկեանին չես զգար, բայց անոնք մահացու թոյն կը ներարկեն հոգւոյդ խորերը :

Ճշմարիտ է այն խօսքը թէ « սրտին յաւելուածէն կը խօսի բերանը : » Եթէ սիրտը կը զեղուչար խորհուրդներով, աւելորդը դուրս կը թափի խօսակցութեան ձեւով : Մաքուր նկարագիր մը ապականեալ լեզուի մը լուծորդուած չենք կրնար երեւակայել : Կարելի է պիղծ սիրտ մը ունենալ և մաքուր լեզու կեղծել, բայց ամէն պարագայի տակ, անմաքուր լեզուն անմաքուր սիրտ մը մատնանիչ կ'ընէ : Անհեթեթ է կարծել թէ կրնանք մեր սիրտը մաքուր պահել երբ մեր լեզուն չենք կրնար զսպել : « Բարի մարդը իր սրտին բարի գանձէն կը հանէ բարի բաներ, և չար մարդը իր սրտին չար գանձէն կը հանէ չար բաներ : »

Որչափ ալ մեծ ըլլան Եւրոպացիներուն թերութիւնները ուրիշ կէտերու մէջ, խօսակցութեամբ անոնք Արեւելցիներէս աւելի զգուշաւոր են : Այն կարգ մը լիրբ և լլիլը բառերը և նախադասութիւնները, մանաւանդ Թուրքերէնի մէջ, ոչ միայն դոյութիւն չունին Եւրոպական լեզուներու մէջ, այլ նաև զանոնք թարգմանել անգամ կարելի չէ : Կան մարդիկ որոնց հետ չես կրնար երկու ըսպէ իսկ խօսակցութեան մտնել, առանց անոնց բերնէն անպատշաճ խօսքեր լսելու : Յաճախ ըսել չեն ուզեր ինչ որ կ'ըսեն, բայց իրենք ալ կը խոստովանին թէ լեզունին այդպէս վարժուած

է : Ասիկա իրենց դժբաղդութիւնն է և բուռն ճիգի կը կարօտին անկէ ազատելու համար : Մանաւանդ ինչ տգեղ բան է այդ օրինակ խօսակցութիւնը տղոց և կանանց ներկայութեան :

Չորրորդ . Յանկուքիւնները գրգռող տեսարաններէ խոյս տալ :

Եգիպտոսի երիտասարդութիւնը , մանաւանդ Գահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ , բարոյական մեծ վտանգի մը հանդէպ կը գտնուի այնու թէ՛ այս մեծ քաղաքներուն մէջ՝ երիտասարդական կիրքերը յուզող տեսարանները խիստ շատ են : Իւրաքանչիւր քայլափոխի մարդ կը հանդիպի իրերու և անձերու որոնք պիղծ խորհուրդներ յարուցանելու բնոյթն ունին : Կան փողոցներ՝ ուրկէ անցնիլ անգամ արգիլուած ըլլալու է նորեկ անփորձ պատանիներու :

Կարգ մը խանութներու և կրպակներու մէջ ցուցադրուած պատկերները թէև հեռուէն անմեղ և հրապուրիչ կը թուին , բայց մօտէն այնպիսի երեւոյթներ կը պարզեն աչքին որ երեւակայութիւնը կը թունաւորեն : Կառավարութիւնը օրէնք դրած է անբարոյական պատկերներու վաճառման դէմ : Բայց պաշտօնական արգելքները բաւական չեն զանոնք բոլորովին անհետացնելու , որչափ ժամանակ որ անոնց համար պահանջ կայ : Երբ վաճառքի մը համար յաճախորդ կը գտնուի և ասկէ խանութպանը կլորիկ շահ կը հանէ , որչափ ալ անբարոյական ըլլայ այդ առեւտուրը , կառավար-

րութիւնը չկրնար արգիլել զայն : Հայ գրավաճառ մը կը ճանչնամ որ տասը ոսկի տուգանք տալ ստիպուեցաւ , որովհետև ոստիկանութիւնը արգիլուած պատկերներ գտած էր անոր կրպակէն : Գիտէք ինչպէս կը չքմեղացնէր ինքզինքը : “ Ես ի՞նչ յանցանք ունիմ , ” կ'ըսէր , “ քանի որ պահանջ կայ , և յիմարներ կը գտնուին իրենց դրամները այդպէս վատնելու . ես ինչո՞ւ անոնցմէ չօգտուիմ : ”

Կը տեսնէք , ով երիտասարդներ , մանաւանդ դուք որ ձեր ճակտի քրտամբ վաստկած դրամը այս սին և սնտոի բաներուն համար կու տաք , ձեզ յիմար կը կոչեն , ճիշդ ինչպէս որ հաշիչ վաճառողները իրենց ֆէլլահ յաճախորդները “ ապուշ ” կ'անուանեն : Թէ անոնց դրամը կ'առնեն և թէ զանոնք կ'անգոսնեն : Պիտի հանդուրժէք որ դուք ալ նոյն կարգը դասուիք : Ո՛չ : Այս անկարելի է : Ընդհակառակն դուք պիտի արհամարհէք այն ամէն խանութպանները որոնք այս անբարոյական առեւտուրէն շահ կը հանեն , և ոչ միայն ձեր վաստակը անոնց չպիտի տաք , այլ նաև պօլ.քօթ պիտի ընէք այն խանութները և կրպակները որ լկտի պատկերներ պահելու կասկածի տակ կը գտնուին :

Այս պատկերներէն զատ կան թերթեր և հանդէսներ որոնք՝ գեղարուեստի անունով մերկ կիներու լուսանկարներ կը հրատարակեն : Գեղարուեստ : Աւելի պատշաճ չըլլար զանոնք կոչել ՏԳԵՊԱՐՈՒՆՍ : Մաւր իր պտուղէն կը ճանցուի : Ի՞նչպէս կրնաք կոչել այս արտադրութիւնները

“ գեղարուեստ , ” երբ անոնք փոխանակ գեղեցիկին , բարիին ու ազնիւին ճաշակը արթնցնելու և մշակելու , անբարոյականութեան կ'առաջնորդեն և մարդուս ստորին կիրքերը դրդուելու միայն կը ծառայեն : Երիտասարդ բարեկամս , ոչ միայն դրամ մի տար այս թերթերուն , հանդէսներուն և պատկերներուն համար , այլ անոնց վրայ ակնարկ մը նետելու իսկ մի զիջանիք : Մէկ կողմ դարձիւր յկսի եւ մերկ անխառնէ որպէս քէ մահաացու ախտէ մը :

Զրլայ որ սենեակիդ մէջ այս պատկերներէն դանուխն , մինչև իսկ եթէ անոնք մեծ վարպետներու նշանաւոր գործերուն ընդօրինակութիւնն են : Երեւակայէ անգամ մը : Դուն պանդուխտ երիտասարդ մըն ես այս երկրին մէջ , և սիրելի մօրդ և քաղցրաբարոյ քրոջդ լուսանկարները ունիս սենեակիդ պատէն կախուած : Կրնաս անոնց աւընթեր դնել փողոցի կնկան մը , կամ գերասանուհիի մը կիսամերկ պատկերը և անոնց վրայ նայիլ նոյն հաճոյքով : Ընտանեկան սուրբ յիշատակներ բողոք չե՞ն բառնար սրտիդ մէջ : Մօրդ սիրաղեղ աչքերը չե՞ն յանդիմաններ քեզ որ զինքը և քոյրդ այդպիսի ընկերութեան մը մէջ դրած ես : Ոչ , չես կրնար ընել այդ բանը : Երբ այս տողերը կարդաս , անմիջապէս ոտքի պիտի ելլես , և անյողդողդ ձեռքերով վար պիտի առնես այդ օտար կնոջ պատկերը և կտոր կտոր ընելով աղբանոց պիտի նետես զայն : Հոն է անոր արժանի տեղը :

Ուրիշ վտանգ մըն ալ , մեր երիտասարդներուն համար , այս երկրին մէջ , այն կենդանի տեսարաններն են որ կը վխտան հրապարակներուն վրայ արեւամուտէն յետոյ : Եզիպտոս իրաւամբ հուշակ հանած է անբարոյական կնիկներու թուոյ շատութեան և տեսակներու պէսպիսութեան համար : Եւրոպայի ամէն կողմերէն ընկերութեան ստորնագոյն խաւերու ներկայացուցիչները հոս կը խռնուին և տեղական այլազան գոյներու և տարազներու հետ խառնուելով երկրներանդ երեւոյթ մը կու տան մեր փողոցներուն : Թիւրքին սուրէն և Բիւրտին դաշոյնէն աւելի մահառիթ են փողոցի կանանց հրաւիրող ակնարկները և փաղաքշական դիտողութիւնները՝ երկրէն նոր եկող անփորձ պատանւոյն համար : Ո՛հ , մի խարուիք անոնցմէ : Սուտ են ինչ որ կ'ըսեն : Միայն ձեր դրամին սիրահարներն են , ոչ թէ ձեր անձին : Անոնց լեզուն օձինին պէս թոյն կը պարունակէ : Երթունքներուն կարմրութիւնը ներկ է : Մորթին ճերմակութիւնը փոշի է : Դեմքին փայլունութիւնը շպար է : Դուրս ցցուած կլորիկ լանջքերը և մարմնոյն զգլխիչ ձեւաւորութիւնը բարձիկներէ կաղմուած են : Գիտեմ որչափ դժուար է անոնց չնայիլ և հրապուրիչ խօսքերուն չունկնդրել : Հզօր կամքի և յամառ ջանքի կը կարօտի մարդ զանոնք անտեսելու համար : Երբ անոնց հանդիպիս պողոտային վրայ աչքերդ մէկ կողմ դարձուր : Եթէ աչքերդ չհնազանդին քեզ՝ երեսդ ձեռքերուդ մէջ առ և զայն հակա-

ուակ կողմը հրէ։ Գլուխդ վեր բռնէ . իրանդ շտկէ . ուղիղ և արագ քայլէ : Ուշ ատեն սալայատակներուն վրայ մի դանդաղիր , մի դեգերիր : Բայց ապահովագոյն կերպը , երեկոյեան ժամերուն , անոնց յանախած փողոցներէն քնառ յանցնիրն է :

Կէտ մը կայ որուն վրայ վարանումով գրիչս կը շարժեմ : Բայց հոս ալ վտանգի գիտակցութիւնը կ'ստիպէ . զիս ամէն պնով աղդարարութեան փողը հնչեցնել : Յայտնի է թէ Եգիպտոս կէս-եւրոպացած երկիր մըն է , և ընկերական կարգուսարքը մէկ կողմէն կորսնցուցած է մեր գաւառի պահպանողականութիւնը , և միւս կողմէն տակաւին չէ բարձրացած քաղաքակրթեալ ազգերու ազատ յարաբերութեան մակարդակին : Այս վիճակէն ծագում առած է չարիքներու շարք մը , որ աղետաբեր արդիւնք ունեցած է բազում գաւառացի երիտասարդներու համար : Իգական սեռի համարձակ վերաբերումը գայթակղեցուցած է զանոնք , և սա եզրակացութեան բերած թէ անոնց մէջ առաքինի կին կամ աղջիկ չկայ : Պարկեշտ տիկիներու անմեղ ընկերական և բարեկամական յարաբերութիւնը թիւր մեկնութեանց պատճառ տուած և յաճախ եպերելի վախճաններու յանգած է :

Կանայք առհասարակ այր մարդոց զգացումները դիւրաւ կ'ահներու կարողութիւնը ունին : Բայց տաքարիւն և կըքոտ երիտասարդի մը հոգւոյն ալքերուն մէջ անոնց երբեմն յարուցած կատաղի փոթորիկը , և անկէ յառաջ եկած անբա-

նական արարքները գուշակելու չափ հեռատես չեն : Յաճախ անպնաս կարծուած համակրելի նայուածք մը , քաջալերական բառ մը , շնորհալի շարժում մը , չնախատեսուած , չակնկալուած հետեւութիւններու դուռ բացած են : Յետոյ իրենք ալ կը տեսնեն իրենց սխալը , սոսկումով կը դիտեն այդ անխմաստ կատակներուն կործանարար արդիւնքը , կը հասկնան թէ ինչ իմաստով առնուած է իրենց բարեկամութիւնը , կը զղջան , յետս կոչել կ'աշխատին իրենց խօսքերը , խոյս կու տան , կ'ընկրկին , բայց անօգուտ : Չեն կրնար մարել արդէն բռնկած հրդեհը : Ընդհակառակն սուելի կը հրահրեն զայն իրենց հակադարձ ընթացքով : Ընտանեսուն վագրին հանգոյն որ մարդկային արեան համը առնելէն յետոյ այլեւս չզսպուիր , կը փարատէ մինչև իսկ իր տէրը որ զինքը սնուցած է , դիւրագրգիռ երիտասարդն ալ , դեղանի կնոջ մը գուրգուրալի յարաբերութեան հրապոյրը ճաշակելէ վերջ կը կատղի , կը փրփրի , կը գոռայ , մինչև որ կամ իր կիրքը յագեցնէ և կամ բարոյապէս զոհուի :

Ո՛հ , քանի՛ ընտանեկան երջանկութիւններ խանդարուած , տուներ քանդուած , ամուսնալուծութիւններ տեղի ունեցած և երիտասարդներ խելագարած են այս անհեռատես կանանց անմեղ սեպած սիրաբանութիւններուն երեսէն : Պաշտօնիս բերմամբ յաճախ ընտանեկան անհամաձայնութիւններ կարդաղութիւն կանչուած ըլլալով անձնական փոր-

ճառութեամբս կրնամ վկայել թէ ամուսնական կռիւներու մեծ մասը այսօրինակ անխոհեմ սկզբը նաւորութենէ ծնունդ առած է : Բազում անգամ թէ և անբարոյականութեան իրական գործ չգըտնուիր խնդրոյն մէջ, բայց ի՞նչ օգուտ : Ամուսնոյն մտքին մէջ կասկածի հրէշը արթնցած է, սէրը պաղած է և չկրնար նկատել իր կինը այն խանդաղատանքով, որով կը նկատէր զայն այս տխուր դէպքերէն առաջ :

Քանի որ այս տողերը երկտասարդներուն համար գրուած են, խօսքս դարձեալ անոնց ուղղելով կ'ըսեմ. Երկտասարդներ, խորհեցէք թէ ի՞նչ արդիւնքներու կը յանդի այդ ձեր անմեղ կոչած ժամանցը : Գիտեմ, ինքզինքդ պիտի չքմեղայնես ըսելով թէ « Ես ի՞նչ ընեմ, կնիկը դիս գլխէ հանեց : » Ճիշդ ինչպէս որ մեր նախահայրը Ադամ ըսաւ, « Կնիկը ինձի տուաւ . . . ու ես կերայ : » Բայց դիտցած ըլլաս որ կիները յաճախ իրենց ըրածին գիտակից չեն : Իրենց չափովը կը չափեն քեզ ալ : Ան կարծեց թէ ջերմ յարաբերութիւնը պարզ բարեկամութենէ անդին չանցնիր, ոչ որի վնաս չտար : Հիմա որ դուն չափազանցութեան գացած ես, իր դժբաղդութեանը պատճառ կ'ըլլաս, հանգիստը կը վրդովես, քեզ կ'արհամարհէ, կ'ատէ իր բոլոր սրտովը, և եթէ կարենայ, քեզմէ վրէժ պիտի լուծէ :

Դուն գիտես քու անձը, քու բնաւորութիւնդ : Եթէ չես կրնար իդական սեռին հետ,

առանց տուփական զգացումներուդ յուզուելու յարաբերութիւն մշակել, անոր բնաւ մի մտենար : Կան կիներ որ առանց գիտնալու քու շուրջը զգլխիչ մթնոլորտ մը կ'ստեղծեն : Ասիկա իրենց յանցանքը չէ, թերեւս դժբաղդութիւնն է : Այսպիսի կիներէ հեռու կեցիր : Երկտասարդին մէկը կ'ըսէր անգամ մը թէ երկսեռ ընկերակցութեան մը չկրնար ներկայ դասուել առանց յետոյ բողանոց երթալու : Եթէ այս է քու ալ վիճակդ, երկու ճամբայ կը մնայ քեզ : Կամ բոլորովին հրաժարելու ես կանանց ընկերակցութենէն, և կամ ամուսնութեան մէջ որոնելու ես բարոյական ապահովութիւնդ :

2.

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Բնութեան մէջ օրէնք մը կը գտնենք, որուն համեմատ ամէն պահանջ յագեցնելու համար առարկայ մը ստեղծուած է: Իւրաքանչիւր կարօտութիւն իրեն համապատասխան իր մը ունի: Գաղտնի զգացումը յագուրդ կը գտնէ կերակուրով, և ծարաւը կ'անցնի ըմպելով: Թոքերը օդ կը պահանջեն և ահա երկիրը շրջապատուած է մթնոլորտով մը: Միտքը կը գործէ և նիւթական աշխարհը ու անոր գաղտնիքները ուսումնասիրութեան ատաղձ կը հայթայթեն անոր: Հոգին փիղիքականէն և տեսանելիէն անդին սաւառնելու կարողութիւնը ունի, և կրօնքը անոր առջև կը բանայ ընդարձակ ասպարէզ մը: Նոյնպէս մեր սեռական բնութիւնը յագենալու համար մարդ արական և իգական ստեղծուած է:

Բովանդակ կենդանական աշխարհը երկու սեռէ կը բաղկանայ: Էն ստորին միջատէն սկսելով մինչև մարդ արարածը այս յատկութեամբ օժտուած է: Ըստ Աստուածաշունչի՝ Աստուած « արու և էգ ստեղծեց զանոնք: » Սխալ է այն գաղափարը թէ բնութեան այս պահանջը զանց ընելով՝ մարդ կատարեալ կեանք մը կրնայ ապրիլ աշխարհի վրայ: Այս երկնատուր կարողութիւնը սպաննելով ան-

բնական վիճակ մը կ'ստեղծենք: Մեղքը զայն գոհացնելուն մէջ չէ, այլ՝ ապօրինի կերպով գործածելուն մէջ:

Մեր սեռական բնութիւնը յագեցնելու այլևայլ միջոցներ կան:

Առաջին գիշութիւն: Այս կերպը, ինչպէս վերը ըսած ենք, խիստ վնասակար է, և կը նմանի սնունդ չպարունակող բաներով անօթութիւնը յագեցնելուն, որ կանուխ կամ անագան պիտի խանդարէ առողջութիւնը և ցամբեցնէ կեանքի աղբւրը: Անկարելի է գիշութեան յուռի սովորութիւնը ունենալ և տակաւին երջանիկ, առողջ և երկար կեանք մը ապրիլ:

Երկրորդ ապօրինի կենակցութիւն կամ շնութիւն: Ասոր ալ արդիւնքը միշտ աղետալի եղած է: Ան կարգ մը ախտերէն զատ, որոնք Դամոկլէան սուրի մը պէս շարունակ կախուած են շնացողին գլխուն վրայ, ան չկրնար կանոնաւորապէս յագեցնել սեռական բնութեան պահանջները: Պարագաներու բերմամբ միայն մերթ ընդ մերթ յաճախելով վատահամբաւ տուներ, պատեհութենէն օգուտ քաղելու և չափազանցութեան երթալու պիտի փորձուի: Յայտնի է թէ շաբաթներ և թերեւս ամիսներ ժուժկալութեամբ ապրելէն յետոյ օր մըն ալ յափրանալու աստիճան գրգռուիլը առողջապահական օրինաց հակառակ է:

Երրորդ ամուսնութիւն: Կարելի չէ բաղդատութեան իսկ դնել ամուսնական մաքուր և նուի-

րական կենսակցութիւնը և անկէ յառաջ եկած իրական և տեւական բերկրութիւնները պոռնիկի մը հետ կատարուած յարաբերութեան և անոր պատճառած խարուսիկ հաճոյքներուն հետ : Տարբերութիւնը ահագին է : Ամուսնական սիրոյ և մտերմութեան մէջ կան այնպիսի հանգուցիչ բերկրութիւններ, զորս ընդունայն է փնտռել օտար կնիկներու բազկաց մէջ : Մերձեցումի հաճոյքը կատարեալ ըլլալու համար այր և կին փոխադարձ փափաք և սէր ունենալու են : Ո՞ր պոռնիկն է որ անկեղծ սիրով մը կրնայ սիրել իր յաճախորդը : Ոչ միայն որեւէ սէր չտածեր անոր համար, այլ յաճախ կ'ատէ զայն իր բոլոր հոգիովը և դարչանք կ'զգայ անոր հանդէպ : Միայն վաստակին սիրոյն համար է որ մի քանի վայրկեան տուայտանքի կը համբերէ : Միթէ կարելի է երեւակայել ամուսնացեալ առն և կնոջ միջև փոխանակուած այն ջերմ և սուրբ համբոյրները բողանոցի մը աղտոտ մթնոլորտին մէջ : Ճշմարիտ կնոջ իր ամուսնոյն համար ունեցած սրտաբուղիս համակրութիւնը, անոր հանդէպ զգացած հիացումը, իր հոգւոյն խորերէն դուրս ժայթքող սիրոյ հրայրքը, կրնայ երբեք գոյութիւն ունենալ ծախու առնուած կնոջ մը սրտին մէջ :

Ամուսնութիւնը, ուրեմն, ի սկզբանէ անտի հաստատուած է՝ մարդկային այս պահանջը օրինաւորապէս յազեցնելու համար : Ամէն երկրի և դարու մէջ անոր գոյութիւնը կը գտնենք : Բար-

բարոս ցեղերէն մինչև էն քաղաքակիրթ և զարգացած ազգերը ամուսնութեան սովորութիւնը որդեգրած են : Բոլոր կրօնքները զայն վաւերացուցած են : Քրիստոնեայ աշխարհին մէջ Աստուածային տնօրինութիւն մը նկատուած է :

Ամուսնութիւնը իրական և մարմնաւոր չարիք մը բառնալուն՝ իրական և մարմնաւոր դարմանն է . բողբոռն հրապոյրներէն փախչելու դիւրագոյն ճամբան է : Ո՞ր երկրի մէջ որ ամուսնութիւնը տիրող սովորութիւնն է և կանուխ ժամանակէ կ'սկսի գործադրուիլ, հոն օտար կինը գոյութիւն չունի, և անոր յարակից չարիքներէն զերծ է հասարակութիւնը : Ընդհակառակն մեծ քաղաքներու մէջ, ուր ցանցառ է ամուսնութիւնը և ամուրիները բազմութիւ են, օտար կինը ազատ ասպարէզ կը գտնէ : Տարբերութիւնը անմիջապէս կը տեսնեն երիտասարդները որ երկրէն հոս կամ Եւրոպա ու Ամերիկա կը գաղթեն : Կարելի է երեւակայել մեր գուռաւի քաղաքներուն մէջ փողոցի այն տեսարանները որոնց ախամայ հանդիսատեսներն ենք ամէն օր, կամ տեսնել հոն այս կիները որոնք խմբովին կը շրջագային հրապարակներուն վրայ յաճախորդ գտնելու համար : Հաւատացէք որ հոն անոնք պիտի զգաստանան, և կամ առանց գործի մնալով սովամահ պիտի կորնչին :

Ամուսնութեան նպատակը լոկ այս կիրքը յագեցնել ալ չէ, թէև ատիկա կարեւոր ազդակ մը եղած է անոր հաստատման սատարող : Ճշմարիտ



ամուսնութիւնը ֆիզիքականէն աւելի հոգեկան հիմ  
մը ունի : Մարդու կատարեալ երջանկութիւնը  
ամուսնական կեանքի մէջ պէտք է որոնել : Ընտա-  
նիք կազմել, բոյն մը շինել, համերաշխ շրջանակ  
մը ստեղծել, զաւակներ ծնանիլ, սերունդ ունե-  
նալ, անոնց հոգատարութիւնը ստանձնել, ուրա-  
խութիւններուն մասնակցիլ, ցաւերուն կարեկից ըլլալ  
վերջապէս թափառական և աննպատակ կեանքէ  
մը որոշ և հաստատ կեանքի մը յանգիլ է ամուս-  
նութիւնը : Ամուրիութիւնը դէպ անծանօթ երկիր  
մը ճանապարհորդութեան հանդոյն է : Ուղեւորը  
գաղափար չունի ապագային վրայ : Ամենայն ինչ  
տարտամ և անորոշ է : Թէև կը յառաջանայ՝ բայց  
չգիտեր թէ որպիսի նաւահանդիստ մըն է ուղե-  
ւորութեան վախճանը :

Փիզիքական հաճոյքներէ խիստ գերազանց են  
հոգեկան խայտանքները որոնցմով շրջապատուած  
կ'ըլլայ մտատիպար ամուսնութիւնը : Փորձառու-  
թիւնը ունեցողները միայն կրնան հասկնալ Անգ-  
ղիերէն հօժ բառին իմաստը : Հօմ տուն կը նշա-  
նակէ թէև, բայց ո՛չ անոր չորս պատերը, որչափ  
ալ զարդարուած ըլլան անոնք գեղունակ պատ-  
կերներով, ո՛չ անոր օդասուն սենեակները և հոյա-  
կապ սրահները, որչափ ալ թանկագին կարասի-  
ներով կահաւորուած ըլլան անոնք : Հօմը ընտա-  
նեկան յարկ մըն է ուր սրբութիւն և սէր, նուի-  
րումն և ներդաշնակութիւն, երջանկութիւն և  
հանգստաւետութիւն կը տիրեն : Միջավայր մըն է

ուր միայն կարելի է նախաճաշակը վայելել այն  
վիճակին որ Ս. Գրոց մէջ դրախտ անուևով ներկա-  
յացուած է :

Ի՞նչ քաղցր է օրուան ծանր աշխատութիւն-  
ներէն յետոյ երեկոյին տուն դառնալ : Անհամբեր  
իրեն կ'սպասեն նուիրուած կին մը և ճուղղուն  
մանկիկներ : Իրենց պարլիկ մանկական պատմու-  
թիւններով՝ հրաշիւք իմն կարծես՝ մոռցնել կու-  
տան ամէն մտատանջութիւն, հոգ և անյաջողու-  
թիւն : Գործի անվախճան հաշիւներէն միտքը յող-  
նած, գործատեղիներու լաբիւրինթոսէն գլուխը  
չմորած, շուկայի աղմկալից ժամերէն յետոյ,  
մարդ ո՞ւր կրնայ գտնել խաղաղութիւն մտքի և  
հանգարտութիւն սրտի, եթէ ոչ այն բարեկարգ  
ընտանեկան յարկին տակ, որուն տիրուհին է առա-  
քինի և տնայէն կին մը և բնակիչներն են անմեղ  
հրեշտակիկներ : Հոս կը մոռցուի աշխարհն իր բո-  
լոր յարաբերութիւններովը, հոս կ'անհետանան  
մրցումի և հակառակութեան բոլոր դառնութիւն-  
ները, հոս կը վերակենդանանան ջլատեալ ան-  
դամները և կը վերանորոգուին սպառած ոյժերը :

Ամուրին զուրկ է այս ուրախաւիթ առանձ-  
նաշնորհներէն : Անիկա չունի բոյն մը ուր կրնայ  
հանգչիլ և կաղդուրել իր յողնած անդամները : Կէս  
կահաւորուած պաղ սենեակ մը և օտար ձեռքե-  
րով շտկուած անհրապոյր անկողին մը միայն ունի  
որ երեկոյին իրեն կ'սպասեն : Հոն չկրնար կե-  
նալ : Գոց սենեակին օդը ճնշիչ է : Փողոց կ'ելլէ :

Սրճարան մը կը նստի : Հոն ալ օդը ապակա-  
 նած է : Հանգիստ չգտներ : Քիչ մը կը պտըտի :  
 Փոփոխութիւն մը չգտար : Նորութիւն մը չկայ :  
 Ամբողջ օրը տեսածներէն զատ բան մը չտեսներ :  
 Կը յողնի : Սենեակ կը վերադառնայ : Կը հանուի ,  
 անկողին կը նետուի , խռովեալ քուն մը կը քաշէ ,  
 առտու եղածին պէս անկէ փախչիլ կ'ուզէ : Այս-  
 պէս կը շարունակէ : Օրերը իրարու կը յաջոր-  
 դեն : Ամիսները տարիներու կը վերածուին : Ժա-  
 մանակը կ'անցնի : Աննպատակ , միօրինակ , դան-  
 դաղ կեանք մըն է որ կ'ապրի , մինչև որ օր մըն  
 ալ կը տեսնէ որ ամուսնանարու համար շատ ուշ  
 մնացած է : Ծերութեան նշանները արդէն կ'սկսին  
 երեւնալ , մաղերը կը ճերմկին , մարմինը իր առու-  
 գութիւնը կը կորսնցնէ , աչքերը կ'աղօտանան ,  
 առողջութիւնը կը խանգարի և կեանքը անտանելի  
 բեռ մը կ'ըլլայ : Երբ հիւանդանոց խնամող չունի ,  
 երբ ցաւ մը ունենայ կարեկցող չունի , երբ մեռնի  
 լացող չունի : Գերեզմանը անյայտ , անունը մոռ-  
 ցուած , սերունդը փճացած . աշխարհ կու գայ ու  
 անկէ կը մեկնի , անկենդան իրի մը պէս , առանց  
 հետք մը թողելու իր ետին :

Ընթերցողներէս անոնք որ ամուրի են քսթի-  
 ծաղով մը պիտի կարգան այս տողերը : Ամուս-  
 նական կեանքը չափազանց փայլուն գոյներով  
 նկարագրուած է՝ պիտի ըսեն : Մինչև իսկ եթէ  
 ընդունինք թէ ամուսնութիւնը ինչ ինչ կէտերու  
 մէջ ամուրիութենէ նախապատիւ է , միթէ անիկա

մութ կողմեր ալ չունի : Մանաւանդ այս օտար  
 երկրին մէջ պանդուխտ երիտասարդի մը առջև  
 որքան խութեր կան : Ամուսնութիւնը լաւ բան է  
 գիտե՞նք , հապա՞ անոր դժուարութիւնները : Ըն-  
 տանեկան կեանքը առաւելութիւններ ունի , բայց  
 միեւնոյն ժամանակ անպատեհութիւններն ալ բազ-  
 մաթիւ են : Այսպէս քիչ չեն թուով անոնք որ կը  
 դժկամակին ամուսնանալ , որովհետև ամուսնու-  
 թեան մէջ կը տեսնեն անյաղթելի խոչընդոտներ :  
 Անոնց յարուցած առարկութիւններէն մի քանին  
 ահաւասիկ .

Նախ , պարագաները հոս տարբեր են մեր երկ-  
 րին մէջ եղածներէն : Հոն կեանքը հեշտ է , հոս՝  
 դժեղակ : Հոն ապրելակերպը պարզ է , հոս՝ բարդ :  
 Գաւառներու մէջ երիտասարդ մը կրնայ առանց  
 անպատեհութեան կանուխ ամուսնանալ , մինչև  
 իսկ դեռ դործի աստարէզ ուր չկ'օխած , որով-  
 հետև անոր ծնողքը արդէն տուն տեղ ունին ,  
 ընտանիք մը կազմած են , ամէն բան կազմ ու  
 պատրաստ է : Այսօրինակ նահապետական շրջա-  
 նակի մը վրայ մի այլ անդամի յաւելումը շատ  
 տարբերութիւն չըներ : Հոս ասոր ճիշդ հակառակն  
 է : Ապրուստը սուղ է , գործերը ծանր են , կեանքը  
 չարքաշ է : Ամուսնանալէ առաջ պէտք է տուն մը  
 ունենալ , զայն կահաւորել , օրապահիկ մը ապա-  
 հովել և մինչև իսկ բաւական դրամ աւելցուցած  
 ըլլալ հարսանեկան և այլ ծախքերու համար :  
 Գարձեալ , հոս աղջիկները աւելի պահանջկոտ

են . փոքրիկ բաներով գոհ ըլլալ չեն գիտեր : Մեծագին զարդեր կ'ակնկալեն և շուայրօրէն ծախսելու վարժուած են : Համեստ վաստակի տէր երիտասարդ մը ի՞նչպէս կրնայ ամուսնանալ : Ատկէ զատ , զաւակներ պիտի ունենաս . անոնց խնամքը , սնունդը , հագուստը , դաստիարակութիւնը ծախքի նոր դուռներ կը բանան : Հիւանդութիւն կը պատահի , բժշկին այցեգինը , դեղերու համար վճարուած դրամը և տակաւին չնախատեսուած անթիւ ծախքեր՝ ահագին դումարներու կը հասնին : Մարդ այս երկրին մէջ կամ հարուստ ըլլալու է և կամ ամուսնութեան վրայ բնաւ խորհելու չէ : Պանդուխտին համար լաւագոյն է առանձին մնալ : Ան ինքզինքը ունի հոգալու : Ինչ գտաւ՝ ան կ'ուտէ , ուր կրցաւ՝ հոն կը բնակի , ինչ ունեցաւ՝ ան կը հագնի : Ազատ է , ուզած տեղը կ'երթայ , ուզած գործը կ'ընէ , ուզած ընկերներուն հետ կը զուարճանայ :

Այո , դժուարութիւններ ունի ամուսնութիւնը , ինչպէս վարդը ունի իր փուշերը : Եթէ փուշին համար պիտի մերժենք վարդը , անոր անուշ բոյրէն և ակնապարար թոյրէն ալ պիտի զրկուինք : Ապաքէն Եգիպտոս սուղ երկիր է , բայց վաստակն ալ համեմատաբար աւելի է : Ո՞վ չգիտեր թէ ամուրիութեան բերմամբ երիտասարդները յաճախ այնպիսի ծախքերու կ'ենթարկուին որոնցմով ընտանիք մը դիւրաւ կրնայ հոգացուիլ : Սրճարաններու , զբօսավայրերու , թատրոններու ,

ընկերներու և . . . օտար կնիկներու համար մրսխուած դրամով , քանի մը անդամէ բաղկացած ընտանիքի մը պարէնը կրնայ մատակարարուիլ : Քիչ մը խնայողութիւն , քիչ մը տնտեսագիտութիւն , և քիչ մըն ալ հեռատեսութիւն միանալով՝ երբեմն հրաշքներ կը գործեն :

Երկրորդ առարկութիւն մըն ալ իգական սեռին նկատմամբ սխալ ըմբռնումի մը վրայ հիմնուած է : Այս կէս քաղաքակիրթ երկրին մէջ կիները աւելի համարձակ են արանց հետ իրենց վերաբերումին մէջ : Աղջիկներ կան որ այս մասին չափազանցութեան կ'երթան և պատշաճից սահմանները կ'անցնին : Անոնց ընթացքը կը դայթակղեցնէ երիտասարդները և կարծել կու տայ թէ բոլոր աղջիկները նոյն դասակարգին կը պատկանին : Մինչև իսկ երեւակայութեամբ այնպիսի տգեղ և անբարոյական պատկերներ կը գծեն անոնց նկատմամբ որ ամուսնանալու կը վարանին :

Անշուշտ չեմ ըսեր թէ անխոհեմ , թեթեւ սողիկ , մինչև իսկ անբարոյացած աղջիկներ չկան : Բայց անոնց գոյութիւնը չապացուցաներ թէ այս միջավայրին մէջ ապրող բոլոր աղջիկները անվստահելի են : Ասիկա սխալ եզրակացութիւն մըն է : Ինչպէս որ անփափաքելի աղջիկներ կան , կան նաև պարկեշտ , ամօթխած և մաքրակենցաղ օրիորդներ որոնք արժանի են առաքինի երիտասարդի մը կենակցութեան : Շրջահայեաց և խորատես անձը կրնայ առաջին տեսակցութեան իսկ անոր նկարա-

գրին վրայ ուղիղ դաղափար մը կաղմել։ Անտա-  
րակոյս լաւ ընտրութիւն մը ընել անհրաժեշտ է։  
Երբ աղջիկները հասկնան թէ իրենց չափազանց  
ազատասիրութիւնը ինչ իմաստով կը մեկնուի,  
համեստ և բարեհամբոյր օրիորդներու թիւը պիտի  
աւելնայ։ Բայց աւելի գիւրջին ճամբայ կայ։ Եթէ  
երիտասարդ մը այս երկրի աղջիկներուն չհանիր,  
անոնց չկրնար վստահիլ, թող իր երկրէն ու քա-  
ղաքէն բերել ապ մին որ իր ճաշակին ու փա-  
փաքներուն համապատասխանէ և պահէ իր սովը-  
րոյթները։

Մի ուրիշ առարկութիւն՝ ամուսնական կեանքի  
մէջ երեւան եկած կռիւ ու անհամաձայնութիւն-  
ներու արդիւնքը եղած է։ Յաւալի է որ ընտա-  
նեկան կռիւները յաճախադէպ են։ Անուրանալի  
է թէ ամուսնաթողութիւնները վերջերս ազետալի  
համեմատութիւններ առած են մեր մէջ։ Սակայն  
դարձեալ եթէ քննենք, պիտի տեսնենք թէ դժբաղդ  
ամուսնութիւններու թիւը որչափ քիչ է երջանիկ  
ամուսնութիւններու հետ բաղդատմամբ։

Ենթադրենք թէ հարիւր ամուսնութիւններէն  
մէկը դժբաղդ կ'ըլլայ։ Ինչո՞ւ խորհիւ թէ այդ  
հարիւրերորդը անտարակոյս քուկդ պիտի ըլլայ։  
Պատճառը թէ ինչո՞ւ անոնց թիւը իրակա-  
նէն մեծ կ'երեւի՝ սա է որ, երբ ընտանեկան  
կռիւ մը պատահի, ամէն մարդ կ'իմանայ, խնդիրը  
հրապարակ կ'ելլէ, ազգային ժողովներու առջև  
կը բերուի, թերթերուն մէջ անոր վրայ կը դուռի,

և ամէնուն ուշադրութիւնը ան կողմ կը դառնայ։  
Մինչ անդին հարիւրաւոր ամուսններ խաղաղ, եր-  
ջանիկ և հանգիստ կ'ապրին իրենց ընտանեկան  
յարկին տակ առանց որեւէ մարդու հետաքրքրու-  
թիւնը շարժելու։ Ապերջանիկ այր մը, մխիթա-  
րութիւն գտնելու համար, յաճախ կը փորձուի  
իր ցաւերը կարեկից բարեկամի մը յայտնել։  
բայց երբեք լսած էք մարդ մը որ խօսի իր ա-  
մուսնական բերկրութիւններուն վրայ, գովէ իր  
կինը, պարծենայ անկէ ընդունած սիրոյն և  
նուիրման վրայ։ Ինաւ երբեք։ Ատիկա իրեն կը  
պատկանի։ Կրօնական նախանձաւորութեամբ մը  
զայն իր սրտին խորերը կը պահէ։ Սրբապղծու-  
թիւն կը նկատէ օտարներու միջամտութիւնը իր  
ընտանեկան կեանքի դաղանիքներուն։

Այսպէս երիտասարդները միայն դժբաղդ  
ամուսնութիւններու վրայ իմանալով միակողմանի  
դատողութիւն մը կ'ընեն և անկէ խապառ հրաժա-  
րելու որոշում կու տան։ Սակայն ինչ ալ ըլլան  
խութերն ու խոչընդոտները, որքան ալ բազմաթիւ  
ըլլան դժուարութիւնները, փորձառուներու վկա-  
յութիւնը միշտ ի նպաստ ամուսնութեան եղած է։  
Ամուրիութեան նեղութիւնները ամուսնութեան  
տուայտանքներէն շատ են։ Եթէ նժարին մէկ  
կողմը դենք ամուրիութիւնը իր բոլոր առաւելու-  
թիւններով, և միւս կողմը՝ ամուսնութիւնը իր  
բոլոր ուրախութիւններով, յայտնի է թէ այս  
վերջինը աւելի ծանր պիտի կշռէ։

է.

### ԵՐԲ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ Է

Այս հարցը տարիքի և նիւթականի երկու  
խնդիրները կը շոյափէ :

Առաջին՝ տարիք : Ո՞ր տարիքի մէջ ամուս-  
նութիւնը լաւագոյն է : Անշուշտ այս մասին տար-  
բեր գաղափարներ կրնան յայտնուիլ . ոմանք կա-  
նուխ և այլք ուշ ամուսնութիւնը պիտի ջատա-  
գովեն : Սակայն մենք փորձառութեամբ համոզում  
գոյացուցած ենք թէ, ամէն ինչ նկատողութեան  
առնելով, կանուխ ամուսնութիւնը նախապատիւ  
է : Որոշ տարիք մը մասնաւորել թէև կարելի չէ,  
որովհետև իւրաքանչիւր անհատի պարագաները  
նոյն չեն, բայց 25-30 տարիքը յարմարագոյն  
ժամանակն ըլլալ կը թուի, եթէ արգելիչ պատ-  
ճառներ չգտնուին :

Այս տարիքին մէջ մարդկային մարմինը ուրիշ  
ժամանակներէ աւելի առողջ և կայտառ է, և սե-  
ռական բնութիւնը իր կատարելութեան հասնե-  
լով բուռն թափով մը գոհացում կը պահանջէ :  
Այս ներքին փոթորիկը անտես ընել ոչ կարելի և  
ոչ ալ խոհեմութիւն է : Եթէ չարաչար և ապօ-  
րինի գործածութեամբ յագեցում գտնէ, առող-  
ջութիւնը կը տուժէ, իսկ եթէ զօրաւոր կամքով

մը սանձահարուի, ապագային մէջ կրնայ անպա-  
տեհութիւններու դուռ բանալ : Ընդհակառակն  
ամուսնութիւնը անոր կանոնաւոր ընթացք մը  
կու տայ և կը սատարէ մարմնոյն, մտքին և հոգ-  
ւոյն համահաւասար զարգացման, և ներդաշնակ  
վիճակ մը կ'ստեղծէ մարդու անդամներուն մէջ :  
Ամուսնական սիրոյ վայելքները երիտասարդու-  
թեան մէջ աւելի հաճոյական են քան յետոյ, և  
միայն կանուխ ամուսնացողներն են որ անոր բա-  
րիքները լիուրի կը վայելեն :

Կանուխ ամուսնութենէ ծնած սերունդը նը-  
մանապէս առողջ և կորովի կ'ըլլայ : Ասիկա այնպիսի  
հարց մըն է որուն կարեւորութիւնը զաւակներ ու-  
նեցողները միայն կրնան գնահատել : Ախտաժէտ և  
հիւանդկախ մանուկները ընտանեկան կեանքի եր-  
ջանկութիւնը կը խանգարեն : Բայց անոնց համար  
որոնք քաջառողջ և կայտառ սերունդով մը օրհ-  
նուած են՝ ընտանեկան յարկը զբօսավայր մը և  
կեանքը հրճուալից ժամանց մըն է : Անոր տունը  
աղմկալից է, բայց խաղի և ուրախութեան աղ-  
մուկն է որ օդը կը թնդացնէ : Երբ սղաքը դըպ-  
րոցէն տուն կու գան, կահ կարասիներու տակնու-  
վրայութիւն մը տեղի կ'ունենայ զոր տեսնել ճըշ-  
մարիտ ծնողաց հաճոյք միայն կը պատճառէ : Այո,  
չարաճճի զաւակները իրենց մօրը գործը կը կրկնա-  
պատկեն, բայց ՄԱՅԲ տխրողսին արժանի ո՞ր կինն  
է որ պիտի չուզէր քառապատիկ աւելի գործ  
ունենալ քան զրկուիլ անոնց տեսութենէն :

Բայց թերեւս կանուխ ամուսնութեան ամէնէն մեծ օրհնութիւնը կը կայանայ այն պարագային մէջ թէ մարդ իր նուազող տարիներուն մէջ երիտասարդութեան ժամանակ ունեցած որդիներուն օգնութիւնը և աջակցութիւնը կը վայելէ : Կեանքի միջօրէականը հազիւ անցած , ահա կէս տասնեակ մը պատանիներ իրեն թեւ ու թիկունք կ'ըլլան : Ո՞վ կրնայ նկարագրել այսօրինակ ծնողաց ներքին գոհունակութիւնը և ուրախութիւնը ի տես հնազանդ և ծնողասէր զաւակներու : Արդարացի հպարտութիւն մը կ'զգայ ան զօր Կրետոսի մը դանձերը չեն կրնար փոխարինել : Քանի՛ բարեկեցիկ այրեր կան այսօր որ կեանքի մէջ ուշ ամուսնացած ըլլալով կ'ողբան թէ չունին հարազատ մէկը աջակցելու իրենց ծերութեան ատեն : Կ'զգան թէ սխալ գործած են , բայց , աւանդ , շատ ուշ : « Երանի՛ թէ , » կ'ըսեն , « կանուխ ամուսնացած ըլլայի՛ք . հիմա չափահաս զաւակներ պիտի ունենայի՛նք մեզ նեցուկ ըլլալու : » Կրնայ ըլլալ որ ընդարձակ և յաջող գործ ունին , բայց տարիներու ծանրութեան տակ անկարող կ'զգան զայն առանձինն կառավարելու : Կ'ստիպուին մէկ մասը օտարի ձեռք յանձնել . բայց յայտնի է թէ օտարը միշտ օտարի պէս կը նայի իր գործին , որչափ ալ վճարումը գոհացուցիչ ըլլայ : Սողոմոն կ'ըսէ . « Ինչպէս են նետերը զօրաւորին ձեռաց մէջ , այնպէս են երիտասարդներուն որդիքը : Երանի՛ այն մարդուն որ իր կապարճն անոնցմով լեցուց .

երբ դռան մէջ թշնամեաց խօսելու ըլլան՝ պիտի չամչնան : »

Ուշ ամուսնութեան մէկ ուրիշ անպատեհութիւնն ալ այն է թէ մարդ իրեն յարմար կենակից մը գտնելու մասին դժուարութեան կը հանդիպի : Ենթադրենք թէ քառասունն անցած մարդ մը ամուսնանալու կը ձեռնարկէ : Այս տարիքը ունեցող ամուրին չափազանց խստապահանջ և քիչ մըն ալ յոռետես կ'ըլլայ : Դիւրաւ , դիւրաւ աղջկայ չհաւնիր . անոնց լաւ կողմէն աւելի յոռի կողմը կը տեսնէ : Ո՛ր օրիորդը որ առաջարկես՝ թերութիւն մը կը գտնէ անոր վրայ , պատրուակ մը կը հնարէ և զայն կը մերժէ : Կեանքի փորձառութիւնը , առանձնակեաց ապրելակերպի մը դառնութիւնները , և թերեւս քիչ մըն ալ ցոփ կանանց հետ ապօրինի կենակցութիւնը բթացուցած են անոր առնական զգացումները , և մարդը այն համոզումը գոյացուցած է թէ իգական սեռը ընդհանրապէս և աղջիկները մասնաւորապէս անսիրտ , անխիղճ և թերութիւններով առլի արարածներ են : Կը խորհի թէ շատ դեռատի օրիորդ մը չկընար առնել . տարիքի մեծ տարբերութիւնը կրնայ անհամաձայնութեան ծնունդ տալ : Արդարեւ քառասուն տարեկան մարդ մը ի՛նչպէս կրնայ 18-20 տարեկան աղջկան մը հետ ամուսնանալ : Բացառութիւնները յարգելով հանդերձ՝ կրնանք ապահովաբար ըսել թէ այսօրինակ ամուլ մը երջանիկ չկրնար ըլլալ : Բնութիւն , նկարագիր , ֆիզիքական

կազմ, կեանքի փորձառութիւն, սիրոյ քանակութիւն, փափաքներ և խտէպներ այլազան և տարբեր ըլլալով՝ բաղխումի և երկպառակութեան պատճառ կ'ըլլան :

Միջին տարիք ունեցող այր մը հանդարտ կեանք կը սիրէ : Երեկոյին երբ տուն դայ, հանգիստ ընելու և անվրդով ժամանակ անցընել կը փափաքի : Դեռատի կինը, սակայն, ամբողջ օրը տանը չորս պատերուն մէջ փակուած մնալէն յետոյ, երեկոյին ամուսնոյն հետ քիչ մը դուրս ելլել, օդ առնել, զբօսավայր մը երթալ կ'ուզէ : Ամուսինը իր նորապսակ կինը հաճեցնելու համար մի քանի անգամ տեղի կու տայ, բայց վերջապէս կը ձանձրանայ : Սրգէն իր բոլոր կեանքը այդ « դուրսերը » անցուցած է : Սրճարան, գարեջրատուն, պարտէզ, թատրոն խիստ ընտանի վայրեր են . բայց հիմա անոնցմէ կը զզուի : Ո՛չ ապաքէն խեղճ մարդը ամուսնացաւ որ քիչ մը հանդիստ ընէ, ընտանեկան կեանք վայելէ : Բայց ի՞նչ օգուտ . իր դեռատի կնոջ համար այս բաները իրենց դիւթութիւնը դեռ չեն կորսնցուցած . անիկա նոր պիտի վայելէ զանոնք : Առաջ կը կարծէր թէ, երբ ամուսնանայ, պիտի կարող ըլլայ իր ամուսնոյն հետ այս վայրերը յաճախել : Հիմա ալ իր անտարբեր էրիկը կը դժկամակի այս փոքրիկ հաճոյքները իրեն պատճառել : Ոհ, ի՞նչ դժբաղդ աղջիկ եմ ես . . . : Եւ ահա կ'սկսի խռովութիւնը . կազը և կոխը ծայր կու տան և ո՛վ կրնայ ըսել

թէ վախճանը ո՛ւր պիտի յանգի, եթէ, Աստուած մի արասցէ, աղջիկը բարոյական նկարագրէ զուրկ է :

Բայց ենթադրենք թէ իր տարիքին համապատասխան կին մը առնէ : Հոս ալ դժուարութիւնները անպակաս են . թէ այր և թէ կին իրենց նկարագիրը կազմած են : Ամուրիութեան ժամանակ ուրոյն սովորութիւններ և ունակութիւններ ընդունած և կեանքի ուղղութիւն մը արդէն որդեգրած են : Կարելի՞ բան է որ այս երկու ինքնուրոյն ապրելակերպերը իրարու յար և նման ըլլան : Մէկ կամ մի քանի կէտերու մէջ անտարակոյս բաղխում յառաջ պիտի գայ : Ո՞ր կողմը տեղի տալու է : Իւրաքանչիւրն իր կերպը կը նախընտրէ և, որովհետեւ « ունակութիւնը երկրորդ ընութիւն » եղած է, զայն բեկանելը՝ եթէ ոչ անհնարին՝ գէթ խորունկ վէճք մը պիտի բանայ սրտին մէջ և հակառակութեան ու ատելութեան հիմը դնէ :

Ասկէ տարբեր է, սակայն, այն մտատիպար ամուսնութիւնը, որ կը կնքուի կորովի երիտասարդի մը և դեռատի օրիորդի մը միջև : Հոս այր և կին նոյն ճաշակները և նոյն փափաքները ունին : Կեանքի վայելքներուն նոյն եռանդով կը փարին : Որովհետեւ երկուստեք խորապէս և լիովին կ'ըմբռնան զանոնք, հաճոյքներուն քանակը կը կրկնապատկուի : Անցեալին զուգորդութիւններովը չեն վրդովիր : Ամէն բան նորութիւն է երկուքին համար հաւասարապէս : Եթէ երբեք խընդ-

րոյ մը առթիւ անհամաձայնութիւն ծագի, դիւ-  
րաւ մին կամ միւսը կրնայ տեղի տալ: Այսօրի-  
նակ ամուսնութիւնը հաճոյալի ճամբորդութեան  
մը նման է, որ հանգրուանէ հանգրուան նոր տե-  
սարաններ կը պարզէ ուղեւորներուն առջև և նոր  
բերկրութիւններով կը պարուրէ անոնց սրտերը:

Տարիքի տարբերութեան համար ալ մասնա-  
ւոր կանոն մը դնել կարելի չէ: Բայց յայտնի է  
թէ այրը կնոջմէն միշտ աւելի տարիքով ըլլալու է,  
և չորսէն եօթը տարիի տարբերութիւնը բնական  
համեմատութիւնը ըլլալ կը թուի:

Երկրորդ՝ ապրուստի խնդիրը:

Երիտասարդ մը անշուշտ ամուսնանալու իրա-  
ւունք չունի մինչև որ արհեստ մը սորված, գործ  
մը ապահոված, կամ դրամագլուխ մը շինած չըլ-  
լայ: Իր ուսման ընթացքը չաւարտած՝ դպրոցա-  
կան սլատանին պէտք չէ որ ամուսնանալու և ոչ  
իսկ նշանուելու խորհուրդը տածէ: Իր միտքը բո-  
ւրովին իր դասերուն նուիրուելու է: Չկրնար յա-  
ջողութիւն ակնկալել, երբ ունենայ կին մը կամ  
խօսեցեալ մը որ իր ուշադրութիւնը շարունակ  
հակառակ կողմը կը դարձնէ: Ոչ ալ երիտա-  
սարդ մը ամուսնանալու է երբ տակաւին արհեստի  
մը կը ծառայէ: Անպատեհութիւնը ըստ բաւա-  
կանի դրամ ունենալ կամ չունենալուն մէջ չէ.  
մինչև իսկ եթէ հարուստի զաւակ ըլլայ, իր ար-  
հեստը լաւ մը չսորված և իր գործին տէրը չեղած՝  
ամուսնանալը խոհեմութիւն չէ:

Սակայն ոմանք ալ միւս ծայրայեղութեան  
կ'երթան: Չեն ուզեր ամուսնանալ մինչև որ,  
ինչպէս իրենք կ'ըսեն, « գիրք մը չլինեն: »  
Չեմ գիտեր թէ ինչ ըսել կ'ուզուի այս տարտամ  
նախադասութեամբ: « Դիրք մը չլինել » խօսքը  
կրնայ տարբեր առումներով գործածուիլ: Եթէ  
դրամագլուխ մը չլինել կը նշանակէ, ինչ է ասոր  
սահմանը: Հարիւր ոսկիէն մինչև հինգ հազար  
ոսկի կրնայ այս երկրին մէջ դրամագլուխ մը  
նկատուիլ: Բայց եթէ անկախ գործ մը ըսել կ'ու-  
զուի, հոս ալ գործին տեսակը նկատողութեան  
առնել պէտք է: Կայ գործ, որ առանց անկախ  
ըլլալու շահարբեր է և գոհացուցիչ վարձատրու-  
թիւն ունի:

Այս պատճառաբանութիւնը ընողներուն նը-  
կատմամբ էն ուշադրաւ բանը այն է որ անոնք  
թէև տարիներէ ի վեր դիրք մը չլինելու կը հե-  
տամտին, բայց տակաւին անոր չեն տիրացած:  
Անպատաներուն մէջ երբեմն տեսնուած կրկնե-  
րեւոյթի խաբուսիկ տեսարանին պէս, որչափ  
անոր կը մօտենան, կարծես ան նոյնչափ իրենցմէ  
փախուստ կու տայ: Կը ճանչնամ երիտասարդներ  
որ 14-15 տարիներէ ի վեր կ'աշխատին կը տքնին  
և տակաւին իրենց երեւակայած այդ դիրքը չեն  
չինած: Ընդհակառակն կան ուրիշներ ալ որ իրենց  
համետ փիճակէն գոհ լինելով՝ երբ համետ ա-  
մուսնութիւն մը կնքած են, հրաշիւք իմն կարծես  
դիրք, տուն, երջանկութիւն իրենց ոտքը եկած



է : Գերբնական բան մը չկայ ասոր մէջ : Հոգե-  
բանօրէն բացատրութիւնը խիստ պարզ է : Որչափ  
ժամանակ որ մարդ չէ ամուսնացած՝ ինքզինք  
ազատ կ'զգայ, կ'ընէ այն բաները զորս պիտի  
չընէր եթէ ամուսնացած ըլլար : Իր դրամը կը  
մնսէ անհաշիւ : Բնաւ օր մը մտքէն չանցնէր կտոր  
մը կարասի առնել և տուն մը շտկել : Ի՞նչ բանի  
պիտի ծառայէ ան քանի որ ընտանիք չունի : Իր  
վաստակը օգտակար և մնայուն բաներու համար  
տալ չգիտեր : Երբեմն կը պատահի որ գրպանը  
40-50 ոսկի կը հաւաքուի : Ի՞նչ ընելու է : Ըն-  
տանիք չունի որ ստիպուի անոր համար օգտակա-  
րապէս գործածել զայն, զաւակներ չունի որոնց  
ապագային համար խորհուրդ ունենայ, ուստի հե-  
տաքրքրական առարկայ մը կը տեսնէ շուկան և  
ծախու կ'առնէ, կամ ճամբորդութիւն մը կ'ընէ  
և շուայօրէն կը ծախսէ, և կամ թերեւս կարօտ  
բարեկամի մը վատահութեան զոհ կ'երթայ : Ամիս-  
ներու խնայողութիւնը այսպէս սնտաի կերպով կը  
վատնուի և քիչ ժամանակի մէջ անյայտ կ'ըլլայ :

Ամուսնացեալ երիտասարդին վիճակը ասկէ  
տարբեր է : Անիկա ինքզինքը պատասխանատուու-  
թեան տակ կ'զգայ : Հաստատ և անփոփոխ կեանք  
մը ապրիլ կ'սկսի : Դրամ աւելցնելու և ապագայ  
պատրաստելու կը նայի : Գիտէ թէ իր զաւակնե-  
րուն կարօտութիւնը լեցնելու համար դրամի պէտք  
ունի, և ուստի իր ծախքերուն մէջ զգուշաւոր,  
հաշուող և խնայող կ'ըլլայ : Առանց նպատակի դահե-

կան մը իսկ գրպանէն դուրս չհաներ : Կան ամուրի  
երիտասարդներ որ ամսական 10-12 ոսկի թոշակ  
կ'առնեն : Այսու ամենայնիւ ամսոյն վախճանին ոչ  
միայն զայն լրացուցած են, այլ մանր մունր ծախ-  
քերու համար բարեկամներէ փոխ կ'առնեն : Միւս  
կողմէ այդ նոյն գումարը և թերեւս աւելի պա-  
կաս առնողներ ընտանիք կը հոգան, զաւակներ կը  
մեծցնեն և ապահովագրութեան համար ալ փոքր  
ինչ դրամ կը վճարեն : Ի՞նչ է ասոր գաղտնիքը :  
Ո՛հ, գաղտնիք չկայ խնդրոյն մէջ : Այս հրաշքը  
գործողը պատասխանատուութիւն կոչուած այդ-  
մոգական բառն է : Անոր աղբեցութեան տակ  
մարդ անտեսագէտ, հաշուագէտ, հեռատես,  
ինքնագիտակից և արթուն կ'ըլլայ, իսկ անկէ  
զերծ եղողը այս պատուական յատկութիւններէն  
ալ զուրկ կը գտնուի :

Ամուսնացեալ երիտասարդին մի ուրիշ մաս-  
նայատկութիւնն ալ այն է թէ անիկա իր գործին  
աւելի եռանդեամբ կը փարի : Զայս գիտնալով  
գործատէրեր յաճախ ամուսնացեալ պաշտօնեա-  
ներ կը փնտռեն : Անիկա դիւրաւ իր գործը չթո-  
ղուր : Աղէկ հաշիւ չըրած՝ քայլ չառնէր : Մի քանի  
օրուան անգործութիւնը աղետարբեր պիտի ըլլայ :  
Իր ընտանեաց և զաւակներուն սիրոյն համար  
գործի կը կառչի իր բոլոր զօրութեամբը, բոլոր  
սրտովը և բոլոր հոգիովը, և արդիւնքը անվրէպ  
յաջողութեան կը յանգի :

Հարստութիւն . դիզելու փափաքը սահման

չունի : Մարդ որքան դրամ ունենայ՝ այնքան աւելի ունենալու փափաք կ'արթննայ իր մէջ : Ենթադրենք թէ երիտասարդ մը նոր գործի սկսած առեն կը կարծէ թէ դրամագլուխ ընելու համար յիսուն ոսկի բաւական է : Մէկ երկու տարի կ'աշխատի և զայն կ'աւելցնէ : Գո՛հ է հիմա : Ամենեւին : Յիսուն ոսկին ստանալէն յետոյ շատ ճղճիմ գումար մը կը համարի զայն : Գոնէ հարիւր ոսկի ընեմ կ'ըսէ և նորէն գործի մէջ կ'ընկղմի : Մի քանի տարի կը շարունակէ աշխատիլ : Հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր ոսկի կը հաւաքուի դրամատունը : Ի՞նչ կը կարծէք . այլեւս յագեցած է անոր ընչաքաղցութիւնը : Ո՛չ : Այս ալ բաւական չսպեր : Գրամի հետ բարձրացած է նաև ճաշակը , աւելցած են պահանջները : Հիմա հասարակ սենեակի մը մէջ չկրնար բնակիլ . լաւ կահաւորուած երկու կամ երեք սենեակ կը պահանջէ : Համեստ ճաշարաններուն կերակուրները իր ախորժակին չեն դար , պէտք է բարձրագին տեղեր յաճախել : Հանրակառքով ճամբորդելը իր արժանապատուութեան կը դպչի , պէտք է կառք վարձել : Ո՛հ , այս եղած է միշտ մարդկութեան փորձառութիւնը անցեալին մէջ , և որչափ ժամանակ որ մարդը մարդ պիտի մնայ և հրեշտակի պիտի չփոխուի , գոնէ այս աշխարհի վրայ , նոյն փորձառութիւնը պիտի շարունակուի ապագային մէջ : Երբեք ձեր մտքէն չէք անցուցած թէ , եթէ հինգ հազար ոսկի ունենար , ալ գործէ պիտի քաշուիք և խաղաղ կեանք

մը ապրիլ սկսիք : Բայց ահա հինգ հազար , տասը հազար ոսկի ունեցողներ ձեզի ցուցնեմ որ ձեզի չափ և թերեւս ձեզմէ ալ աւելի չարաչար կ'աշխատին : Միլիոնատէրները գո՛հ են : Պողոս փաշա գործէ քաշուած է այլեւս : Բովանդակ տարեգրութեանց մէջ տակաւին չէ գտնուած մարդ մը որու աւելի ունենալու փափաքը յագեցում գտած ըլլայ , և որ ըսէ , « Ա՛լ չեմ ուզեր ունենալ » :

Կամ առնենք այսօրինակ երիտասարդի մը ամուսնութեան համար շինած ծրագիրը : Դեռ չհարստացած՝ կը կարծէր թէ այսինչ արհեստաւորին աղջիկը իրեն յարմար կին մը կրնար ըլլալ : Սակայն հիմա աւելի ընչեղ դասակարգին դարձուցած է իր աչքը : Չէ՞ որ ինք ալ արդէն հարուստ կը սեպուի իր մի քանի հարիւր ոսկի դրամագլխով : Այս մտածումներով քաղաքին էն բարձր գերդաստաններէն միոյն կը ներկայանայ և անոնց աղջկան ձեռքը կը խնդրէ : Յուսախաբութիւնը մեծ կ'ըլլայ երբ քաղաքաւար մերժումի մը կը հանդիպի : Այս անգամ կ'որոյչէ շամուսնանալ մինչև որ նիւթականը այնքան բարւոքի որ կարող ըլլայ ուզած ընտանիքէն աղջիկ առնել : Տարիներու քրտնաջան և անխոնջ աշխատութեամբ վերջապէս իրական կերպով կը հարստանայ , յաջող գործի մը տէր կ'ըլլայ , նախանձելի դիրք մը կը գրուէ և հրապարակի վրայ պատուական անուն մը կը շահի : Բայց , աւանդ , կեանքը հիմա տարբեր երեւոյթ մը ստացած է : Երիտասարդական փափաք

ները մարած են, մարմնոյն այլևայլ մասերը տկարութեան նշաններ ցոյց կու տան, ծերութեան հետքերը երեւնալ կ'սկսկին, և կը գտնէ թէ... ամուսնանալու համար շատ ուշ մնացած է:

Ասոր ճիշդ հակապատկերը կը ներկայացնէ այն երիտասարդը որ իր առնելիք աղջկան հետ դրամոտիտ կը պահանջէ: Ան որ մինչև երեսուն, երեսունեւհինգ տարիքը տակաւին դրամի տէր եղած չէ, կը փափաքի իր կնոջ դրամին տէր ըլլալ: Ան որ մինչև այդ տարիքը մարդ եղած չէ, կ'ուզէ իր առնելիք աղջկան երեսէն մարդ ըլլալ: ԱՅՐ անուան արժանի չէ երիտասարդը որ նշանուելու ատեն դրամոտիտի խօսք կ'ընէ: Աղջկանց ծնողքը, ոմանց կարծածին չափ, ապուշ չեն: Անոնք անմիջապէս կը դուշակեն նկարագրի չգոյութիւնը, կորովի նուազութիւնը և արժանապատուութեան բացակայութիւնը դրամոտիտ պահանջող անհատին վրայ: Մարդ կրնայ վստահ ըլլալ թէ ան որ չունի իր մէջ դրամագլուխ մը չինելու, շահարեր գործ մը ստեղծելու չափ ձեռներէց և անկախ ոգի, իր կնոջմէն ընդունած դրամն ալ պիտի չկարենայ ըստ արժանւոյն գործածել և բազմապատկել, և ուշ կամ կանուխ պիտի կորսընցնէ զայն:

Դրամոտիտ փնտուող երիտասարդը տակաւին ամուսնութեան նշանակութիւնը չէ ըմբռնած: Անոր զգացումները այն աստիճան չլացած են որ ամուսնական կեանքի նուիրականութիւնը և վեհութիւնը

իրեն համար արժէք չունին: Անիկա շնական փիլիսոփայութեան հետեւող մըն է: Ամէն բան գծուծ շարժաւիթներով մեկնել վարժուած է: Ամուսնութիւնը լոկ առեւտուր մը կը նկատէ. անոր մէջ սէր ըսուած բանը գոյութիւն չունի: Ամուսնանալ կ'ուզէ ոչ թէ որովհետև սրտին մէջ անոր համար կարօտութիւն մը կ'զգայ, այլ որովհետև ուրիշին դրամով հարստանալ կը փափաքի: Անիկա ինքնահաւան յիմար մըն է: Համարումը զոր ունի իր անձին վրայ՝ իրեն կարծել կու տայ թէ որեւէ հարուստ պարոն հազարաւոր ոսկիներ պիտի տայ, զայն իր աղջկան ծախու առնելու համար: Ինչպէս որ մարդ մը իր անասունը աճուրդի կը հանէ, դրամոտիտ ուզող երիտասարդն ալ իր անձը ծախու կը դնէ: Երկուքին միջև եղած տարբերութիւնը խիստ քիչ է:

Ի՞նչպէս կրնայ կին մը սիրել, յարգել և պատուել իր ամուսինը, կամ հնազանդիլ անոր, երբ գիտէ թէ հայրիկը զայն իր հաճոյքին համար ծախու առած է: Կատարեալ իրաւունք ունի անոր հետ այնպէս վարուելու ինչպէս պիտի վարուէր իր մէկ ստացուածքին հետ: Գրեթէ առածի կարգանցած է թէ, երբ կին մը դրամ ունի, չկրնար հպատակիլ իր էրկան: Առն և կնոջ միջև համակրութիւն և ցաւակցութիւն չեն կրնար գոյութիւն ունենալ: Երբ այսինչ մէկ կարօտութիւնը ամուսինը չկարենայ լեցնել, կինը իր դրամով կը հողայ զայն: Արդիւնքը կ'ըլլայ արհամարհանք դէպ էրիկը:

Կնոջ անկախութեան գիտակցութիւնը կը վրդովէ ընտանեկան հանդիստը և դժոխոց վայր մը կը դարձնէ զայն : Հապա՞ եթէ այնպէս պատահի, ինչպէս ստէպ կը պրասահի, որ ամուսինը կար- սընցնէ կնոջմէ ընդունած դրամը . . . : Ա՛լ, եր- թաք բարեաւ, խաղաղութիւն, միաբանութիւն, երջանկութիւն : Կը նախատուի խեղճ մարդը ոչ միայն իր կնոջ՝ այլ նաև անոր աղգականներուն կողմէ, այն աստիճան որ կեանքը անտանելի կ'ըլ- լայ : Զաւակներն իսկ չեն յարգեր զանիկա : Գիտ- նալով թէ դրամին քսակը մօրը քով կը դռնուի, անոր կը յարին, զայն կը պատուեն :

Հարուստ գերդաստանի մը դուստրը, դրա- մօժիտ ունեցող օրիորդը, արդարև բազմաթիւ թեկնածուներ կ'ուենենայ, բայց այդ բանին հա- մար պարծենալու պատճառ չունի : Ինաւ չկըր- նար վստահ ըլլալ թէ զինք կնութեան ուղող երիտասարդը իր ձեռքը կը խնդրէ թէ այդ ձեռքին մէջ դռնուած ընկալազիրը դրամատան : Հարուստ օրիորդի մը վրայ կարգացած եմ թէ կ'ողբար իր հարստութեանը համար, որովհետև բնաւ չէր կրնար հասկնալ իրեն ներկայացող թեկ- նածուներուն բուն շարժառիթը : Կրնայ ան անձ- նական առաւելութիւններ ունենալ գեղեցկու- թեամբ, առողջութեամբ, պարկեշտութեամբ և դաստիարակութեամբ օժտուած ըլլալ, բայց, ի՞նչ օգուտ, շատ հաւանական է որ զինք ընտրողները ասոնց և ոչ մէկուն կարեւորութիւն կ'ընծային :

Անոնք սիրահարած են ոչ թէ իր անձին, այլ իր հարստութեան, իր « սուրբ գէորգներուն » : Աղ- ջըկան մը համար դրամօժիտ ունենալ դժբաղդու- թիւն մը պէտք է համարիլ : Խոհեմ ծնողքը բնաւ թող պիտի չտայ որ իր դուստրը անձնական դրամ ունենայ դրամատան մէջ, և իր ողջութեանը որևէ կալուած անոր անուանը պիտի չփոխանցէ, և կտրու- ղական պատասխանով մը պիտի մերժէ ամէն թեկ- նածու, ի՞նչ արժանիքի տէր ալ երեւնայ արտա- քուստ, որ դրամօժիտի խօսք կ'ընէ :

Երիտասարդները չարաչար կը սխալին երբ կը կարծեն թէ ժամանակին պահանջն է, նորաձե- ւութիւն է դրամօժիտով ամուսնանալ : Առնակա- նութեան տէր որևէ անհատ պիտի չատորնացնէ ինքզինքը այսպիսի ամուսնութեամբ մը : Աւելի լաւ է որ մարդ ունենայ աղքատ աղջիկ մը իբր կին որ կարենայ զինքը սիրել, յարգել և իրեն նայել իբր իր մեծաւորին, գերագունին, քան հարուստ կին մը որ շարունակ յիշեցնէ իր աղքատութիւնը և խոնարհ վիճակը, « զի այր է զլուխ կնոջ » :



Ը.

### Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Առն և կնոջ միջև գաղափարակցութեան հարցը որքան որ կարեւոր, այնքան ալ դժուար է լուծել՝ ամուսնութենէ առաջ: Գաւառներուն մէջ՝ ուր հնաւանդ սովորութեան համեմատ տղամարդը կ'ամուսնանար իր ծնողաց ընտրած նորահաս աղջկան հետ, այս խնդիրը հազիւ թէ ուշադրութեան առարկայ կը դառնար: Երկրորդն՝ գեւառտի և անփորձ՝ չէին ունենար իրաց վրայ կանխակալ կարծիքներ և գաղափարներ, և փորձառութեան բաժակը միատեղ ըմպելով՝ կեանքի կնճռոտ հարցերուն նկատմամբ նոյն տեսութիւնները կը կազմէին: Սակայն հոս պարագաները աարբեր են: Յաճախ ծնողաց և աղգականաց աջակցութենէն իսկ զուրկ է երիտասարդը: Անիկա պարտի անձամբ գտնել իր ապագայ կենսակիցը: Եւ որպէս զի այս մասին սխալ մը չգործուի, պէտք է նախ մտադրուած օրիորդին և անոր պատկանած ընտանիքին հետ յարաբերութիւն մշակել և հնար եղածին չափ անոր բնաւորութեան, ապրելակերպին և գաղափարներուն հըմտանալ և յետոյ որոշ առաջարկութիւն մը ներկատանալ և յետոյ որոշ առաջարկութիւն մը ներկայացնել: Նշանուելու սովորութիւնը կրնայ այս

խնդրոյն մեծապէս սատարել: Մանչ և աղջիկ ժամանակ մը իրարու հետ աւելի մօտէն և նուազ վերապահութեամբ ընկերակցելով կրնան աստիճան մը ղերար հասկնալ և փոխադարձաբար համողում գոյացնել թէ կարելի պիտի ըլլայ ապագային մէջ իրարու հետ սիրով և միաբանութեամբ կենակցիլ: Աւելի աղէկ է նշանը բեկանել, երբ տեսնուի թէ ընտրութիւնները իրարու հակառակ են, բաղձանքները հակոտնեայ ուղղութեամբ մը կ'ընթանան, քան թէ ամուսնանալ և ցկեանս դժբաղդ և թշուառ լինիլ:

Իայց այս պարագային մէջ ալ թիւրիմացութիւնները անպակաս են: Նշանախօսութեան ժամանակը երբեմն այնչափ կարճ կ'ըլլայ որ հազիւ պատահութիւն կը տրուի շփման և ճանաչումի: Եւ արդէն այս ժամանակա-կիջոցին՝ խօսեցեալները այնպիսի փափկանկատութեամբ և շրջահայեացութեամբ կը վերաբերուին իրարու հետ որ անկարելի կ'ըլլայ անոնց յոռի կողմերը գտնել: Մանաւանդ իգական սեռը այս մասին խիստ ճարպիկ է: Անիկա իր թերութիւնները սքօղելու արտաբոյ կարգի տաղանդ մը ունի: Ոչ միայն մի քանի ամիսներու, այլ մինչև իսկ տասնեակ մը տարիներու կենակցութիւնը երբեմն չէ կրցած անոնց բուն էութիւնը ի յայտ բերել: Կան ամուսիններ որ թէև երկար ժամանակէ ի վեր ամուսնացած են, չափահաս զաւակներ ունին, այսու ամենայնիւ տակաւին կատարելապէս չեն հասկցած իրենց

կողակցին ներքին վիճակը : Տարիներ յետոյ անոր վրայ նկարագրի այնպիսի դժեր, զգացումի, կարողութեան, թերութեան այնպիսի նոր երեւոյթներ կը գտնեն որ արդարեւ զարմանալի են :

Մակայն դաղափարակցութեան հարցը դիւրացնելու համար յետագայ մի քանի արտաքին պարագաները նկատողութեան առնել օգտակար կրնայ ըլլալ :

Նախ կրթութիւնը եւ դասակարգը : Եթէ կարելի է՝ առն և կնոջ դաստիարակութիւնը համեմատական աստիճան մը ունենալու է և անոնք նոյն դասակարգին պատկանած ըլլալու են, հակառակ պարագային դժուար կ'ըլլայ անոնց մէջ համերաշխութիւն դոյացնել և րհեստաւորին՝ արհեստաւորի հետ, դպրոցականին դպրոցականի հետ, և մեծատան որդիին հարուստի դստեր հետ համաձայնելու հաւանականութիւնը աւելի մեծ է : Եթէ երկուքէն մին անուս և սոգէտ ըլլայ, ընտանեկան ներդաշնակութիւնը կը խանգարի :

Մանաւանդ կինը ամուսինէն ուսեալ ըլլալու չէ : Անպատշաճ է որ անիկա իր էրկան վրայ վերէն նայի : Դպրոցական կինը, եթէ հոգւոյ ազնուութիւնը և սրտի մշակութիւնը չունի, իր արհեստաւոր էրկը անգոսնելու վտանգին մէջ կը գտնուի : Ի՞նչ տգեղ բան է, օրինակի համար, օտարի մը հետ, անոր չհասկցած մէկ լեզուովը խօսիլ ու խնդալ, շաղակրատել և կատակաբանել : Ո՞ր այր մարդու արժանապատուութիւնը

պիտի չվիրաւորուի և ինքզինքը նախատուած պիտի չզգայ իր կնոջ այս ընթացքէն : Բայց յանցանքը որչափ որ կնոջ, նոյնչափ ալ մարդուն է որ իրմէ բարձր կրթութիւն ընդունած աղջկան մը հետ ամուսնանալու անխոհեմութիւնը ըրած է : Կասկածները շատ անգամ այսպէս ծնունդ կ'առնեն սրտին մէջ և կռիւի ու երկպառակութեան կ'առաջնորդեն : Նոյնպէս երբ աղջիկ մը իր հօրը տանը մէջ տեսածները իր ամուսնոյն տան մէջ չկրնար գտնել, երբ հոն սովորաբար վայելածներէն հոս ստիպուած է զրկուիլ, դժբաղդ և դժգոհ կ'ըլլայ և իր նախնական սէրը տակաւ առ տակաւ պաղիլ կ'սկսի : Որևէ պարագայի տակ մտատիպար ամուսնութիւն մը կնքել ուզողները ուշադրութիւն ընելու են որ իրենց ընտրած աղջիկը ոչ դաստիարակութեամբ, ոչ կենցաղով և ոչ ալ զարգացմամբ իրենցմէ բարձր մակարդակի մը վրայ գտնուի : Իր կնոջ յարգանքը կարենալ գրաւելու համար, էրկան նոյն և թերեւս բարձրագոյն դասակարգի մը պատկանիլը անհրաժեշտ է :

Պանդուխտ երիտասարդները աղէկ կ'ընեն իրենց քաղաքակցի ընթացիկ մը աղջիկ առնելով : Չայս կը յանձնարարենք ոչ այն անձկամիտ նկատումով, ինչպէս ոմանք կ'ընեն, թէ օր մը կրնայ ըլլալ որ անոնք երկիր վերադառնան, և դժուարութիւն չծագելու համար նոյն քաղաքէն ըլլալու են, այլ՝ դաղափարակցութեան տեսակետով : Առն և կնոջ քաղաքակցի ըլլալու խնդիրը

մեր երեւակայածէն աւելի կարեւոր է : Մենք  
 Հայերս այս մասին Եւրոպացիներէն տարբեր վի-  
 ճակ մը ունինք : Անոնց համար բաւական է որ  
 այր և կին աղգակից ըլլան : Ծննդավայրի նոյնու-  
 թիւնը կամ զանազանութիւնը տարբերութիւն  
 չընեն : Անգղիացի երիտասարդ մը կ'ամուսնանայ  
 Անգղիացի օրիորդի մը հետ առանց հաշիւ ընելու  
 թէ անիկա իր ծնած քաղաքէն է թէ ոչ : Նոյն-  
 պէս Մարսիլիացի երիտասարդը որեւէ անյարմա-  
 րութիւն չտեսներ Փարիզցի օրիորդի մը հետ  
 իր ամուսնութեան մէջ : Անոնց սովորութիւնները ,  
 լեզուն և ապրելակերպը նոյն են երկրին ամէն  
 կողմը հաւասարապէս : Մակայն մեր երկրին մէջ  
 պարագաները տարբեր են : Փոխադրութեան դժ-  
 ուարութեանց բերմամբ ոչ միայն իւրաքանչիւր  
 նահանգ , այլ մինչև իսկ իւրաքանչիւր քաղաք և  
 աւան , օրերով ճամբու հեռաւորութեամբ իրարմէ  
 անջատուած ըլլալով՝ այնպիսի սովորոյթներ որ-  
 դեգրած է որ օտարոտի կը թուին երկրին միւս  
 մասերուն մէջ : Լեզուի , խօսակցութեան , ոճի ,  
 դգեստի , կերակուրի , ընտանեկան սովորութիւն-  
 ներու , ընկերական յարաբերութիւններու այնպիսի  
 զանազանութիւններ կան քաղաքէ քաղաք որ յաճախ  
 աւելի կը շեշտուին անոնք քան Եւրոպացի աղգերու  
 միջև եղած տարբերութիւնը : Երբ այս քաղաքնե-  
 րէն հաւաքուած գաղթականութիւն մը կը կազ-  
 մուի , անոր անհատներուն մէջ միաբանութիւն  
 գոյացնել դժուար կ'ըլլայ : Այս է պատճառը որ

արտասահմանի մէջ մեր ժողովուրդները խուճրե-  
 րու բաժնուած կը տեսնենք : Արաբկիրցիները զատ ,  
 Այնթապցիները զատ և Կեսարացիները զատ  
 շրջանակներ կը կազմեն : Անոնք շատ քիչ անգամ  
 իրարու հետ ընտանեկան յարաբերութիւն կը  
 մշակեն : Հետեւաբար անոնց մէջ փոխադարձ  
 խնամութիւնը խիստ հազուադէպ է : Մանաւանդ  
 գաւառացի երիտասարդը դժուարաւ կը համա-  
 ձայնի Պոլսեցի կամ Զմիւռնիացի օրիորդին հետ ,  
 եթէ երկար ժամանակ այդ քաղաքներուն մէջ  
 ապրած չէ : Մեր գաղութը հասարակաց սովորու-  
 թիւններ որդեգրելու , իրարու հետ դիւրաւ կա-  
 րենալ խառնուելու , մէկ խօսքով՝ եզիպտահայ  
 ըլլալու համար գոնէ սերունդ մը անցընելու է :

Այս մեր ըսածներէն կրնայ հետեւցուիլ թէ  
 այդ ազգաց աղջիկներուն հետ ամուսնութիւնն  
 աչ բնականաբար անտարբեր աչքով չենք կրնար  
 նկատել : Իրողութիւնը այն է թէ օտար ամուս-  
 նութիւնը այս երկրին մէջ կ'սպառնայ վտանգ  
 մը ըլլալ Հայ երիտասարդութեան : Գահիրէի և  
 Աղեքսանդրիոյ մէջ տեղացի տարրէն զատ կը  
 գտնուին մեծ թուով Յոյներ , Իտալացիներ ,  
 Սիւրիացիներ , Մալթէզներ , որոնք իբր Բրիտ-  
 տոնեայ ազգեր մեր հետ շարունակ շփման մէջ են :  
 Անոնց տուները փորձութեան մէյմէկ թակարդ-  
 են : Հայ երիտասարդը անոնց տան մէջ սենեակ  
 կը վարձէ , անոնց աղջկան հետ կը ծանօթանայ ,  
 և վերջ ի վերջոյ անոր հետ ամուսնանալ կ'ըս-

տիպուի : Այս օրինակ ամուսնութիւններէն քիչերը երջանիկ արդիւնք ունեցած են : Յարաբերութիւնը պարզ բարեկամութեամբ կ'սկսի , յետոյ սիրոյ կը փոխուի , պղծութեամբ իր ճգնաժամին կը հասնի և անյարմար կամ բռնի ամուսնութեամբ մը կը վերջանայ : Միայն մի քանի օր առաջ այս դէպքերէն մին կարգադրելու տխուր պարտականութեան տակ գտնուեցանք : Մանչը նախ բնաւ նպատակ չունէր իր Սիւրիացի դրացւոյն աղջկան հետ պարզ բարեկամութենէ մը անդին անցնելու , բայց օր ըստ օրէ անոնք աւելի մտերմացան , մինչև որ խորամանկ աղջիկը իր ցանցերովը պատեց զայն և իր հետ ամուսնանալու խոստում առաւ անկէ : Տղուն եղբայրը և բարեկամները իմանալով արդիւնը աշխատեցան , և ժամանակ մը այնպէս թուեցաւ թէ պիտի յաջողէին : Բայց աղջկան մայրը աւելի ճարպիկ գտնուեցաւ : Անմիջապէս կառավարութեան լուր տուաւ , և մինչ տղան կը պատրաստուէր այդ տունէն հեռանալու , ձերբակալուելով բանտ նետուեցաւ : Այլեւս ուրիշ ճար չկար . կա'մ օրինական պատիժը կրելու և կա'մ պսակուելով անկէ ազատուելու էր : Վերջինը ընտրել խոհեմութիւն սեպուեցաւ :

Ասկէ պէտք է դաս առնեն երիտասարդները և զգուշանան իրենց դրացի աղջիկներէն : Անոնց հետ բարեկամութիւն մշակելը ամենամեծ սխալ մըն է : Մինչև իսկ իրական վրաս մը չգտնուած ատեն զրպարտուելու վտանգը կայ , և ձեզի համար

հակառակը ասպացուցանել անկարելի է : Ո՞վ գիտէ՞ քեզմէ առաջ որո՞ւ հետ գտնուած է , որ սրիկային իր պատիւը ծախած է . բայց որովհետև հիմա քեզ ունի իր ձեռքին մէջ , քեզ իր որոգայթին մէջ ձգած է , օձիքէդ թող չտար : Կը յիշեմ երիտասարդ մը , որ նոյնպէս ստիպուեցաւ ամուսնանալ իրմէ շատ աւելի տարիքոտ , տղեղ և իր էրիկը ձգած կնկան մը հետ , որովհետև անոր տան մէջ երկար ժամանակ վարձուոր եղած էր : Ուրիշ մը , հաղիւ 25-27 տարեկան , քիչ մնաց Իտալացի պառաւ կնոջ մը զոհ պիտի երթար , եթէ մայրը ժամանակին երկրէն չգար և չաղատէր իր որդին անոր ճիրաններէն :

Այս այլազգի կիները չունին այն համեստութիւնը , ամթթխածութիւնը և կանացի վերապահումը որ մեր Հայ աղջիկներուն էն պատուական զարդերն են : Անոնք չափազանց համարձակ և ազատակենցաղ են : Ընտանեկան սրբութիւններու վրայ կը խօսին անպատկառ լեզուով մը : Սոսկալի է դիտել անոնց վարմուկը կառավարական պաշտօնեաներուն և կոշտ ոստիկաններուն առջև , երբ խնդիրը այդ տեղերը կը հասնի : Բարձրաձայն կ'աղաղակեն և իրական ու անամօթ բռուերով կը նկարագրեն գաղտնի յարաբերութեան բոլոր մանրամասնութիւնները : Ո՞հ , ոչ մի Հայ երիտասարդ , մինչև իսկ ամէնէն վատասերածը , պիտի չուզէր կեանքի ընկեր ընտրել այսպիսի լկտի կին մը , եթէ սկիզբէն հասկնար անոր ի՞նչ ըլլալը :



Ուստի խորհուրդ կու տանք անոնց, սենեակ վարձելու ատեն, մանրակրկիտ քննութիւն մը կատարել, գտնել թէ ո՞վ կայ տան մէջ, որո՞նք են դրացիները, ի՞նչ նկարագրի տէր է տան տիրուհին: Բնաւ մի վարձէք անխտրաբար որեւէ սենեակ որուն պատահանին վրայ Chambre Meublée գրուած տեսնէք: Այս անմեղ և անվնաս երեւցած ծանուցումով յաճախ բողանոց է որ կը հրաւիրուիք: Անոնցմէ շատեր կասկածելի վայրեր են: Խոհեմ երիտասարդը ոչ միայն պիտի չընտրէ՝ բնակութեան համար՝ այն տունը որուն մէջ կը գտնուին անպարկեշտ կիներ, այլ նաև պիտի հրաժարի այն բոլոր տուներէն ուր կը բնակին չափահաս աղջիկներ, որոնց հետ առօրեայ շփում ունենալ ստիպուած է:

Օտար ամուսնութեանց վրայ խօսելու ատեն կէտ մը կայ որ լուսաբանութեան կը կարօտի: Անշուշտ կան այնպիսիներ որ օտար աղգերու աղջրկանց հետ ամուսնացած և կատարեալ հանգիստ ու երջանիկ եղած են: Ամերիկայի և Եւրոպայի մէջ բազմաթիւ Հայեր Ամերիկացի, Անգղիացի, Գերմանացի և Ֆրանսացի օրիորդներու հետ միանալով՝ տիպար ընտանիքներ կազմած են: Պահ մը զանց ընելով այն հարցը թէ աղգասիրական տեղանց ընելով այն հարցը թէ աղգասիրական տեղանց ընելով արգարանալի՞ է անոնց ընթացքը, քընսենք տարբերութիւնը որ գոյութիւն ունի Եւրոպացիներուն և այն աղգերուն միջև որոնցմով չըջապատուած ենք այս երկրին մէջ: Յայտնի է թէ

Եգիպտաբնակ Սիւրիացիները, Յոյները, մինչև իսկ Իտալացիները, բազդատութեան իսկ չեն կրնար գրուիլ վերոյիշեալ աղգերուն հետ: Քաղաքակրթապէս և բարոյապէս անոնք բարձրագոյն մակարդակի մը վրայ կը գտնուին: Երբ Հայը կ'ամուսնանայ, զոր օրինակ, Ամերիկուհիի մը հետ, ստորնագոյն ազգի մը մէկ անհատին հետ չէ որ իր կեանքը կը զոդէ: Այսպիսի միութեամբ մը անիկա իր դիրքէն վար չիջնար, ընդհակառակը, պէտք է խոստովանինք թէ՛ աւելի կը բարձրանայ: Բայց խնդիրը բոլորովին տարբեր կերպարանք մը կ'առնէ, երբ ամուսնութիւնը կը կատարուի Եգիպտաբնակ Սիւրիացի աղջկան մը հետ: Հոս ամէն կերպով Հայն է որ կը տուժէ: Կըթուութեամբ, զարգացումով, ապրելակերպով և բարոյական ըմբռնումներով ահագին տարբերութիւն կայ անոնց միջև: Չայն իր վիճակին բարձրացնել գրեթէ անհնարին է, ուստի Հայը պիտի ստիպուի զոհութիւն ընել, որ այս պարագային ոչ հաճելի և ոչ ալ փափաքելի է:

Դարձեալ, Հայը Եւրոպայի և Ամերիկայի մէջ երկար ժամանակ ապրելէ յետոյ, երբ կ'որդեգրէ տեղոյն սովորութիւնները, կ'ընտելանայ լեզուին, առանց դժուարութեան կրնայ ամուսնանալ տեղացի օրիորդի մը հետ, որովհետև գիտէ թէ ի՞նչ տեսակ տուն մը պիտի կազմէ: Սակայն հոս պարագաները տարբեր են: Մեզ չըջապատող աղգերուն հետ հասարակաց որևէ բան չունինք:

Անոնց ոչ լեզուն մեղի ծանօթ է և ոչ ապրելա-  
կերպը : Միայն մի քանի շաբաթներու տղայամիտ  
սիրահարութիւն մըն է որ մանչ և աղջիկ իրարու  
հետ հազորդակցութեան մէջ դրած է : Ամուսնու-  
թենէ յետոյ այքերու քօղը կ'իյնայ և գործուած  
սխալը իր բոլոր դառն հետեւութիւններովը կը  
պարզուի : Մեղի ծանօթ ամէն այսօրինակ ամուս-  
նութիւններ անյաջող ելք ունեցած են :

Իբր ընդհանուր սկզբունք, ուրեմն, կրնանք  
ըսել թէ ամէն բան նկատողութեան առնելով՝  
ազգակիցներու հետ ամուսնութիւնը նախապա-  
տիւ է :

Կրօնական գաղափարակցութիւնը թէև խիստ  
փափուկ խնդիր մըն է, բայց հաւատարիմ մնալու  
համար մեր ստանձնած դերին, այս մասին ալ  
անկեղծօրէն խօսիլ պարտականութիւն կը սեպենք :  
Վտանգը ոչ-Քրիստոնեայ կրօնքներէն չէ որ մեր  
ընտանեկան խաղաղութիւնը կը վրդովէ : Շատ  
հազուադէպ է որ Հայ երիտասարդ մը Մահմե-  
տական կամ Հրեայ աղջկան մը հետ ամուսնանալ  
ուզէ : Մեր մէջ գոյութիւն ունեցող երեք Քրիս-  
տոնեայ եկեղեցիներու իրարու հանդէպ բռնած  
դիրքէն կը ծագի դժուարութիւնը : Գիտեմ՝ անձ-  
կամիտ և մոլեռանդ կղերականներ, ըլլայ Լուսա-  
ւորչական, Կաթողիկ թէ Բողոքական, որոնք բո-  
լորովին կ'արգելեն միջայարանուանական ամուս-  
նութիւնները : Մենք այդպէս չխորհելով հան-  
դերձ նոյն եկեղեցւոյ զաւակներուն իրարու հետ

ամուսնութեան առաւելութիւններն ալ չենք կրնար  
ուրանալ : Երբ այր և կին տարբեր դաւանանքնե-  
րու կը ծառայեն, անոնց մէջ կրօնական խնդիր-  
ներ շարունակ ծայր կու տան, և երբեմն անհա-  
ճօյ հանգրուաններու կը հասնին : Պսակը որ եկե-  
ղեցին պիտի կատարէ, երախաները ո՞վ պիտի  
մկրտէ, տան երէցը ո՞վ պիտի ըլլայ, և տակաւին  
ասոնց նման հարցեր վիճարանութեան և մերթ  
ալ ընդհարումի պատճառ կ'ըլլան :

Մեր անձնական փորձառութենէն դաս առած  
կրնանք սա ապահով կանոնը յանձնարարել թէ  
կրօնական ինդիքներու մէջ միշտ պէտք է այր մար-  
դուն իրաւատուութիւնը պաշտպանել : Բոլոր եկե-  
ղեցական գործառնութիւնները էրկան կը պատ-  
կանին և անոր եկեղեցին կատարելու է : Խոհե-  
մութիւն չէ ամուսնութենէ առաջ փեսացուն ստի-  
պել և աղջկան պատկանած եկեղեցւոյն մէջ պսակը  
կատարել : Ստիպման տակ տեղի տուած ըլլալով  
կարծես թագուն ոխ մը կ'ունենայ, և ամէն ան-  
գամ որ առիթը ներկայանայ՝ իր կնոջ կրօնական  
զգացումներուն կը հակառակի : Արդէն Գահիրէի  
մէջ անգիր կանոն մը ունինք, որ լուեւայն կը հաս-  
կըցնէ թէ, ամէն անգամ որ երիտասարդ մը այլ  
եկեղեցւոյ պատկանող աղջկան մը ձեռքը կը  
խնդրէ, « Պսակը մանչուն կը պատկանի » :

Չափազանցութեան գացած պիտի չնկատ-  
ուի՞մ արդեօք, եթէ քայլ մըն ալ առնեմ և ըսեմ  
թէ խաղաղութեան և զաւակաց սիրոյն համար

ամուսնութենէ ետքը այր և կին պէտք է որ նոյն եկեղեցին յաճախեն : Եթէ մին կարող ըլլայ սիրով համոզել միւսը իր կողմը յարիլ, բարի և լաւ : Այն ատեն բոլոր վէճի առիթը կը վերնայ : Բայց եթէ սիրով եղած համաձայնութիւն մը կարելի չըլլայ, կինը՝ ինչպէս աշխարհային՝ նոյնպէս եկեղեցական բաներու մէջ իր էրկան հնազանդելու և անոր եկեղեցւոյն անդամակցելու պարտական է :

Անգամ մը որ այս կանոնը ընդունուի՝ դժուարութիւնը ամուսնութենէ առաջ պիտի կարգադրուի : Եթէ աղջիկ մը այն աստիճան խղճամիտ է իր կրօնական հաւատալիքներուն մէջ որ չկրնար զանոնք լքանել, պիտի մերժէ ուրիշ եկեղեցւոյ պատկանող թեկնածուի մը ձեռքը : Բայց եթէ միւս եկեղեցին ալ Գրիստոնէական հաստատութիւն մը կը նկատէ և կը կարծէ թէ կրնայ առանց խղճահարութեան անոր միանալ և հոն իր հոգեւոր կեանքը զարգացնել, կ'ընդունի զայն : Պատկէն վերջը իր իրաւունքները պաշտպանելու ելլել, ոչ միայն կը խանգարէ ընտանեկան հանգիստը, այլ նաև զաւակներուն մտքին մէջ կրօնքի հանդէպ կատկածներ կը յարուցանէ : Անոնց սիրոյն համար խոհեմ ծնողքը իրենց սուտը կրօնական վէճերու թատերավայր ընելէն զգուշանալու են :



Ժ.

### ԱՆՈՒԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ամուսնութեան համար անհրաժեշտ է որ այր և կին առողջ և կորովի մարմին ունենան : Առաջին բանը, զոր երիտասարդը փնտռելու է օրիորդին վրայ, անոր առողջութիւնն է : Հիւանդոտ կինը ընտանեկան յարկին տակ անտանելի վիճակ մը կ'ստեղծէ : Ամուսնական բոլոր հաճոյքները կ'անհետանան և սուտը փոխանակ ուրախութեան և մխիթարութեան վայր մը ըլլալու՝ հիւանդանոցի մը կը վերածուի : Անշուշտ այն հիւանդութիւններուն համար չէ մեր խօսքը որ կանանց յատուկ են և անխուսափելի : Ծննդաբերութենէ առաջ և վերջը շաբաթներով և թերեւս ամիսներով անոր զգացած անհանգստութիւնը Բնութեան խորհրդաւոր մէկ անօրինութիւնն է, որ պարտք կը դնէ այր մարդուն վրայ կարեկցութեամբ զայն թեթեւցնելու աշխատիլ : « Յաւով զաւակ ծնանիս » Աստուածային անօրինութիւնն է կնոջ համար :

Բայց կան հիւանդութիւններ որ կազմային են և փաստակար սեռային յարաբերութեան : Այն աղջիկները որ կը տառապին անբուժելի արգանդի անկանոնաւորութենէ, ծննդական գործարաններու անբնական կազմաւորութենէ և ջղային խանգա-

բումներէ, ամուսնանալու չեն, որքան ալ բազմաթիւ և փափաքելի թիկնածուներ ունենան: Ոչ միայն իրենք երջանիկ պիտի չըլլան ամուսնութեամբ՝ այլ նաև ուրիշներուն ապերջանկութեան պատճառ և վերջ ի վերջոյ ձանձրոյթի և ատելութեան առարկայ պիտի դառնան:

Փոխադարձաբար երիտասարդները կատարելապէս առողջ և ամուսնութեան համար պահանջուած բոլոր կարողութիւններով օժտուած մարմին մը ունենալու են: Երիտասարդութեան յատուկ կարգ մը ախտեր իր վրայ կրող անձը, երբ կ'ամուսնանայ, ուրիշ բան չընէր, բայց եթէ պարզ ոճրագործութիւն: Այս մասին ընթերցողներու ուշադրութիւնը յետագայ բժշկական վկայութիւններուն հրաւիրել կը փափաքիմ:

Նկատելով որ երիտասարդական ախտերու վրայ խօսելու հեղինակութիւնը կը պակսի մեզ, և փոխանակ առողջապահութեան վրայ դրուած գիրքերէ քաղուածներ ընելու, յարմար դատեցինք տեղոյս մեր Հայ բժիշկներուն դիմում ընել և անոնց դաղափարները հաւաքել: Այս նպատակին համար հետեւեալ հարցումները ուղղած ենք, որոնց ազնուաբար պատասխանելու բարեհաճութիւնը ունեցած են չորս կարող բժիշկներ:

Ահաւասիկ այդ հարցումները.

Որո՞նք են ախրողիտեան կամ վէներական կոչուած ախտերը:

Ի՞նչ է միզանցաբորբոքումը և ի՞նչպէս կը

փոխանցուի: Բուժելի՞ է: Մշտնջենական հետքեր կը թողո՞ւ զոհին վրայ:

Ի՞նչ է տարբերութիւնը chancroid' ի և chancere' ի միջև: Ի՞նչպէս կրնան իրարմէ զնազանուիլ:

Բունիթրանկախտը երեք աստիճան ունի, կ'ըսուի: Կը հաճի՞ր իւրաքանչիւրին երեւոյթները նկարագրել և անոնց յարակից ախտանիշները որոշել: Վարակումի միջոցները որո՞նք են: Ժառանգակա՞ն է: Կրնայ՞ կատարելապէս բուժուիլ:

Այս ախտերը շատ տարածուած են Եգիպտոսի Հայ երիտասարդութեան մէջ: Կարելի՞ է բողանոց յաճախել և տակաւին զերծ մնալ անոնցմէ: Ինքնապաշտպանութեան միջոցներուն հաւատ կ'ընծայէ՞ք:

Ամուսնանալու իրաւունք կու տա՞ր ախտացեալ երիտասարդին: Ի՞նչ է այդ մասին ձեր թելադրութիւնը:

Ժուժկալութեամբ ապրուած կեանքը կը վնասէ՞ կազմութեան:

Առողջներուն ի՞նչ խրատ կու տաք:

Պատասխանները ժամանակի կարգով հետեւեալներն են.

Տոթք. Մ. Շառչեան, Լոզանի համալսարանէն վկայեալ, Գահիրէի ջուրի ընկերութեան եւ Ազգային վարժարանի պաշտօնական բժիշկ :

**Ա.ՓՐՈԴԻՑՆԱՆ Ա.ԽՏԵՐ**

Գեղեցկութեան աստուածուհիին անունով ավիրողիտեան կամ վեներական կը կոչուին սեռային կամ մարմնական ապօրինի յարաբերութենէ յառաջ եկած ախտերը ինչպէս միզանցաբորբոքում (blennorrhagie), չարակեղ (chancre), փրանկախտ (syphilis), ևն. :

**ՄԻՋՍ.ՆՅԱՌՈՐՈՒԹՈՒՄ**

Համեմուած կերակուրները, առ հասարակ բոլոր ոգելից ըմպելիքները և մանաւանդ գարեջուրը ընդունակ կը դարձնեն մարդս միզանցաբորբոքումի : Թէ յի և սուրճի չափազանց դործածութիւնը նոյնպէս դիւրութեամբ վարակուելու պատճառ կը նկատուի : Վրան բաց խօսքերով և վնասակար գիրքերու ընթերցումով յառաջ բերուած կանգնումը, գիշութիւնը, կրկնակի մերձաւորութիւնը կրնան միզուկին հուզաթաղանթը բորբոքել : Անգամ մը միզանցաբորբոքումէ բռնուողը երկրորդ անգամ դիւրութեամբ կը վարակուի : Հմուտ բժիշկներու քննութեամբ հասկցուած է որ հարիւրին իննսուն այր մարդն է այս հիւանդութեան պատճառ տուողը իր չափազանցութեամբ կամ անխոհեմութեամբ : Սպիտակ հոսում կամ

դաշտան ունեցող կնոջ հետ տեղի ունեցած մարմնական յարաբերութիւնը, նոյնպէս ծննդականի մը անմաքրութեան օրերուն մէջ եղած մերձաւորութիւնը իրաւամբ և խստիւ արգելուած է իբր պատճառ միզանցաբորբոքումի : Բռնաբարութեամբ կատարուած կուսապարզութեան երեսէն այս հիւանդութեամբ պատժուած երիտասարդներու օրինակներ տեսնուած են :

Վարակումէն երկու երեք, ամէնէն ուշ վեց օր ետքը՝ առնանդամին ծայրը, միզուկին բացուածքը կը կարմրի, թափանցիկ երեւոյթ մը կ'առնէ, այրուածքի պէս կսկծելի եռք մը կը դգացուի, որը աստիճանաբար ցաւի կը փոխուի, կամաց կամաց կը սաստկանայ, այնպէս որ միզելու և կանգնումի ժամանակ դրեթէ անտանելի կ'ըլլայ : Ութ տասը օրէն հաղիւ կը մեղմանայ ցաւը :

Միզանցաբորբոքումը յատկանշող էական բանը աւելի կամ պակաս առատութեամբ թարախախտան լորձուկքու ծորումն է : Նախապէս ճերմակ է, բայց հետզհետէ կանանչի մօտ դեղինի կը փոխուի, ներքնաղգեստը աղտոտելու աստիճան : Շուտով չդադրիր . լաւ չինամուած և հինցած հոսում մը ամիսներ, մինչև իսկ տարիներ կը տեւէ : Խուլխտ, քաղցկեղ, յօդացաւ, աղիքի հինցած հիւանդութիւն, աւաղախտ, ևն. ունեցողներու միզանցաբորբոքումը դժուարութեամբ կը լաւանայ և կրնայ բարդութիւններու առիթ տալ,

ինչպէս ցայլագեղձերու բորբոքում, առնան-  
դամի վերնամաշկին աւշային անօթներու բորբո-  
քում, կապան (phimosi), արիւնամիզում, ևն. :

Միզանցաբորբոքումը ոչ միայն մէկ անհա-  
տէն միւսին կը փոխանցուի, այլ հիւանդութեան  
ժահրով աղտոտած ձեռքով մարդ կրնայ նոյն  
իսկ աչքը, քիթը, բերանը, ևն. վարակել և տե-  
սակ տեսակ բարդութիւններու պատճառ ըլլալ :

Փ Ր Ա Ն Կ Ա Խ Ց

Փրանկախտի ծագումը շատ հին է. ժամա-  
նակի գիշերին մէջ կը կորսուի : Իրիստոսէ 2,600  
տարի առաջ Հոմանկի Չինացի բժիշկին ծանօթ էր  
այս ախտը : Եւրոպայի մէջ դոյութիւն ունենալը  
ժեղ գարուն հասկցուեցաւ և անկէ ի վեր փրան-  
կախտ, Նափոթիցի հիւանդութիւն և այլն  
ըսուեցաւ : Մարդկային ցեղին յատուկ այս ախտը,  
վերջերս, կապիկին ալ կըցան փոխանցել արհես-  
տական միջոցներով : Փրանկախտը իր մասնաւոր  
ժահրը (virus) ունի : Անգամ մը անկէ վարակ-  
ուողը երկրորդ անգամ չվարակուիր և կամ 20-25  
տարիէն, լաւ մը դարմանուիլ և հետքը բոլորովին  
ջնջելէն յետոյ կարելի է նորէն բռնուիլ, բան  
մը որ սակայն շատ հազուադէպ է : Կրնայ ըլ-  
լալ ստացական և ժառանգական. վարակման  
գլխաւոր միջոցը մերձաւորութիւնն է, ասոր հետ  
մէկտեղ պակաս չեն երկրորդական միջոցներ ալ,  
ինչպէս բժիշկներ, մանկաբարձներ, ատամնա-

բոյժներ, սափրիչներ, ստնտուներ, ևն. որոնք,  
ժահրով աղտոտած ձեռքով, գործիքով, ածելիով,  
ստիկքով, ևն. կրնան դիւրութեամբ հիւանդու-  
թիւնը ուրիշին փոխանցել : Ծաղկախտի դէմ պատ-  
ուաստով, օրհնած ջուրով, մասուկքով եղած փո-  
խանցում ալ տեսնուած է :

Իսկական փրանկախտը երեք աստիճան ունի .  
առաջին, երկրորդ, երրորդ :

Վարակումի թուականէն սկսեալ՝ ամէնէն կա-  
նուխ 8, ամէնէն ուշ 60 և միջին հաշուով 30  
օրէն առաջին աստիճանի ախտանիշը երեւան  
կ'երևնէ : Ասիկա թեթեւ ուռեցքով կարմիր կէտ  
մըն է : Գրեթէ միշտ մէկ հատ կ'ըլլայ : Եթէ առնի  
անդամին վրայ յայտնուի, ցայլքին (դասրգ) գեղ-  
ձերը կը բորբոքին, կ'ուռին, համրելի ձեւով շա-  
րուած կը կենան մորթին տակ : Չեն ցաւիր :  
Կարմիր կէտը քիչ քիչ կը մեծնայ, ոսպի չափ և  
աւելի . բոլորակ ձեւ մը ունի, մէջտեղը կը փոս-  
նայ . խողի ճարպի գոյն կ'առնէ . եզերքները կը  
բարձրանան . արտադրած թարախը շատ չըլլար :  
Կարծր չարակեղ (chancre induré) կ'ըսուի, ինչու  
որ յատակը խաւաքարտի պէս ամուր է :

Կարծր չարակեղը մօտաւորապէս 45 օրէն  
անյայտ կ'ըլլայ : Ցայլքի ուռեցքները քիչ մը աւելի  
երկար կը տեւեն : Ասկէ վերջը երկրորդ աստի-  
ճանի հետեւեալ ախտանիշերը կ'սկսին երեւան  
գալ . բշտիկ կամ եռք (syphilides) մորթին վրայ,  
նռազարիւնութիւն, գլխացաւ, ոսկրացաւ, մա-

նաւանդ երեկոյին, սրունքի մեծ ոսկրին՝ ուրբին ցաւը, դալուկ (սարըլըգ), ջերմ, աչքի ծիածանի բորբոքում, հերաթափութիւն, եղունգի ցաւ, ևն. : Ատոնք բոլորը 2-6 տարի կը տեւեն, նայելով հիւանդին տրուած դարմանումին, առած սնունդին, աղքատ կամ հարուստ ըլլալուն :

Երկրորդ շրջանէն երրորդը անցնելու համար երբեմն շատ երկար ատենի պէտք կայ, 10-20 տարի : Փոխանցման այս շրջանին վերջին տարիներու ախտանիշները այլաձև և անորոշ կ'ըլլան .

Բուն երրորդ աստիճանի նշաններն են կեղևոս քշիկներ (syphilides ulcéreuses, gommés), որոնք կը վարակեն անխնայ մորթի տակի բջջային հիւսուածքը, մկանները, լեարդը, թոքերը, ուղեղը, ողնածուծը, ոսկրային համակարգութիւնը . ամէնէն աւելի ընտրած տեղը քիւմբի կամարն է, որուն ոսկրը կը մաշեցնէ, կը ծակէ . հիւանդը քիթէն կը խօսի : Լաւ չխնամուած պահուն տեղի կ'ունենան դարձեալ աչքի շարժական և տեսողութեան ջիղերու փճացում, ձեռքի, ոտքի, առ հասարակ մարմնոյ բոլոր շարժումներու անկարգութիւն, ամորձիքներու կարծրացում, ոսկրներու այտում, բորբոքում, փտում, մանաւանդ քիթի ոսկրի, որը կը մաշի և կը փճանայ . ժողովրդային ասութեամբ՝ Գիթի դարչահոտութիւնը անտանելի է :

Գինեմորութիւնը, ճահճային տենդը (paludisme), խուլխտը, պալարախտը, ծննդաբերութիւնը փրանկախտ ունեցողին վիճակը կը ծանրա-

ցընեն : Անոր դիպուածով ստացած վէրբը դժուարաւ կը լաւանայ :

Ժառանգական փրանկախտը կարծուածէն շատ աւելի յաճախադէպ է : Այս պարագային մէջ թշուառ մարդածին էակին կերպարանքը և բնաւորութիւնը արտասովոր բան մը կ'ունենան, ամորձիքները կատարելապէս չեն զարգանար, դանկի տձեւութիւնը և ճակատի անվայել բարձրութիւնը աչքի կը զարնեն, նմանապէս փլած քիթ, երկար ոսկրներու խոցուածք, մորթային սպիներ՝ մանաւանդ նստոցին կողմը, աչացաւ, խլութիւն, ախուներու անկանոնութիւն, ևն. : Մանուկներու շուտով մեռնիլը և կամ մեռած ծնիլը, շատ անգամ, ժառանգական փրանկախտի երեսէն է :

Կակուղ չարակեղ կամ չարակեղիկ (chancre mou, chancelle, chancroide) ըսուածը աւելի յաճախադէպ է քան թէ բուն փրանկախտի չարակեղը : Անմաքուր մերձաւորութենէ 2-3 օր վերջը երեւան կ'երնէ առնի անդամին վրայ . շատ անգամ քանի մը հատը միատեղ կը տեսնուին : Ժահրոտ և տարափոխիկ թարախ կ'արտադրէ առատօրէն : Մեծնալու հակամէտ է : Ամուր շրջանակ մը շունենալուն՝ կակուղ չարակեղ կ'ըսուի : Սպիացումը երկար կը տեւէ : Կերիչ (Phagédénique) ըսուած տեսակը շատ ուշ և դժուարութեամբ կը լաւանայ :

Ատոնց վլասը իրենց ծագում առած տեղին

վրայ է . երկրորդական նշանները գրեթէ միշտ չեն տեսնուիր :

Աւիրողիտեան ակտերէն միզանցարորորումը և կակուղ շարակեղը նուազ վաանդաւոր են : Ամենաւատ տեսակը փրանկախտն է , որը մէկ անգամ ծագում առնելէն վերջը մարմինին դուրսի կամ վերելի կողմէն դէպի ներսը կամ խորը մարդակազմակէն հիւսուածային ամէն համակարգութիւններու մէջ արմատներ կը ձգէ , ամէն տեղ աւերումներ գործելով , դանդաղօրէն բայց վճռականապէս : Թշուառ հիւանդը , յաճախ , տարիներով իր գոյութիւնը քաշքուտելով՝ վերջապէս անվրէպ մահուան գիրկին մէջ իր հանգիստը կը դտնէ :

**ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆ**

Այս սոսկալի աղէտին գլխաւոր պատճառը ամուսնութենէ խուսափիլն է :

Ամուսնութիւնը արքայութեան ճշմարիտճամբան է : Եթէ շատերը տղիտութեամբ կամ նախապաշարումով դժոխքի ճամբու փոխած են զայն , պատճառը ուրիշ բան չէ , եթէ ոչ անոր սուրբ վարդապետութեան խեղաթիւրումը : Շատեր կ'ամուսնանան իրենց վաւաշտութեանը կամ տրուփանքին յաղուրդ տարու ներքին մղումով , ոմանք ալ հարստանալու ցանկութեամբ : Առաջինը անառակութիւն է , իսկ երկրորդը՝ անպատկառ վաճառականութիւն : Սոյն երկու նպատակներէն մէկին կամ միւսին հասնելու համար նկատի չեն առնուիր

բնաւ տարիքի համեմատութիւնը և առողջապահական կարգ մը անհրաժեշտ պայմաններ :

Տուփանքի թափը երկար ատեն չըլլար . հարստութեան ցանկութիւնը դրամօժիտով չգոհանար . վաղանցուկ և խափուսիկ հաճոյքին կը յորդէ ձանձրութիւն , անհամաձայնութիւն , երկպառակութիւն , կռիւ : Սէրի տեղ ատելութիւնը երթալով սուր կերպարանք կ'ստանայ և ընտանեկան յարկը կը դառնայ տեսակ մը դժոխքի :

Սեռական սէրը անկաշառ սէրն է :

Առողջ , բարոյապէս և ֆիզիքապէս առողջ մարդու մը սիրտը ճշմարիտ սիրոյ վառարանն է : Իրաւամբ ըսուած է թէ սիրահարութիւնը մարդը սիրտերու յատուկ է :

Առանց որևէ անմաքուր ցանկութեան և շահախնդրական նպատակի՝ երկու սիրահար երիտասարդ սիրտերու աղատօրէն , երկուստեք հաւանութեամբ միութիւնն է ճշմարիտ ամուսնութիւնը , նուիրագործուած կրօնքէն , օրհնուած Աստուծմէ : Թէև հարուստ բայց ակտաժէտ 40 տարեկան մարդու մը հետ կնքուած 20 տարեկան մարդու և առողջ կոյսի մը ամուսնութիւնը օրէկքը կը թոյլատրէ դժբաղդաբար , քահանան ալ կը պսակէ , բայց Աստուած չօրհներ :

Տղամարդ մը մինչև 15 տարեկան ըլլալը խնամոտ նախնական կրթութիւն ստանալէ յետոյ՝ մինչև 25 տարեկան ըլլալը 10 տարուան մէջ կարող է արհեստ մը սորվիլ և մայրութեան կոչու մ :



նող ու յատկապէս այդ նպատակին համար դաստիարակուած 18-20 տարեկան աղջկան մը հետ ամուսնանալ: Նշանակուած տարիքին մէջ ոսկրային համակարգութիւնը զարգացած կ'ըլլայ:

Տրուած սխալ դաստիարակութեան պատճառաւ աղջիկներու չափազանց պահանջկոտութենէն երիտասարդները ամուսնանալէ խոյս կու տան, և կամ ապահով դիրքի տէր ըլլալու կ'սպասեն, բան մը որ, կեանքի յարափոփոխ պայմաններու բերումով, անհասանելի ցանկութիւն մը կը մնայ գէթ շատերու համար: Պատճառը այս է որ Եգիպտոսի Հայ գաղութին մէջ, այսօր, ծերացած պարոններ և պառւաւցած օրիորդներ շատ ունինք, յուսահատ և ապերջանիկ:

Քսանըհինգը ամուսնութեան յարմարագոյն տարիքն ըլլալով՝ առաջին մերձաւորութեան բուն թուականն ալ անկէ սկսելու է: Բնականաբար կրնայ մարդ իր կուսութիւնը անաղարտ պահել մինչև իր 25ը թեւակոխելը: Առողջութեան և բարոյականութեան կրկին տեսակէտով պարտադիր օրէնք է այս:

Արդարև 25 տարիքէն վեր մինչև 30-35 երբեմն ալ 40 տարիքը, շատ անդամներ, մարմինը հոգիին դէմ կ'ապստամբի. զսպուած կիրքերը ումանց քով արտաստվոր կերպով դուրս կը զեղուն պատեհ առթիւ մը, հրեշային արարքներու իսկ տեղի տալով: Ինչպէս չափազանց ժուժկալութիւնը՝ նոյնպէս և սանձարձակ ցոփութիւնը

զնասակար են: Այս ժամանակամիջոցին է որ կը պատահին մտաւորական և ֆիզիքական տեսակ տեսակ ախտեր և հիւանդութիւններ: Իրկու չարեայ փոքրագոյնը ընտրելու համակերպութեան սկզբունքով կամայ ակամայ և նոյն իսկ բժիշկին խորհուրդով՝ մարդիկ ձեռք կ'առնեն ճամբան Աստղիկի տաճարին և այնտեղ իրենց թանկագին առողջութեան իբր տրիտուր ափրողիտեան ախտեր կ'ստանան:

Եթէ մարդ մը ծերութենէ վերջը հրաշքով յանկարծ երիտասարդանար, այն ատեն բոլորովին տարբեր մտայնականութեան, տարբեր տրամադրութեան տէր պիտի ըլլար ապահովաբար: Պիտի խոստովանէր, անկասկած, թէ երջանկաւէտ համեստ կեանքի համար պէտք եղածը մեծ բան չէ. աշխատութիւնը յարգող մէկը իր շահածին կարեւոր մասը ամուսնութեան նպատակին յատկացնելով կարող է ընտանիք պահել: Ամուսնութիւնը դժուարացած է անոր համար որ կարեւորէն աւելի անկարեւորին համար դրամ կը մսխեն, պերճանքի և նորաձեւութեան ետեւէն խելակորոյս վաղողներ շատ կան:

Եւ սակայն ամուսնութիւնը անհրաժեշտ պայմանն է մտաւորապէս և ֆիզիքապէս առողջ կեանքին:

Սէրը ամօթ չէ. հաճոյքը ներելի է պարկեշտութեան սահմանին մէջ:

Երկրի վրայ անհատներ կը մեռնին, բայց

մարդկութիւնը կայ և կը մնայ . մարդկութիւնը  
յաւերժացնողը օրինաւորութեան չափով սիրային  
ամուսնութիւնն է :

Միայն կենդանական աշխարհին մէջ չէ որ  
կը տեսնենք արու և էգ տարբեր սեռերու զու-  
գաւորութիւնը իբր միակ սլայման տեսակին բազ-  
մանալուն :

Միեւնոյն բանը դիտելի է նաև բուսական  
աշխարհին մէջ : Հսկայ ծառի մը բովանդակ կեն-  
սունակութիւնը խտացած է անոր ծաղիկին արու  
և էգ մասերուն մէջ, որոնց բեղմնաւորիչ հիւթե-  
րուն շաղկապումովը գոյութիւն կ'առնեն ծառին  
պտուղը, սերմը, հունտը կամ կուտը : Երբ կուտը  
պարարտ հողի մէջ դրուի, կը ծլի և ժամանակի  
ընթացքին մէջ կը մեծնայ, կ'ուճանայ, բարձ-  
րաբերձ ծառ մը կը դառնայ ոստախիտ և դա-  
լարագեղ :

Մարդկային կեանքը ամբողջովին խտացած է  
երիտասարդութեան մէջ : Ծաղկատի հարսին և  
փեսային սիրավառ սիրտերու հպումէն յառաջ  
կու գայ քաջառողջ մարդկութեան ազգահամարի  
ծառը . զաւակներու և թոռներու ընդարձակ ճիւ-  
ղադրութիւն մը, սրտանց փափաքելի բան մը՝ մեր  
կիսակործան և վերածնունդի կարօտ ազգին հա-  
մար, Եգիպտոս, Ամերիկա, Տաճկաստան, Հա-  
յաստան և ամէն տեղ, ուր Հայ տարրը տակաւին  
իր գոյութիւնը կը պահէ :

Տոք. Ե. Արշարունի, Փարիզի բժշկական համա-  
լսարանէն վկայեալ եւ Միլնիե Միւսիթիէթի Ժակսախիսի  
ստողջապահական ընդհանուր ֆևնիչ :

Ա. Գլխաւոր ափրոդիտեան ախտերն են,  
1. Զերմամիզութիւնը (gonorrhée), 2. Թրանկախտը  
(syphilis), 3. chancroide կամ chancre mou և  
սեռական անդամներու herpèsը : Ասոնցմէ առա-  
ջինը կը փոխանցուի միշտ զուգաւորութեամբ .  
պէտք չէ հաւատ ընծայել արտաքնոցներէ և կամ  
սրբիչներէ առնուած ջերմամիզութիւններուն : Ասոր  
հակառակ syphilisը, որ դարձեալ հարիւրին ութ-  
սուն կարելի է ըսել զուգաւորութեամբ կը փո-  
խանցուի, երբեմն կը փոխանցուի նաև վարակ-  
ուած գործիքներով, ածելի, ևն., ինչպէս նաև կե-  
րակուրի սպասներով, (գաւաթ, դգալ, պատա-  
ռաքաղ, ևն.) chancre mou և herpèsը միշտ զու-  
գաւորութեամբ կը փոխանցուին :

Բ. Gonorrhéeն բուժելի է պայմանաւ որ ան-  
միջապէս և պէտք եղածին պէս խնամուի . բայց  
դժբախտաբար 90 % այս հիւանդութիւնը շատ  
գէշ կերպով կը խնամուի, ըլլայ հիւանդին՝ ըլլայ  
բժիշկներու անհոգութեան պատճառաւ, որք երբ  
հոսումին դադարիլը կը տեսնեն, այլեւս հիւան-  
դութիւնը աղէկցած կը համարին . ինչ որ ամե-  
նամեծ սխալ մ'է : Այս է պատճառը որ մեծ մա-  
սամբ ջերմամիզութիւնը chronique վիճակի մէջ կը  
մտնէ ու այլեւս գրեթէ անբուժելի կը դառնայ :

Անտարակոյս ջերմամիզութիւնը շատ վտանգաւոր հետքեր կը թողու զոհին վրայ. առաջինը ամորձիքներու բորբոքումն է, որ հիւանդը ամլութեան կը դատապարտէ, եթէ երկուքն ալ բռնուին, վասն զի spermatozoideները արտադրող գործարանները կը փճանան վերջնականապէս: Երկրորդը միզանցքին նեղնալն է. մինչև այն աստիճանի կրնայ հասնիլ որ պէտք կ'ըլլայ յաճախ երկաթէ մատուրաներ անցնել և նոյն իսկ վիրաբուժական գործողութեան ենթարկել հիւանդը, որպէս զի կարելի ըլլայ միզել: Ընդհանրապէս սոյն հիւանդութեան վրայ շատ թեթև աչքով կը նայուի, ինչ որ մեծապէս սխալ է. ըստ իս թերեւս ֆրանկախտին չափ, եթէ ոչ աւելի կարեւորութիւն տալու է անոր. լաւ չինամուած ու բոլորովին չաղէկցած և իրենց կիները վարակող այրերու թիւը հազարաւորներու կը հասնի: Կիներու արգանդի հիւանդութիւններուն մեծ մասը իրենց այրերու ջերմամիզութեան արդիւնքն է:

Գ. Chancre և chancroideը, զորս chancre dur, chancre mou ալ կը կոչեն, բոլորովին տարբեր հիւանդութիւններ են. Առաջինը syphilisի ամէնէն առաջին արտայայտութիւնն է. այսինքն հոն՝ ուրկէ կը մտնեն հիւանդութեան մանրէները մարմնոյն մէջ, վէրք մը կը գոյանայ կարծր՝ զոր chancre կը կոչեն. իսկ chancre mou ըսուածը ւարձեալ Ափրոզիտեան ախտ մ'է, բայց բոլորովին մեղմաս, սովորական վէրք մ'է որ կը գոյանայ

առնանդամին վրայ, որու մանրէները չեն թափանցեր արեան մէջ, կը մնան հոն ուր որ են, ու վէրքը քիչ ատենուան մէջ կը բուժուի արտաքին դեղերով ու ասով հիւանդութիւնը կը վերջանայ, առանց ուրիշ հետեւանքներ ունենալու: Բայց սոյն երկու տեսակ վէրքերը իրարմէ զանազանել բժիշկ մը միայն կարող է, ու աւելորդ է հոս բացատրել անոնց տարբերութիւնը: Ընդհանուր ու շատ կատարող օրէնք. Առնանդամի վրայ գոյացած ամենափոքր ու ամենաջնջին վէրքն իսկ անմիջապէս առանց ատեն կորսնցնելու պէտք է բժիշկի մը ցուցնել. Անոր կ'իյնայ որոշել թէ ի՞նչ տեսակ վէրք է:

Դ. Syphilisը երեք աստիճան ունի: Առաջին աստիճանը կ'սկսի քիչ մը վերը յիշուած chancreի երեւան ելնելէն, որ կը պատահի հիւանդ կնոջ մը հետ յարաբերութիւն ունենալէ 15 օր ետքը միջին հաշուով: Սոյն առաջին աստիճանը ուրիշ ո եւէ երեւոյթ մէջտեղ չբերեր: Բայց այս միջոցին է որ կամաց կամաց հիւանդութիւնը կը թափանցէ արեան միջոցաւ մարմնոյն ամէն կողմը ու մտաւորապէս ամիս մը ետքը հիւանդը կը մտնէ երկրորդ աստիճանին մէջ: Սոյն աստիճանին գլխաւոր երեւոյթներն են նախ՝ ընդհանուր մարմնոյ վրայ կարմիր բիծեր, զորս roseole կը կոչեն. գլխու և ոսկորներու սոսկալի ցաւեր, որք ընդհանրապէս գիշերները կը պատահին. կոկորդի մէջ ու չրթներու ներսի կողմը փոքրիկ վէրքեր, ու

վերջապէս մազերու առատ թափում : Եթէ հիւ-  
ւանդը անմիջապէս սկսի ինքզինք դարմանել,  
բնական է որ սոյն երկրորդ աստիճանի երեւոյթ-  
ները շատ տկար կ'ըլլան, ու շարունակելով դար-  
մանումը ինչպէս որ պէտք է, այսինքն առնուազն  
3 տարի (բնական է ընդհատարար՝ բայց միշտ  
բժիշկի հսկողութեան տակ), հիւանդը կրնայ խու-  
սափել երրորդ աստիճանի սոսկալի փորձանքնե-  
րէն, զորս շատ երկար պիտի ըլլայ հոս նկարագ-  
րել : Սաչափը ըսենք որ ամէն գործարան ու ամէն  
զգայտարան սոյն աստիճանին մէջ կրնան փճանալ  
անդարմանելի կերպով ու յաճախ մահ պատճա-  
ռելով : Յիշելու ենք մասնաւորապէս շղային դրու-  
թեան ամէն տեսակ խանդարումներ որ մինչև խե-  
լագարութիւն կը տանի :

Չբանկախտը կը ԲՈՒԺՈՒԻ : Ահա կէտ մը որ  
հիւանդները լաւ ըմբռնելու են : Փոխանակ ինք-  
զինքնին յուսահատութեան տալու, որ յաճախ  
անձնասպանութեան իսկ կը յանգի, սա բանին  
համոզուելու են որ շաւիսնաւորած ժրանկախտը  
գրեթէ անկարելոր հիւանդորդին մը կը դառնայ  
ու կը բուժուի, յիսնաւորած կտր գեշ յիսնաւորած  
ժրանկախտը ամենատեսակի հետեւանքներ կ'ու-  
նենայ :

Չբանկախտը անտարակոյս ժառանգական է  
ու վերջին աստիճանի տարափոխիկ :

Ե. Ափրոդիտեան ախտերը խիստ շատ տա-  
րածուած են ինչպէս ամէն ազգի, նոյնպէս Հայ

երիտասարդութեան մէջ : Բողանոյներու հսկողու-  
թիւնը գրեթէ անուանական է, ու բողանոյները  
յաճախելով սոյն հիւանդութիւններէն զերծ մնալը  
լոկ բախտի խնդիր մ'է :

Ե. Բնական է որ ախտացեալ մը մինչ իր  
վրայ կը կրէ ախտին ամենափոքր նշանը՝ պէտք չէ  
ամուսնանայ. ապա թէ ոչ՝ ոճրագործութիւն է  
ըրածը : Բայց այն որ ինքզինք պէտք եղածին չափ  
խնամեր է՝ կրնայ ամուսնանալ : Մասնաւորելով  
խօսքս փրանկախտին վրայ՝ միայն այն ատեն ձեռքս  
խղճիս վրայ դրած կրնամ թոյլատրել ամուսնու-  
թիւնը, եթէ հիւանդը առ նուազն հինգ տարի իմ  
դարմանումիս և հսկողութեանս ենթարկած է  
ինքզինք :

Զ. Առողջներուն խրատներս երկար չեն կրնար  
ըլլալ. կ'ապրինք այնպիսի դարու մը մէջ ուր ամէն  
ցոփութիւն ու ամէն մոլութիւն կը փորձեն զմեզ  
ամէն վայրկեան : Իբր բժիշկ բնական է որ ոչ  
կրօնքի ոչ ալ բարոյականի անուհով պիտի խօսիմ  
իրենց : Աչքի առջև ունեցէք միշտ թէ որքան  
քաղցր են Աստղիկի սլաքները, նոյնքան և ալ  
աւելի թունաւոր են անոնց բացած վէրքերը : Ու-  
նիք զօրաւոր կամք ու կորով հեռու մնալու ըստ  
կարելոյն այն սլաքներէն, ձեր առողջութիւնը ու  
չատ անգամ կեանքը փրկած կ'ըլլաք : Բայց դիտ-  
նալով որ այդ կորովը հաշուազիւտ ու խիստ տկար  
է բազդատմամբ Աստղիկի թունաւոր սլաքներուն  
ուժին հետ, չեմ պնդեր : Բայց այն վայրկեանին

երբ վերջը կը բացուի, այլ եւս կ'սկսի ձեր պատասխանատուութեան վայրկեանը. պատասխանատուութիւն ձեր անձին դէմ, ձեր ընկերոջ դէմ, ձեր կնոջ, ձեր զաւակներուն ու ձեր ազգին դէմ. Վատառողջ մը երբ գիտնալով կը ցանցնէ ասդին անդին իր հիւանդութիւնը՝ ոճրագործ մը չէ միթէ. Ու ինչ է սոյն սոսկալի պատասխանատուութենէն ազատելու միջոցը. ԻնՔՁԻՆՔԸ ԴԱՐՄԱՆԵԼ. Համոզուեցէք թէ վերև յիշուած սոսկալի հիւանդութիւնները կը բռնառնին. ու եթէ հիւանդ էք ու կը մնաք, յանցանքը ձերն է: Մի խնայէք դրամը. եթէ ձեր առողջութեան փճացումին համար ծախսուած գումարներուն մէկ հարիւրերորդը ծախսէք անոր պահպանումին համար, կը բաւէ: Հիւանդանալը շատ անգամ ձեզմէ կախուած չէ, բայց առողջանալը գրեթէ միշտ ձեզմէ կախեալ է: (Բնականաբար խօսքս Ափրոդիտեան ախտերու մասին է). Ու զձեզ խնամողը առողջացնողը միւսիայն բժիշկը ըրջալու է: Ոչ ընկերդ, ոչ դրացիդ, ոչ սափրիչդ, ոչ դեղագործդ, այլ բժիշկդ է որ զքեզ պիտի խնամէ: Որքան տարօրինակ թուի այս խրատս, բայց ճշմարտութիւն մ'է որ Ափրոդիտեան ախտերու բժիշկը՝ բժիշկներէն աւելի ամէն մարդ է: Զգուշացէք այս սխալէն:

Տոթք. Ճօրճ Գ. Էփսեմեան, զինուորական բժիշկ Եգիպտական բանակին եւ մասնագէտ ներքին եւ սեռական հիւանդութեանց:

1. Իլէլ ի սարկյէ (պուլաշըգ խասթէլիքլէր) աթիտէքիլէր տիր. Syphilis-ֆրէնկի. Gonorrhoea պէլ սօվուգլըղը. Tuberculosis-վէրէմ. Measles-գըզամըգ. Enteric Fever-թիֆօ. Dysentery-գանլը խահալ. Small Pox-չիչէք խասթէլիլի. Typhus-գարահիւմնա վէ զայրիհիւմ: Պունլարտան մէվգուը պահսըմըղա ալագատար օլան « ֆրէնկի-syphilis » վէ « պէլսօվուգլըղը-gonorrhoea » խասթէլիքլէրինի մուխթասարէն զիքը իլէ իքթիֆա իտէճէ յիմ:

2. « Պէլսօվուգլըղընը » թէվլիտ էտէն « կօնօգօգըս-Gonococcus » տէնիլէն միգրօպ տըր քի պու միգրօպ ճիմա՝ վէ եա թէմաս վասըթասըյլա միւսապպ օլան պիր քիմսէտէն ախէրինէ ինթիգալ էտէր: Պու եօլտա պէլ սօվուգլըղընը մէյտանէ կէթիլիր: Պէլ սօվուգլըղը իւչ տէրէճէյէ թագսիմ օլունմըչ տըր: Պիրինճի տէրէճէ պիր իքի կիւնտէն պիր հաֆթայա դատար տէվամ էտէր. պիրինճի տէրէճէտէ զուհուր էտէն հալլար շունլար տըր: Գաղիպին (Penis) պաշնտա կիտիլմէք հասըլ օլուր. դաղիպտէն պէյաղըմը սարը պիր մատտէ ագար:

Իքինճի տէրէճէ պիրինճի տէրէճէտէն սօնրա պաշար. պունտա թէպէվլիլըլ էտէրքէն (սու տէօքէրքէն) ալըը հիսս օլունըր. դաղիպտէն ագան

իֆրազաթ եւ շիլիմսի սարը տըր . դաղիպին սա-  
չընտա իլթիհասպ վէ շիշ փէյտա օլուր . պու իքի  
տէրէճէտէ իֆրաղ օլունան մատտէ սարի տիր :

Իւչիւնճի տէրէճէտէ պէլ սօվուգըլըլ էսքիմիշ  
օլուր . աղըր վէ իլթիհասպ օլմաղ . դաղիպ տախմա  
աղ չօդ ագար . պունա Ինկիլիղճէ իսթիլահ ը  
թըպպիտէ (կլիթ-Gleet) թէսմիյէ օլունուր :

Իւչիւնճի տէրէճէտէ պէլ սօվուգըլըլ սիրայէթ  
էթմէղ . Պէլ սօվուգըլըլ վադթընտա վէ լայըղըլա  
թէտալի օլունմայաճագ օլուրտա , տիկէր խասթէ-  
լիքէրի ինթաճ էտէր :

3-4. Ֆիրէնկի իլէթի եւ սօղըրտան սօղըրյա  
թէմաս իլէ վէ եւ էպէվէյնտէն իրսէն էվլատա  
ինթիգալ էտէր . Ֆիրէնկի պիւթիւն պիւնէյէ այիտ  
(Constitutional) պիր խասթէլիք տիր . Ֆիրէնկիյի  
թէվլիտ էտէն խուսուսի պիր միգրօպ միւպթէլա  
օլան քիմսէտէն ախէրինէ եւ ճիմա՝ վասըթա-  
սըլա , եւ պուսէ « էօիիւշմէք » եօլըլա վէ եւ  
ֆիրէնկիլի քիմսէնին խասվըսընը , չաթալընը , դա-  
չըլընը . . . վէ դայրիհիւմ , դուլանմագլա ինթիգալ  
էտէր . Ֆիրէնկիլի քիմսէլէր իւղէրինտէ իճրայի  
'ամէլյաթ էտէն պաղը ճէրրահլարըն փարմագլա-  
ընտա պիլէ սիրայէթ թարիգիլէ ֆիրէնկի զու-  
հուր էթտիլի կէօրիւմիւշ տիր :

Ֆիրէնկիինն իլք եարէսի 'ումումէն ճիմա՝ նէ-  
թիճէսի օլարագ դաղիպ իւղէրինտէ վէ նատիրէն  
պուսէ եօլըլա սուտագլարտա նիւմայան օլուր .  
պու եարէնին թարիխի զուհուրը — իսթէր դա-

ղիպտէ օլուն , իսթէր տուտագլարտա պուլուն-  
սըն — սօն ճիմա՝տան վէ եւ թէմաստան 10 կիւն-  
տէն 90 կիւնէ դատար տըր . նատիրէն 6 այ սօնրա  
տա զուհուրա կէլիր . Շիմսի դաղիպաէ զուհուր  
էտէն եարէտէն պահս էտէլիմ . Պու իլք եարէ  
ֆիրէնկիինն իլք տէրէճէսի տիր . անա իսթիլահ ը  
թըպպիտէ « շանգըր-chancere » ֆիրէնկի եարասը  
վէ եախօա Ինկիլիղճէտէ սէրթ եարէ մանասընտա  
« hardsore » տէնիլիր . Պու եարէ զուհուրա կէլմէ-  
տէն էվլէլ ինսան ճիւղի պիր սըճագըղ , պաշ  
վէ պօղաղ աղըրսը , վիւճուտտէ կէվէքէր , մէճալ-  
սըղըղ . . . վէ դայրիհիւմ հալար հիսս էտէր :

Ֆիրէնկի եարասը շու եօլտա պալար . իլք էօնճէ  
դաղիպտէ կիտիշմէք , սօնրա ուֆագ պիր դա-  
պարճըգ հասըլ օլուր . դապարճըգ կիթ կիտէ պէօ-  
յիւր , տէրինլէշիւր , վէ աղ չօդ պիր մատտէ իֆ-  
րաղ էտէր . աղըրսը փէք խաֆիֆ տիր . եարէնին  
էթրաֆընտա սէրթիլիք հիսս օլունուր . դատըղարտա  
« Bubo-պիւպօ » տէնիլէն շիլէր մէյտանա կէլիր .  
պիրինճի տէրէճէ եանի « շանըրը » ըն թէտալիլէ  
դափանմասը պիր այտան իւշ այա դատար տէ-  
վամ էտէր . պա՛ղէն տէ այլարճա սիւրէր :

« Շանգըր-chancere » միւթէագիպ 2-3 այ զար-  
ֆընտա ֆիրէնկիինն իքինճի տէրէճէսի նիւմայան  
օլուր . Պու իքինճի տէրէճէ պաղէն իլք եարէ  
(chancere) թէմամէն դափանմատան տա մէյտանէ  
կէլիր : Իքինճի տէրէճէտէ ճիմա՝ ի պէշէր իւղէ-  
րինտէ միւթէնագիլիլէն պաղըր ընկիլիտէ եարէ-

լէր, դասարճըզլար . . . վէ զայրիհիւմ զուհուրա կէլիր : Պու տէրէճէնին ալաիմի 2 սէնէյէ գատար տէվամ էտէր : Անտան սօնրա իւչիւնճի տէրէճէ պաչլար քի պու տէրէճէ աղալաթտա (muscles), քէմիքլէրտէ, տիմաղտա վէ ա՛ղայը տախիլիչէնին պիր վէ եա ախէրինտէ իզհարը թէէսիր էտէր . Պունըն եարէլէրի զայր ի միւթէնաղիր տիր : Պիրինճի վէ իքինճի տէրէճէ ֆիրէնկի սարի տիր . իւչիւնճի տէրէճէ իսէ զայր ի սարի տիր .

Ֆիրէնկի թէմա-վէն գապիլ ի շիֆա տըր : Պիր հէքիմին թասթը միւլահաղասընտա իքի սէնէյէ գատար միւքէմմէլէն թէտալի վէ տիզգաթ իսթէր . գաղիպին իւղէրինտէ «chancre» տան մատա «chancroid - շանգրօիտ» վէ տահա պասիթ եարէլէր տէ մէյտանէ կէլիր . Եայընըզ «շանգրօիտ» ի զիքր էտէլիմ . «Շանգրօիտ» ճիմա՛ տան 2-3 կիւն սօնրա գաղիպտէ զուհուրա կէլիր : Պու իւք զուհուրընտա պէօյիւք պիր եարէ հայընտա պաչլար : Պաչլատըր եէր սօն տէրէճէ գապարըր վէ սըղլար : Չօդճա մատտէ իֆրազ էտէր : Գասըզլարտա մէյտանէ կէլէն շիւլէր (bubo) պէօյիւճէք վէ միւլիմ օլուր : Աչըլլալ թէմիզլէնմէյինճէ ինսան րահաթ էթմէզ : «Շանգրօիտ» ին գանա ալագասը եօգ տըր . «chancre- շանգրըր» ըն մէյտանա կէթիրտիյի իքինճի վէ իւչիւնճի տէրէճէտէքի հալլար պունտա զուհուրէթմէզ . «Շանգրըր» «շանգրօիտ» տէն քիւլլիչէն ֆարդը պիր խասթէլիք տիր :

5. Եօգարըտա զիքր էթտիյիմիզ խասթէլիքլէր

Մըարրտա վէ Սուտանտա փէք չօգ միւնթէչիր տիր : Պիր չօգ կէնճլէրիմիզ անլէրէ միւպթէլա տըրլար : Քեարխանէլէրէ կիտիպ տէ պու խասթէլիքլէրտէն մասուն գալմագ նատիր իւլ վուգու վէ թէսատիւֆի հալլարտան տըր . Քեարխանէ միւտալիմլէրինին եիւզտէ սէքսէնի տէյէպիլիրիմ պու խասթէլիքլէրէ միւպթէլա օլմագ թէհլիքէսինտէ տիրլէր : Փահիչէլէրէ կիտիպ տէ պու իլլէթլէրտէն աղատէ գալմագ իչիւն գուլլանըլանիթիյաթքեաւրանէ թէրթիպլէր հէփ պիէսաս վէ զաիֆ շէյլէր տիր : Պաղը աօգթօր տօսթլարըմը թանըրըմ քի հէր նէ եօլ գուլլանմըլ իսէլէր տէ , պու իլլէթի ալմամագ թէհլիքէսինտէն քէնտի քէնտիլլէրինի գուրթարամամըլար տըր : Հիւքիւմէթ հէքիմլէրի հաֆթատա պիր տէֆ՛ա քեարխանէ ֆահիչէլէրինի մու՛այէնէ էթմէք վաղիֆէսիյլէ միւքէլլէֆ տիրլէր : Հէքիմ հագգ ու ինսաֆը էլտէն պըրագմայարագ նէթիճէ ի մու՛այէնէսինի թէմամէն րափօրթ էթսին տէյէլիմ , անըն ֆահիչէ հագգընտա վէրտիյի « իլլէլ ի սարիչտէն աղատէ տիր » րափօրթընըն եիւզտէ ալթմըլընըն եանըլ օլմագ իհթիմալը վար տըր .

Էլվէլա . — Պիր չօգ ուֆագ եարէլէր էննա ի մուայէնէտէ հէքիմին նազարը թէֆթիչիւնտէն զաիպ գալըր : Սանիչէն . — Օլապիլիր քի պիր ֆահիչէ սօն մու՛այէնէտէն սօնկրա ֆիրէնկիյի վէ եա պէլ սօվուգլըղընը ալըր : Պու եօլտա անա կիտէն պիչարէ ստէմէ իլլէթի ալտըր կիպի վէրիր : Շու տա շա-

յանը զնքը տիր քի, պա՛ղը վիճտանալը հեքիմ-  
 լէր ֆասիչէտէն դապուլ էթտիքլէրի բիշվէթ մու-  
 դապիլինատ եւալան եանըը ֆասիչէ հադգընտա  
 խասթէլիքտէն մասուն աըր ըափօթթընը վէրիլէր :  
 Փասիչէլէր թապիի պու սէն՝աթը քէնտիլէրինէ  
 պասը մաիչէթ էտինմիլլէր տիր : Օ հալտէ վէք  
 նատիր պուլունըր քի պիր ֆասիչէ խասթէլիլինի  
 միւշթէրիտինէ էօնտէն իխպար էթսին : Նէթիճէի  
 քէլամ քեարխանէյէ կիթմէք էմին պիր եօլ տէ-  
 յիլ տիր, վէ կիտէնլէր տէ չօդ ֆէնա խասթէլիք-  
 լէրէ տիւշմէք թէհլիքէտինտէ տիրլէր :

6. Ազայի պէտէնտէն հէր պիրիտինին պիր  
 վաղիֆէսի վար աըր քի, պու վէզայիֆին իթմա-  
 մըյլա ճիսմ ու սըհհէթ ի պէշէր դաիմ տիր : Պու  
 ազայը պէտէնտէն ճիհաղը թէնասիլինին տէ  
 պիր վաղիֆէսի վար աըր քի, ա՛նը իճրա էթմէքլէ  
 ճիսմ դըսմէն վէ նէվ ի պէշէր ումուճէն միւսթէ-  
 ֆիա օլուր : Ճիհաղը թէնասիլինին վաղիֆէսի  
 -թէնասիլը վէ նէվ ի պէշէրին պադասը նօթթա ի  
 նաղարընտան ազայը պէտէնին վէզայիֆինին էն  
 էհէմմիլլէթլիտի տիր :

Նիւթֆէ (մէնի) խիւսեղէրտէ թէքէվիլուն  
 էտէր . Գանավաթը նազիլէ վասըթասըյլա խիւս-  
 եղէրտէն հիւվէյէլաթը մէնէվիլլէյէ կէլըր . Հիւ-  
 վէյէլաթը մէնէվիլլէյէ տօլունճա, պիր սէպէպ զու-  
 հուրըյլա մէնի տիշարըյա չըգար . Էսպապ իւչէ  
 թագսիմ օլունըր . 1. Գարըյլա ճիսմ : 2. Իհթի-  
 լամը մէնէվիլլէ քի ինսան ույուր իքէն մէնի հիւվէյ-

սէլաթը մէնէվիլլէտէն պօշալըր : Պու իքի սէպէպ  
 մադպուլ, մադուլ վէ թապիի սէպէպլէր տիր :  
 Իւշիւնճի սէպէպ իսէ էլ իլէ օյնամադ աըր : Պու  
 էն ֆէնա պիր ատէթ տիր . թապիլաթա քիւլլէյէն  
 մուղայիր տիր : Չարարլարը փէք չօդ աըր, վէրէմի  
 ինթամ էտէր, ինսանը տիվանէ էյլէր . . . վէ զայ-  
 րիհիւմ :

Իհթիլամը մէնէվիլլէ ումուճէն հէր իւշ հաֆ-  
 թատա պիր հուսուլա կէլըր . Իհթիլամը մէնէվիլլէ  
 -թապիի պիր սէպէպ իսէ տէ- օ դատար սըհհի  
 տէյիլ տիր : Վիւճուտա կէվլէքլիք վէ զաիֆիլք  
 վէրըր : Գարը իլէ ճիմա իսէ էն թապիի վէ մադ-  
 պուլ պիր եօլ աըր . Ինսանա նէշաթ վէ ֆիքրէ  
 գուվլէթ վէրըր : Շէհվէթի էօլաիւրէրէք ճիմատան  
 մէն օլունմադ սըհհի վէ տօղրու պիր եօլ տէյիլ  
 տիր . անճագ պու պապտէ շու նօթթայա տիգ-  
 դաթ էթմէլի : Շէհվէթի էօլաիւրմէյէլիմ տէյէ-  
 րէք քեարխանէ ֆասիչէլէրինէ կիտիպ պիր իլլէթ  
 դափուսդ տա քեարը ՝ադիլ տէյիլ տիր : Շէհվէթի  
 էօլաիւրէրէք ճիմատան իմթինա էթմէքլէ վիւճու-  
 տէ թարի օլսճագ զիյան, մուտապպ պիր դարըյա  
 կիտիպ տէ խասթէլիք դափմադ պէլասընտան էր-  
 համ աըր, էհվէն ի շէրրէյն տիր :

7. Փիրէնկիլի պիր ատէմ իլլէթի պտըղտան  
 սօնկրա 2 սէնէյէ դատար նիզամի սուրէթտէ պիր  
 հէքիմին թահթը միւլահաղասընտա թէտափի օլուն-  
 մալը : Էվլէնմէյի թատիմ էթմիլ իսէ, պու իքի  
 սէնէտէն սօնկրա իքի սէնէ տասա պէքլէյիպ էօյլէ



էվէնմէլի տիր . թապիր ի ախերէ էլէթի դափ-  
տըգտան 4 սէնէ սօնկրա էվէնմէլի տիր :

8. Սաղլամ, սըհհէթի եերինտէ պիր քիմնէ  
միւսաատէսի օլունճա էվէնմէտէն կերի տուրմա-  
մայը տըր : էվէնմէք նէվ ի պէշերին պագասը  
նօգթա ի նաղարընտան վաճիպ տիր . հէյէթ ի իճ-  
թիմալյյէտէ զարուրի տիր . թապիլթ տախի  
պունը թէյիտ էտէր :

էվվէլա . էվէնմէքէ նէվ ի պէշեր պագը գա-  
լըր : Պէքեարլըգ եիւղիւնտէն իսէ ինսան ճինսի  
Փէնափէղիր օլուր :

Սանիէն . Զիւքիւր ու իւնաս (էրքէք վէ տիշի)  
արասընտա իգթիրան - էճսամը արասընտաքի  
ճաղիպլյյէթ ի ումուլիյէյէ պէնղէր- պիր մէյլի  
թապիլիյէ պէնղէր . պէքեարլըգ իսէ պու թապի ի  
գախտէյէ մուխալիֆ տիր :

Սալիսէն . Իզտիվաճ (էվէնմէք) քեաֆֆէ ի  
միլէլ ու էտեան արասընտա մէօհթէրէմ տիր ,  
մերղուպ տըր . պիւթիւն փէյլամպէրլէր թարա-  
ֆընտան թավսիյէ օլունմըլ տըր . պէքեարլըղը թէ-  
սահիւպ վէ անը էվէնմէյէ թէրճիհ էտէնղէր իսէ  
փէք աղ տըր :

Բապիէն . էվէնմէք մուճիպ ի սա'ատէթ տիր .  
ճիսմ ու 'ագլա սըհհէթ ու նէշաթ վէրիր . ի'թի-  
տալա վասըթա տըր . էօմր ուզունըղընա սէպէպ  
տիր . էվէնմէք գալպի գուլվէթլէնտիրիր . ճէր-  
եան ը տէմ ի սիւրա'թլէշտիրիր . աղայը թէնէֆ-  
ֆիւս գուլվէթլէշիր . « մալիսօլեա » , « նիւրաս-

թինեա » վէ « հիսթէրեա » կիպի խասթէլիքլէրին  
էօնիւ ալընըր . խիւլասայի քէլամ էվէնմէքտէն  
պիւթիւն ճիսմ իսթիֆատէ էտէր :

Տոթ . Ն . Պ . Քէյէճէաւն, Աւերիկայէ վկեայեալ եւ  
12 երկաւր սարիւնեռու փորձստութեալք սեզական հան-  
գաւնակներու հնուս, կարող բժիշկ :

Ափրոզիտեան կոչուած հիւանդութիւններու  
գլխաւորներն երեք են .

- Ա. Զերմամիզութիւն (Gonorrhea) .
- Բ. Կակուղ չարակեղ (Chancroid) .
- Գ. Փրանկախա (Syphilis) :

Այս ախտերու փոխանցումը տեղի կ'ունենայ  
ուղղակի և կամ անուղղակի միջոցներով :

Ա. Աղղակի միջոցներ. — Այս կերպ փոխան-  
ցումի գլխաւորն է սեռային յարաբերութիւնը ,  
զոր գործնականապէս միակ միջոցը կարելի է հա-  
մարիլ , մանաւանդ ջերմամիզութեան և կակուղ  
չարակեղի համար . իսկ ֆրանկախաը կրնայ փո-  
խանցուիլ նաև այլ հպումներով . օրինակ , համ-  
բոյրէ , անբնական սեռային յարաբերութիւններէ ,  
ֆրանկախատաւորներու խաժնելէն և « արհեստին  
բերմամբ վարակումով » (Professional contagion)  
օրինակ , բժիշկներու կամ հիւանդապահներու վա-  
րակումը՝ գործողութեանց միջոցին :

Բ. Անուղղակի միջոցներն են , լաթերու , ան-  
ձեռոցներու , սպունգներու , ևն . միջոցաւ եղած  
վարակումները , որք սակայն այնչափ հազուադէպ

են որ գործնականապէս կարելի է ըսել թէ շերմամիզութիւնը և կակուղ չարակեղը կը փոխանցուին սեռային յարաբերութեամբ միայն : Յրանկախօղ, սակայն, շատ անգամ կրնայ վարակուիլ անուղղակի միջոցներով : Լաթերը, թաշկինակները, անձեռոցները, գլանիկները, ծխամորճերը (pipe) ածելիները, վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, անհատէ անհատ պատուատումը, գ-գալները, ջրի գաւաթները, ևն. փոխանցման գլխաւոր միջոցներն են :

\* \* \*

Ջերմամիզութիւնը բուժելի է, այն պայմանաւ որ կանուխէն և խնամքով դարմանուի. հակառակ պարագային կրնայ անբուժելի և մշանջեանաւոր հետքեր թողուլ ենթակային սեռնգամիզական գործարաններուն վրայ :

\* \* \*

Կակուղ և կարծր չարակեղները (Chancroid et Chancre) իրարմէ բոլորովին տարբեր հիւանդութիւններ են : «Chancroid»ը ծննդական գործարաններու վրայ ստացուած ախտ մըն է որ հոն կը մնայ և կը բուժուի՝ առանց մարմնոյ ընդհանուր կազմուածքին վրայ ազդելու, մէկ բառով տեղային (local) հիւանդութիւն մ'է : Իսկ «Chancre»ը սկզբնաւորութիւնն է Ֆրանկախտին, որ առհասարակ ծննդական գործարաններու վրայ երեւան

կու գայ, թէև ի սկզբան նոյնպէս տեղային (local) լինելու երեւոյթն ունի, յետոյ անպայմանօրէն կ'ունենայ ֆրանկախտի երկրորդական և երրորդական ախտանիշերը, և այլ հետեւանքներ, եթէ ժամանակին պէտք եղած դարմանները չտրուին. մէկ բառով, «Chancre»ը ընդհանուր կազմային (constitutional) հիւանդութեան մը առաջին ատիճանը կամ նախանիշն է (First symptom) : «Chancroid»ը և «Chancre»ը իրարմէ զանազանել բաւական դժուար է : Նոյն իսկ բժիշկներ կրնան սխալիլ : Հաստատօրէն կարենալ զանազանելու համար պէտք է ուշի ուշով ուսումնասիրել բոլոր ախտանշական տարբերութիւնները, զորս աստ թուել աւելորդ կը համարիմ :

\* \* \*

Ֆրանկախտը երեւ տատիճաններ կամ լաւ ևս շրջաններ ունի .

Ա. Առաջին շրջանը կ'սկսի վարակման վայրկենէն և կը տեսէ միջին հաշուով վեց շաբաթ : Այս շրջանին մէջ երեւան կու գայ կարծր չարակեղը և անոր մօտակայ դեղձերու (Gland) ուռեցքը :

Բ. Երկրորդ շրջանը կ'սկսի շերմով և գլխացուով և մօրթի ու լորձնաւոր թաղանդներու (mucous membranes) կարմրանքով (eruption) : Յօդայաւ, անարիւնութիւն և ընդհանուր դեղձերու ուռեցքներ երեւան կու գան և ենթակային առողջական վիճակը կը խանգարուի : Տեւողութիւնն

է միջին հաշուով մէկէն մինչև մէկուկէս տարի . որու միջոցին ենթակային վրայ կ'երեւին մորթա- յին զանազան ախտանիշեր :

Գ. Եթէ երկրորդական շրջանին սկիզբը և անոր յաջորդող 2-3 տարուան և բաղդատմամբ երկրորդին՝ ախտանիշերէ զերծ միջանկեալ կոչուած շրջանի մը մէջ հիւանդը պէտք եղածին պէս չդարմանուի, երեւան կու գան երրորդ աստիճանի ախտանիշերը : Այս շրջանին մէջ հիւանդու- թիւնը մարմնոյն խորերը կը թափանցէ, ներքին գործարանները, ոսկորները, ջիղերը, ևն. կը վա- րակուին ֆոնիկ բորբոքումներով . նոյնպէս մորթին վրայ երեւան կու գան ուռեցաւոր քրոնիկ կեղեր (chronic tubercular ulcers), ևն. :

Պէտք է ըսել որ շրջաններու այս բաժանումը մասամբ արհեստական է և երբեք կարելի չէ բա- ցորոշ կերպով իրարմէ զատել զանոնք, և յա- ճախ հիւանդութիւնը անբնական (abnormal) ընթացք կ'ունենայ : Կրնայ պատահիլ օրինակի հա- մար որ երկրորդ շրջանի ախտանիշերը բնաւ երե- ւան չգան և առաջին « Chancre »-ի երեւումէն 4-5 տարի վերջ երրորդական կոչուած ախտանիշերը տեսնուին ենթակային վրայ . նոյնպէս կը պատահի որ երեք շրջաններու ախտանիշերը միաժամանակ երեւան գան :

Ինչպէս արդէն ըսուեցաւ, այս ախտանիշերը երեւան կու գան՝ եթէ հիւանդը յրարմանուի : Սխալ է այն ժողովրդական կարծիքը թէ « ֆրան-

կախտը անդարմանելի է » : Արդարև կան հիւանդ- ներ որք, հակառակ տրուած դարմաններու, նոյն իսկ հիւանդութեան սկիզբէն 15-20 տարի վերջ կը տառապին ֆրանկախտի հետեւանքներէն : Բայց գրեթէ առանց բացառութեան կարելի է ըսել թէ հիւանդութեան չանհետանալուն պատճառը դառ- մանու մի անբարակաւնութիւնն է : Երբ ախտին երկրորդական նշանները երեւան կու գան և բա- ցարձակ կերպով կը հաստատեն ֆրանկախտի գո- յութիւնը, կանոնաւոր և տեւական դարմանում մը կրնայ ենթական բոլորովին բուժել իր հիւան- դութենէն : Պատահած եմ հիւանդներու, որք կարճ դարմանումէ մը վերջ, երբ կը տեսնեն որ իրենց վրայ երեւցած նշանները կ'անհետանան, դարմանումը շարունակելէ խոյս կու տան՝ պար- զապէս մտածելով որ առողջացած են և թէ չեն ուզեր շահագործուիլ բժիշկներէ կամ դեղագործ- ներէ : Մինչդեռ երբ առերեւոյթս դարմանուած կ'երեւին, ներքնապէս հիւանդութիւնը կը շարու- նակէ իւր կործանիչ դերը կատարել և ապագա- յին երեւան կու գան ախտանիշեր՝ աւելի խորար- մատ, որոց դարմանումը շատ անգամ անկարելի կը դառնայ ուէ բժշկական և այլ միջոցներով : Այսպէս անհոգութիւնը և անհամբերութիւնը կրնան անդարմանելի, նոյն իսկ մահացու դարձնել ֆրանկախտը :

Ուրիշ հետեւանք մը անդարման մնացած ֆրանկախտին՝ ժառանգականութիւնն է : Մարդ-

կային ցեղի թշուառութեանց ամենամեծ պատճառներէն մին եղած է ֆրանկախտաւորներու ամուսնութիւնը՝ կատարելապէս բուժուելէ առաջ:

Ֆրանկախտաւորներու ամուսնութեան և իրենց հիւանդութեան սերնդական փոխանցման մասին հետեւեալ չորս կէտերը պէտք է ուշադրութեան առարկայ ընել.

1. Ֆրանկախտը ամէնէն աւելի ժառանգական կը դառնայ երբ ամուսնութիւնը տեղի կ'ունենայ հիւանդութեան առաջին տարեշրջանին մէջ: Երբ այր և կին հաւասարապէս վարակուած են՝ զաւկին փոխանցումը գրեթէ անխուսափելի է: Եթէ մայրը միայն վարակուած է, հաւանականութիւնը քիչ մը կը պակսի: Իսկ երբ հայրը միայն վարակուած է, հաւանականութիւնը 50% կը պակսի:

2. Փոխանցման հաւանականութիւնը հետզհետէ կը պակսի մինչև 4րդ տարին, որմէ ետքը շատ հազուադէպ է: (Այս երկու պարագաներուն մէջ կ'ենթադրուի որ հիւանդութիւնը անդարման ձգուած է):

3. Չորս տարուան պայմանաժամը և կաւոն-նաւոր դատմանը, այնչափ կրնան փոխանցման առաջըն առնել որ այս պարագաներու մէջ զաւակայ փոխանցումը գործնականապէս անկարելի կը դառնայ:

4. Բացառաբար կրնայ պատահիլ նաև որ չորս տարուան պայմանաժամը և կանոնաւոր դարմանումը չկրնան արգելել հիւանդութեան ժա-

ռանգաբար փոխանցումը: Բայց այս պարագան այնչափ հազուադէպ է որ կրնայ զանց առնուիլ ֆրանկախտի և ամուսնութեանց խնդրոյն մէջ:

Եզրակացութիւն. — Վերոյիշեալ չորս կէտերէն կրնանք եզրակացնել որ մարդ մը, որ ֆրանկախտէ վարակուած է և չորս տարուան շրջանի մը մէջ օրինաւոր կերպով կը դարմանուի, կրնայ ամուսնանալ և աւողջ զաւակներ ունենալ:

\* \* \*

Բոլոր այն միջոցները, որոնք կը յանձնադրուին, բողանոց յաճախելով հանդերձ զերծ մնալու համար ափրոդիտեան հիւանդութիւններէ, մասամբ միայն օգտակար կրնան ըլլալ: Բացարձակապէս ապահով ուէ միջոց չեմ ճանչնար: Կը հաւատամ որ կը գտնուին անհատներ, որք բողանոց յաճախելով հանդերձ զերծ կը մնան ուէ հիւանդութենէ, բայց անոնք մինչև վերջը անպատիժ կրնան մնալ: Կարելի չէ գուշակել զայդ:

Այս առթիւ մէկ երկու թելադրութիւն անօգուտ չէ, կարծեմ: Ափրոդիտեան հիւանդութիւնները առ հասարակ կը պատուաստուին ծննդական գործարաններու վրայ գտնուած նշմարելի և նոյն իսկ աննշմարելի քերթուածներու կամ վէրքերու միջոցաւ, որոնք իրենց կարգին յառաջ կրնան գալ ազոտութենէ և աւողջապահական զգուշութեանց չգոյութենէն: Ուրեմն ակներև է որ անմաքրութիւնը մեծ դեր կը կատարէ յիշեալ ախտերու

վարակման դործին մէջ: Նոյնպէս դիտելի է որ գինովութիւնը մասնաւորաբար ենթակայ կ'ընէ զմարդ այդ հիւանդութեանց: Ուստի կրնանք եզրակացնել որ անմաքրութեան և արբեցողութեան պէս չարիքներ մարդը կ'առաջնորդեն աւելի մեծ չարիքներու, որպիսիք են՝ ավիրողիտեան հիւանդութիւնները:

\* \* \*

Ժուժկալութեամբ ապրուած կեանքը կրնայ մլասել կազմութեան. — Ամենէն դժուար հարցումներէն մին է, որուն կարելի լինի պատասխանել մէկ դրչի հարուածով: Ժուժկալութեան վնասը կամ օգուտը նկատի առնելէ առաջ պէտք է որոշել թէ կարելի՞ է ժուժկալ ըլլալ և մինչև ե՞րբ: Ամէն մէկ անհատ առանձին պէտք է դատել: Սեռային բնազդը ամէն մարդու մէկ աստիճան չէ տրուած: Կազմը, խառնուածքը, պարագաները, կլիման, սնունդը, մտային զարգացումը, կարգացուած գիրքերը և յաճախուած վայրերը, ամէնն ալ կ'ազդեն սեռային բնազդին, հետեւաբար և ժուժկալութեան կամ անժուժկալութեան վրայ: Ես այն գաղափարէն չեմ որ ամէն մարդու պէտք է ստիպողական ընել ժուժկալութիւնը, և արդէն անօգուտ է: Զսպուած կիրք մը աւելի ուժգնօրէն և անբնական կերպով կը պոռթկայ: Բայց թէ ներելի՞ է բողանոց յաճախել... մեր վերև յիշած ավիրողիտեան հիւանդութիւններու ամէնուրեք դոյու-

թիւնը և անոնց ահռելի հետեւանքները արդէն ինքնին կը պատասխանեն այս հարցման: Իմ կարծիքովս, այն երիտասարդները, որք բնութենէ օտուտուած են բուռն սեռային բնազդով, զոր չէ կարելի զսպել ուէ բնականոն միջոցով, պէտք է ամուսնանան՝ ջանալով կնքել ամուսնութիւն մը՝ որ ամէն կերպով համապատասխանէ իրենց ընկերական դիրքին և ֆիզիքական պայմաններուն:

\* \* \*

Աւելորդ է մեր կողմէն որևէ բան աւելցնել այս չորս ուսեալ և փորձառու բժիշկներուն տուած հաւաքական վկայութեան վրայ: Անոնց համաձայնութիւնը գլխաւոր բոլոր կէտերուն մէջ ուշագրաւ է և դերակշիռ հեղինակութիւն մը ունի: Իր առողջութիւնը գնահատող ոչ մի երիտասարդ այս տողերը կարդալէ յետոյ պիտի զիջանի, եթէ խելք ունի, Աստղիկի երկրպագութիւն մատուցանել:

Փրանկախտի վրայ անոնց գրածները պէտք է որ կարդան թէ առողջները և թէ անոր զոհ գացած խղճալի արարածները: Բոլորը միաբերան կը վկայեն թէ ինչ սոսկալի աւերումներ կրնայ գործել այդ ճիւղը մարդկային մարմնոյն մէջ: Իարմանումը հաւանական կը նկատեն, եթէ արդէն արիւնը չէ ապականած: Բայց ամէն պարագայի մէջ, չորս կամ հինգ տարիներու կանոնաւոր և համբերատար խնամք կը պահանջեն, որպէս զի կարող ըլլան մի քիչ յոյս ներշնչել: Հակառակ

պարագային՝ մահը նուազագոյն չարեքը կը թուի ըլլալ անոր արտադրած աղէտներուն մէջ:

Ժուժկալութեան ազդեցութիւնը մարդկային կազմութեան վրայ խնդիր մըն է որ կ'երեւի թէ տակաւին լուծուած չէ: Տորթ. Արչարունի կը կարծէ թէ « որեւէ մըսս մը չունի կազմութեան համար. » իսկ Տորթ. Քէյէճեան ոմանց համար մըսասակար կը նկատէ: Անիկա կ'ըսէ, « Գալով ժուժկալութեան մըսսին մարդկային կազմութեան վրայ՝ այնպէս կը կարծեմ որ երիտասարդ մը, որ կը վայելէ կատարեալ առողջութիւն և իր խառնուածքը ու զինք չըջապատող պարագայք մասնաւորապէս ենթակայ ըրած են սեռային գրգռմանց, այդ գրգռումը բունի զսպելով կրնայ մտային, բարոյական և նիւթական քայքայումներ կրել իր կազմուածքին մէջ: » Տորթ. Շամլեան և էքմէքճեան ամուսնութիւնը կը յանձնարարեն և անոր առաւելութիւնները կը բացատրեն:

Անոնցմէ և ոչ մին հաւատք կ'ընծայէ ինքնապաշտպանութեան համար գործածուած միջոցներուն: Ահա Տորթ. Շամլեանի վկայութիւնը: « Հակառակ բոլոր նախազգուշութեանց՝ վարակումը հազուադէպ բան չէ: Որեւէ հնարք ապահով ըլլալէ հեռու է: Մեղաւից հաճոյքին քով վտանգը պատրաստ կեցած է: » Նոյնպէս Տորթ. Արչարունի կ'ըսէ. « Ինքնապաշտպանութեան միջոցներուն կարելի չէ բացարձակապէս հաւատք ընծայել: » Տորթ. Քէյէճեան կ'ըսէ. « Բացարձակապէս սպա-

հոյլ որեւէ միջոց չեմ ճանչնար: Տորթ. էքմէքճեան մինչև իսկ իրեն ծանօթ բժիշկներու անձնական փորձառութիւնը մէջ բերելով նոյն ճշմարտութիւնը կը հաստատէ: « Մահիչէլէրէ կիտիպ տէ պու իլլէթլէրաէն ազատէ գալմագ իչիւն գուլլանըլան ինթիյաթքեարանէ թէրթիպլէր հէփ պիէսաս վէ զաիֆ շէյլէր սիր: Պազը ադթոր սոսթլարըմը թանըրըմ քի հէր նէ եօլ գուլլանըլ իսէլլէրաէ, պու իլլէթի ալմագ թէհլիքէսինտէն քէնտի քէնաիլէրինի գուրթարամամըլլար սըր: »

Հարցումը թէ ախրողիտեան ախտերէն բըռնուած երիտասարդը ամուսնանալու իրաւունք ունի՞, պատասխան մը ընդունած է որ պայման կը դնէ երկար տարիներու դրութեանական խնամք և կատարեալ ապաքինում: Տորթոր Արչարունի մասնաւորելով իր խօսքը վրանկախտի վրայ կ'ըսէ. « Միայն այն ատեն ձեռքս խզելիս վրայ դրած կրնամ թոյլատրել ամուսնութիւնը, եթէ հիւանդը առնուողն հիւնգ սարի իմ դարմանումիս և հսկողութեանս ենթարկած է ինքզինքը: » Շատ բանաւոր է այս պահանջը: Տորթ. Զօրլեան Աղեքսանդրիայէ կը գրէ. « Փրանկախտէ կատարելապէս բուժուած ըլլալը հաստատելու համար՝ վարակուող մը պէտք է շատ անգամ բժշկական քննութենէ անցնի: Հիւնգ սարի շարունակ դարմանուելէ վերջը միայն հրաման տալու է ամուսնութեան: » Աւելի ապահով ըլլալու համար կ'ըսէ թէ հիմա Եւրոպայի մէջ Wasserman reaction կոչ-

ուած դրութեամբ հիւանդին արիւնը կը քննեն : Այս միջոցաւ միայն կարելի է դրականապէս հաստատել կատարեալ ապաքինումը :

Արդարեւ ան անձը, որ այս ախտերէն վարակուած է և անոնց վրայ թեթեւօրէն կը խորհի և չփութար դարմանուիլ, ամուսնութենէ խաղաղը կուտելու է : Ինքը արդէն մեռած է, ինչո՞ւ թող տալ որ անմեղ աղջիկ մըն ալ իր հետ կորսուի : Եւ զարմանալին ի՞նչ է՝ գիտէք : Ախտացեալ մարդիկ ամէնէն աւելի մաքուր և առաքինի աղջիկները կը փնտռեն : Բողբու անմաքրութենէն զրուած և փորձառութիւն ստացած, առաջին բանը զոր տեսնել կ'ուզեն իրենց կենակցին վրայ՝ անոր առողջութիւնն է : Այն աստիճան անճնասէր են որ չեն խորհիր թէ ինչ որ իրենք կը պահանջեն՝ նոյն բանը իրենցմէ ալ կը պահանջուի : Քանի՞ գեղանի և մաքրակենցաղ կոյսեր այսպիսի ազոտա և կիսամեռ այրերու զոհ գացած են :

Տղթ. Էքմէքճեան խնդիր մը կը յարուցանէ որ անցեալները մեր ազգային շրջանակներուն մէջ վիճարանութեան առարկայ եղաւ : « Կէնճ էրբէք վէ եա գըզ էվլէնմէտէն էվլէլ ֆամիլեա հէքիմի թարաֆընտան մուսեէնէ օլունտալար, տահա մուվաֆըդ տըր : էրբէք՝ գըզ ֆամիլեասընըն հէքիմի, գըզ իսէ՝ էրբէք թարաֆընըն թապիպի մարիֆէթիլէ մուսեէնէ օլունմալը տըրլար : » Ինչո՞ւ չէ : Գոնէ այս երկրին համար անհրաժեշտ է ասոր նման կարգադրութիւն մը : Թող հրապարակուին

ախտացեալ անհատները որպէս զի մէկ կողմէն աղջիկները զգուշանան անոնցմէ, և միւս կողմէն երիտասարդներուն օրինակ մը ըլլայ :

Միայն կինը չէ որ կը զոհուի : Անոնց զաւակները աշխարհ կու գան սոսկալի ախտերով վարակուած : Աղեխարշ է անոնց երեւոյթը : Յաւի ուտանջանքի մէջ կ'ապրին, և կարճ կեանքէ մը յետոյ կանխահաս մահով մը գերեզման կ'իջնեն : Տղթ. Չօրլեան կ'ըսէ. Միզանցարորբումէ տառապողներուն ապաքինումը եթէ ժամանակին չգործադրուի, անոնց զաւակները մերթ կոյր կը ծնին : Փրանկախտ ունեցող մայրը կամ կը վիժէ կամ ծննդաբերութենէ քիչ վերջը կը մեռնի զաւակը : Հարկչկայ միւս բժիշկներուն վկայութիւնը կրկնելու : Ժառանգականութեան վրայ անոնց յայտնած դաղափարները նոյնը կը հաստատեն :

Որո՞ւն է յանցանքը : Ո՞վ է հեղինակը այս չարեաց : ՏԳԻՏՈՒԹԻՒՆԸ : Ո՞հ, ընկերութիւնը երբ պիտի տեսնէ վտանգին գոյութիւնը, մարդկութեան թշնամեաց այս մեծագունին դէմ մաքառելու համար երբ իր ուժերը պիտի հաւաքէ, երբ կեղծ ամօթխածութեան քօղը մէկ կողմ նետած՝ աներկիւղ պիտի խօսինք, մեր դեռատի զաւակներուն և եղբայրներուն կեանքի գաղտնիքներուն վրայ և սորվեցնենք անոնց գիտութեան ճամբան :

Երիտասարդներ, ով այս տողերը ընթերցող պատանիներ, մանաւանդ դուք որ առողջ մարմ-

նոյ մը բոլոր հրճուանքները կ'ըմբռնէր, գնահատեցէք ձեր առողջութիւնը, և ամէն գնով զայն պահելու հոգ տարէք: Թող մի տաք որ անիկա ձեզմէ կորզուի, ինչքան ալ մեծ ըլլայ փորձութիւնը: Միշտ յիշեցէք թէ առաջին քայլը ս'ը կրնայ առաջնորդել ձեզ: Կրքի վայրկեանական յագուրդը մերթ ինչ լայնածաւալ արդիւնքներ կ'ունենայ: Մէկ անխոհեմ գործը տասնեակը մը թըշուառութեանց պատճառ կ'ըլլայ: Զգուշացէք այդչար ըոպէէն: Հետեւութիւնները հաշիւ ըրէք: Մի ըլլաք պատճառ ձեր կեանքին և ձերին հետ ուրիշ անմեղ կեանքերու խորտակման: Եթէ երբեք կործանման վիճին եղբրքները կը պարտիք, եթէ երբեք ձեր ոտքերը անոր զառիվայրէն բռնուած կ'զգաք, արիական որոշումով մը անկէ ետ ետ քաշուեցէք: Իսկ դուք որ, աւանդ, արդէն ինկած էք, որ արդէն այդ դժոխային դեւերէն կալանաւորուած էք, ի միտ առէք վերև յիշուած բժիշկներուն խրատը: Շուտ, առանց վայրկեան մը իսկ կորանցնելու, ձեր անձին փրկութիւնը գործել փութացէք: Իարմանումի պայմանաժամը որքան ալ երկայն ըլլայ, միջոցները որքան ալ դժուար ըլլան, համբերութեամբ, յարատեւութեամբ, ենթարկեցէք ձեր անձերը կարող բժշկի մը խնամքին և թող մի տաք անոր օձիքը, մինչև որ կարող ըլլայ վստահաբար ըսել ձեզ, «Գնա այլեւս մի մեղանչեր:»

Օրիորդներ, պիտի զարմանաք անշուշտ երբ

ըսեմ թէ այս խնդրոյն մէջ դուք ալ ունիք պարտականութեան բաժին մը: Հոգ չէ թէ ձեր թեկնածու երիտասարդներուն շատ մը թերութեանց համար ներողամիտ հոգի մը կը կրէք. բայց անոնց սեռական առողջութեան նկատմամբ որչափ կրնաք խստապահանջ եղէք: Այս բանին մէջ տեղի մի տաք: Անոնց անցեալը խուզարկեցէք, ամէն բանէ առաջ մաքրութիւն, առողջութիւն պահանջեցէք: Միթէ պարկեշտ երիտասարդը կ'ամուսնանայ այն օրիորդին հետ որ իր որեւէ մէկ արարքովը կասկածելի եղած է: Ինչո՞ւ դուք ալ նոյն չափանիշը չէք գործածեր: Ներողամտութիւնը, այո, առաքինութիւն մըն է, բայց ոչ այս պարագային մէջ: Աւելի աղէկ է որ աղջիկ մը բնաւ չամուսնանայ, մինչև իր կեանքին վերջը կոյս մնայ, քան թէ չբուժուած մարդու մը հետ ամուսնանալով ցմահ թշուառ ու ապերջանիկ ըլլայ: Եթէ անգամ մը հասկցուի թէ իգական սեռը հարստութենէ, դիրքէ, դաստիարակութենէ և վայելչութենէ աւելի առողջութիւն և մաքուր կեանք կը փնտռէ այր մարդուն վրայ, երիտասարդները զգոյշ պիտի ըլլան իրենց անձերը անաղարտ պահելու և առաքինի ամուսիններու թիւը պիտի բազմապատկուի:



ԺԱ.

ԵՐՐԵԱԿ ՄԵՂՔԸ

Նախընթաց հատուածներուն պարունակութենէն դիւրին է եզրակացնել թէ ցարդ մեր տեսակէտը անհատական եղած է, այսինքն՝ անբարոյական կեանքի մը արտագրած անձնական չարիքները մատնանիչ ընելով երկատաարդները ֆիզիքական մտաւորական և հոգեկան կործանումէ զգուշացնել աշխատած ենք: Սակայն խնդրոյն միւս կողմն ալ կայ: Վաւաշտութիւնը անմիջական աւերումներէն զատ, զորս կը գործէ ենթակային մէջ, ունի նաև ընդարձակածաւալ հետեւանքներ: Վտանգի շեփորը վար չդրած, ահազանգի պարանէն մեր ձեռքը չքայած, կը հրաւիրենք յարգոյ ընթերցողները վայրկեան մըն ալ ունկնդրել անոր գանգիւնին արձագանգը որ կուգայ ընտանեկան, ընկերական և կրօնական հաստատութեանց խորերէն: Անբարոյականութիւնը երբեակ մեղք մըն է ընդդէմ ընտանիքի, ընկերութեան և Աստուծոյ:

ԸՆԴՈՒՅՄ ԸՆՏԱՆԻՔԻ

Ընտանիքը ամուսնական սիրոյ վրայ կառուցուած հաստատութիւն մըն է: Ընտանեկան յարկը

սահմանուած է ըլլալ սրբութեան, մաքուր կենցաղի և երջանկութեան վայր մը: Սուրբ Գիրքը զայն կը ներկայայնէ Աստուծոյ թագաւորութեան իբր մի մանրանկարը: Առն և կնոջ միջև գոյութիւն ունեցող սերտ առնչութիւնը համապատկեր մը կը կազմէ՝ Իրիստոսի իր Եկեղեցւոյն հետ ունեցած սրբազան յարաբերութեան: Այն բոլոր արարքները որ կը խանգարեն այս նուիրական կազմակերպութիւնը՝ սրբապղծութիւն է: Անոնք որ թեթեւամտութիւն ընտանիքի մը սրբութիւնները օտնակոխ կ'ընեն կամ այս իմաստը կը խեղաթիւրեն, անոր դէմ կը մեղանշեն:

Ապաքէն պարսաւելի է ամուրի և անտուն անհատի մը շուայտ ապրելակերպը, բայց հազար անգամ աւելի դատապարտելի է ընթացքը անոր որ ընտանիքի մը բոլոր օրհնութիւնները վայելելով հանդերձ տակաւին կ'ապրի խենէշ կեանք մը: Ի՞նչ աստիճան ստորնացած է այն մարդը, որ բարի, մաքուր և առաքինի կին մը ունի և միանգամայն կ'երթայ ապականեալ բողի մը գրկաց մէջ հաճոյք ուրոնել: Օրինաւոր կնոջ անազարտ անկողինը պոռնիկի մը ազտոտ անկողնոյն հետ փոխանակել, մաքուր տան մը կենարար մթնոլորտին մէջ ապրելէն յետոյ բողանոցի մը գարշահոտ և հեղձուցիչ օդին հանդուրժել վատասեռութեան ինչ խորութիւն է: Ի՞նչ մակդիրով պիտի որակենք սիրասուն զաւակներու տէր հայրը, որ խեղճ չընէր նոյն բազուկներով գգուել զանոնք և փողոցի փտախտաւոր կնիկը:

Որչափ որ անբնական և անկարելի կը թուի այս, բայց ցաւալի է ըսել թէ ընտանեկան կեանքի նուիրականութիւնը եղծանող արարքները հաղուադէպ չեն այն երկիրներուն մէջ, ուր հանրային տունները սովորական և ծանօթ վայրեր եղած են և որոնց մուտքը բայ է ամէնուն առջև անարգել: Եւրոպայի մեծ քաղաքներուն մէջ կատարուած լիճակագրութենէն կը տեսնուի թէ անոնք մեծաւ մասամբ ամուսնացեալ այրերու գրամովը կը պահպանուին: Սոսկալի յայտնութիւն մըն է այս: Մարդուն հաւատալը չգար: Այն վաստակը որ ընտանեաց և զաւակներու իրաւունքն էր, որ անոնց խնամքին և կրթութեան համար պիտի գործածուէր, կ'երթայ բողբուն գրպանը լեցնել: Անհանգուրծելի խորհուրդ:

Այս նուաստացման բացատրութիւնը պէտք է վնասուել, կարծեմ, այն իրողութեան մէջ թէ երկտասարգը, որ իր ամուրիութեան ժամանակ մաքրակենցաղ չէ եղած, ամուսնանալէն յետոյ իր կնոջ հաւատարիմ մնալու դժուարութիւն կը կրէ: Ինչ բանի որ մարդ վարժուած է տարիներով անկէ դիւրաւ չկրնար ազատիլ: «Ունակութիւնը պարան մըն է զոր կը հիւսենք ամէն օր՝ անոր վրայ թել մը աւելցնելով, մինչև որ զայն խզելու անկարող կ'ըլլանք»: Ռուսները, որոնք վատահամբաւ տուններու զաղիր հոտերուն ընտելացած են, ընտանեկան քաղցրաբոյր օգը չեն կրնար գնահատել: Ճախիններու մէջ սնած խողը հանգստա-

ւէտ սենեակի մը մխիթարական առաւելութիւնները չճանչար: Օտար կիներու փոփոխութեամբ և զանազանութեամբ յափրացած մարդուն համար միակնութիւնը տափակ և միօրինակ կը թուի: Աւելի դրամ քաշելու համար անոնց հնարած հաղարումէկ գրգռիչ միջոցները այն աստիճան ազաւաղած կըրնան ըլլալ անոր սեռական փափաքները որ ան չկրնար յազենալ սովորական պարզ մերձաւորութենէ: Ինչպէս որ դինեմյը զօրաւոր և այլազան օղիներու ազդեցութենէն կը կորսնցնէ լուսագոյն և առողջարար ըմպելիներու ճաշակը, նոյնպէս ալ ամուրիութեան ատեն սովորաբար շնացողը կը զրկուի պարկեշտ կնոջ մը ընկերակցութեան բերկութիւններէն: Այս անբնական վիճակին բերմամբ անկիկա կը վերագառնայ իր նախկին կենցաղին, «ինչպէս շունը նորէն իր փոխածին՝ և լուսցուած խողը ցեխի մէջ թապլտկելու:»

Ընտանեկան կազմակերպութեան դէմ գործուած մեղք մըն ալ համանի պահելու սովորութիւնն է: Այս չարիքը բնականաբար ընչեղ դասակարգին կը պատկանի: Ոմանք ունենալով հանդերձ կին և զաւակներ՝ իրենց մտեկան կիրքերուն այն աստիճան գերի եղած են որ անդին հասարակ կին մը կը վարձեն ու զատ տան մը մէջ փակելով անոր այցելութիւն կու տան: Ազգային շրջանակներու մէջ ծանօթ անհատներ ոչ միայն գաղտնապէս այլ և մերթ յայտնապէս, անպսակ կնոջ մը հետ կը կենակցին, և ոչ ոք կը թուի ատոր

մէջ արտաքոյ կարգի բան մը տեսնել: Առանց շիկնելու, առանց ամաչելու, ամէն տեղ մուտ կը գտնեն, պարկեշտ ընտանիքներու հետ բարեկամական այցելութիւններ կը փոխանակեն, հանրային գործերու կը մասնակցին և զարմանալին այն է որ ամէնուն կողմէ պատուով կ'ընդունուին: Եթէ քիչ շատ բարեսիրական նպատակներու համար վճարեն՝ ալ լննցաւ, հերոսներու կարգը կը դասուին և թերթերու մէջ բարձր գովեստներու կ'արժանանան: Ո՛րքան ապականած են մեր բարքերը այս երկրին մէջ: Քրիստոսի շուանէ խարաղանին կը կարօտինք մեր ընտանեկան յարկերը մաքրելու՝ անոնց շուրջը դիզուած անմաքրութիւններէն և իւրաքանչիւր տան ճակատին վրայ գրելու. « Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, ու անկողինը անարատ է. բայց պուստիկները ու շնացողները Աստուած պիտի դատէ:»

Ընտանիքի դէմ գործուած ամէնէն մեծ մեղքը, սակայն, ամուսնացեալ պարկեշտ կնոջ կամ կոյս աղջկան մը սիրտը գրաւելու համար կատարուած ստոր փորձերն են: Կարգ մը անբարոյացած սինըքորներ, չբաւականանալով փողոցի կիներով, ընտանեկան խաղաղ յարկերէն ներս կը սողոսկին և իրենց գարշելի ներկայութեամբ անոնց անգործութիւնը կը վրդովեն: Իբր բարեկամ, և երբեմն մինչև իսկ իբր ազգական, յարաբերութիւն կը մշակեն, և պարզամիտ կիները և աղջիկները մոլորցնել կ'աշխատին: Արտաքուստ անվնաս երեւցած՝ բայց ի ներքուստ ժահրալիր այս թիւերը տա-

կաւ ի յայտ կ'ածեն իրենց խսկութիւնը, բայց ի՞նչ օգուտ... մերթ շատ ուշ:

Ահա նմոյշ մը իրազան կեանքէ, որուն նմանք մէկէ աւելի անգամներ հոգեւոր իշխանութեանց առջև բերուած է լուծում ստանալու համար:

Ամուլ մը տարիներէ ի վեր երջանիկ կեանք մը կ'ապրէին միասին: Իրարու կատարելապէս հաւատարիմ էին որսով և կենցաղով: Իրենց միջև ուէ լուրջ գժաութիւն չէր պատահած: Դրացի ընտանիքի մը հետ բարեկամացած էին և անոնց հետ այցելութիւն կը փոխանակէին: Հոն երիտասարդ մը կար, որ չար նպատակներ կը տածէր այս կնոջ հանդէպ: Նախ կ'սկսի գովեստներ շուայլել անոր: Իբրեւ թէ դեղեցկութիւնը անզուգական է, հասակը շքեղ և աչքերը հրապարուրիչ են: Կիներ բնապէս թէև առաքլինի, բայց քիչ մը սնապաշտ և դիւրահաւան էր: Անոր ոսկեզօծ խօսքերը անկեղծ կը նկատէ, անոնց ունկընդրելէ հաճոյք կ'զգայ: Ասոր վրայ երիտասարդը կը քաջալերուի, աւելի համարձակութիւն կը գտնէ և վերջապէս իր միտքը բացորոշապէս կը յայտնէ: Խեղճ արարածը դող կ'ելլէ, կը սոսկայ, և բարեկամութիւնը խղել կ'աշխատի: Բայց ի՞նչ միջոց գործածելու է, էրկը բան մը չգիտեր և կատարելապէս վստահ իր կնոջ վրայ, անոնցմէ հեռանալու պատճառ մը չտեսներ: Կիներ կ'ստիպուի պաղ վերաբերում մը ունենալ երիտասարդին հանդէպ, բայց դժբաղդաբար անիկա տարբեր

իմաստով մը կը մեկնէ անոր այս վարմունքը և աւելի կը գրգռուի։ Օր մըն ալ, սև օր մը, այդ սրիկան իմանալով որ կինը մինակ է տունը, հոն կ'երթայ, և բռնի անոր վրայ կը յագեցնէ իր կիրքը։ Պոռալ, օգնութիւն կանչել անկարելի է. պատուոյ խնդիր կայ գործին մէջ։ Բայց պահել ալ չկրնար. խղճմտանքը կը տանջէ զինք և վերջապէս եղբուրթիւնը կը պատմէ իր ամուսնոյն։ Ա՛լ կրնաք երեւակայել արգիւնքը։ Փոթորիկը կը փրթի։ Ամուսինը կը փրփրի և կ'որոշէ սպանութեամբ իր վրէժը լուծել, մինչև որ բարեկամներ կը միջամտեն և շատ համոզկեր խօսքերով, անոր պատուոյն և ընտանիքին սիրոյն դիմում ընելով, ոճրագործութենէ ձեռքը ետ կը կեցնեն։

Անցեալները Ամերիկեան թերթերը գրեցին հոն բնակեալ Հայ ընտանիքի մը մէջ կատարուած այսօրինակ դործի մը վրայ, որ եղբրական վախճան ունեցաւ։ Բարեկեցիկ Հայ մը իր աղքատ մէկ ազգականը Ամերիկա բերել կու տայ և զայն իր ծախքերով դպրոց կը զրկէ։ Այդ ապիրատ երիտասարդը, փոխանակ երախտապարտ ըլլալու և իր բարերարին ազնուասրտութիւնը դնահատելու, անոր դեռատի կնոջ կը սիրահարի և զայն իր էրիկէն յափշտակել կը նկրտի։ Ամուսնալուծութեան համար խնդիրը դատարան կը բերուի և երբ լրբօրէն իր սէրը կը խոստովանէր անոր կնոջ համար, մարդուն համբերութիւնը կը հատնի, և քաշելով իր վեցհարուածեանը զայն գետին կը

տապալէ նոյն իսկ դատարանին մէջ և դատաւորներուն ներկայութեանը։ Ո՞վ է որ զինքը պիտի դատապարտէ . . . :

Կառավարութիւնը օրէնքներ ունի, որոնցմով կը դատապարտէ և կը պատժէ ոճրագործները։ Գողը կամ մարդասպանը, երբոր բռնուի, իրեն արժանի հատուցումը կ'ընդունի։ Բայց յաճախ խորհած եմ թէ անիկա չունի այնպիսի օրէնքներ, որոնցմով կարող ըլլայ ըստ արժանւոյն պատժել ամուսնացեալ կնոջ կամ կոյս աղջկան մը պատիւը բռնաբարողը։ Եթէ անիրաւուած ամուսին մը դատարան դիմէ, շատ շատ ամուսնաթողութիւն մը կրնայ ձեռք բերել։ Մեղապարտը իր օձիքը կ'ազատէ կամ բոլորովին անպատիժ, կամ թեթև պատիժով մը։ Եթէ մարդասպանը կախաղանի արժանի է, ի՞նչ պատուհաս պէտք է տրուի անոր որ ամբողջ ընտանիքի մը բարոյական սպանութեան պատճառ կ'ըլլայ։ Եթէ մէկուն խանութը բացած և անոր դրամները գողցած աւազակը տարիներով բանտարկութեան կը դատապարտուի, որպիսի պատիժ մը պէտք է տնօրինել այն աւազակին որ աղջկան մը էն թանկագին ստացուածքը, անոր կուսութիւնը, կը գողնայ, կամ մարդու մը կինը կը յափշտակէ։ Ո՞հ, թուի թէ հիները պատուոյ և ընտանեկան սրբութեան մասին մեղմէ աւելի բժականդիր էին։ Մովսիսական օրէնքը մահու պատիժը տնօրինած էր թէ առն և թէ կնոջ համար որ կը շնար։ « Ով որ ուրիշ մար-

դու մը կնոջ հետ շնութիւն ընէ անշուշտ պիտի մեռցուի . շնացողն ալ, շնացեալն ալ պիտի մեռցուին : »

Տես թէ ինչ ընդարձակածաւալ և եղեռնական հետեւանքներու կը յանդի յաճախ ընտանիքի մը դէմ գործուած մեղքը : Դժբաղդաբար շնացողը և շնացեալը մինակ չեն որ կը տուժեն : Անոնց հետ ամբողջ ընտանեկան երջանկութիւնը կը ջնջուի : Բոլոր պարագաները ամօթահար կը լինին , շատ անմեղներու պատիւը օտնակոխ կ'ըլլայ և՛ եթէ զաւակներ կան՝ անոնց ճակատին վրայ կը դրոշմուի նախատինքի այնպիսի կեղտ մը, որ մերթ անոնց կեանքին մինչև վախճանը կը տուէ : Իրաւամբ կը հարցնէ Սողոմոն . « Հնար է որ մարդ իր ծոցը կրակ դնէ և հանդերձները չայրին . հնար է որ մարդ կրակի կայծերու վրայ քալէ և անոր ոտքերը չայրին : Այսպէս է իր դրացւոյն կնոջ քով գացողը . ով որ անոր դպչի՝ անմեղ չըլլար : »

Ամէն անգամ որ կը կարդամ Դաւիթ թագաւորին այդ մեծ մեղքին վրայ , ի հեճուկս անոր միւս առաքինութիւններուն , զայն ատելու կը հակամիտիմ : Թէև ունէր բազմաթիւ կիներ , բայց որ մը պատահաբար տեսնելով Բերթաբէէի մերկութիւնը՝ կը սիրահարի անոր և կը բռնաբարէ զանիկա : Այս մեղքը սքոզելու համար կեղծաւորութեամբ կ'աշխատի անոր յղութիւնը իր էրկան վերագրել : Երբ ասոր մէջ չյաջողիր , վատաբար

զայն պատերազմի մէջ սպաննել կու տայ և իր շնութեան մեղքին վրայ կ'աւելցնէ դաւաճանութեան և սպանութեան մեղքերը :

Ինչպէս հայր նոյնպէս որդի : Աւելի կարկառուն օրինակ մը թէ ընտանեկան սրբութեան դէմ գործուած մեղքը ինչ քստմնելի ոճիրներու կրնայ առաջնորդել , առնենք անոր երէց որդւոյն Ամնոնի ընթացքը իր լոկ ի հօրէ քրոջ Թամարի հանդէպ որ Արիստողոմայ հարազատ քոյրն էր : Վատութեան վերջին աստիճանն էր անոր արարքը : Նախ որ իր քոյրն էր , և յետոյ փոխանակ զայն օրինաւորապէս կնութեան առնելու՝ խաբերայութեամբ անոր կուսութիւնը կը պղծէ և իբր այլեւս անպէտ առարկայ մը տունէն դուրս կը նետէ : Ո՛վ չհամակրիր Արիստողոմայ որ դաւով կ'սպաննէ զԱմնոն և իր քրոջ վրէժը կը լուծէ : Բայց արդիւնքը սուկալի եղաւ : Այդ մէկ մեղքէն ծնունդ առաւ եղբայրասպանութիւն , ընտանեկան երկպառակութիւն , ապստամբութիւն , քաղաքական պատերազմ և քսան հազար անմեղներու զոհարելութիւն : Դժբաղդ տնօրինութիւն մըն է որ մեղքին արգասիքը մինակ մեղաւորը չէ որ կ'ընդունի : Հայր , մայր , զաւակներ , ազգականներ , բարեկամներ , համայնքներ և երբեմն ալ՝ ինչպէս այս պարագային՝ բովանդակ ազգ մը անոր երեսէն կը վրասուին : Վստահ եմ թէ , եթէ Դաւիթ պատժած ըլլար Ամնոնը օրինակելի պատահասով մը , Արիստողոմ անոր դէմ ոխ պիտի չպահէր և յաջորդ չա-

րիքները պիտի չգործուէին : Շատ սուղի նստաւ  
 Դաւիթի իր անհոգութիւնը : Անոր գրած Սաղ-  
 մոսներէն կը տեսնենք թէ շատ արտասուք թա-  
 փեց և խոնարհութեամբ ապաշխարութիւն փրնա-  
 ուեց : « Երանի թէ, » կ'ըսէ, « աղաւնիի նման թե-  
 ւեր ունենայի որ թռչէի ու հանգիստ ըլլայի : »

**ԸՆԴՈՒՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ**

Մարդը անասուններէն զանազանող յատկա-  
 նիշներէն մին ալ անոր ընկերական բնազդն է :  
 Ընկերութիւնը փոխադարձ պարտականութեանց  
 վրայ հաստատուած կազմաւորութիւն մըն է : Անոր  
 իւրաքանչիւր անդամը ոչ միայն իրարու՝ այլ նաև  
 ընդհանուրին, և ընդհանուրը անհատին հետ պար-  
 աիքի և իրաւունքի կապերով զօդուած են : Հան-  
 րութեան մէջ կանոնաւորութիւն տիրելու և անի-  
 բաւութիւնները արգիլելու համար կառավարու-  
 թիւններ հաստատուած, օրէնքներ դրուած և ու-  
 տիկաններ որոշուած են : Անիշխանականները, ինչ  
 թերութիւն ալ գտնեն այս կազմակերպութեան  
 մէջ, տակաւին կարող պիտի չըլլան համողել  
 մարդկութիւնը որ լքանէ իր ցարդ որդեգրած բո-  
 լոր սովորութիւնները և ապրի, ինչպէս կը պահան-  
 ջեն, « ազատ հաղորդակցութեամբ : » Անոնց խընդ-  
 րածը քաղաքական բարեկարգութիւն չէ, այլ  
 բնաջնջումը « կազմակերպեալ կառավարութեան  
 բոլոր ձեւերուն, » « քանզի, » կ'ըսեն, « անհատը

իր իսկ օրէնքը ըլլալու է » : Ազատութեան այս  
 բարձր ըմբռնումը կը գնահատենք, բայց միան-  
 գամայն կը հարցնենք . Արդեօք իրականանալի՞ է  
 ան գէթ ընկերութեան զարգացումի ներկայ փու-  
 լերուն մէջ : Հրեշտակային ընկերակցութեան մը  
 մէջ անիշխանականութիւնը հասկնալի երեւոյթ  
 մըն է . բայց որչափ ժամանակ որ մարդ արարածը  
 չէ բարձրացած այդ մակարդակին, անիշխանական  
 դրութեան ընդունելութիւնը դժոխային վայրի մը  
 պիտի վերածէր այս երկիրը, ինչպէս որ անոնց  
 զայն իրագործելու համար դորձածած բուռն մի-  
 ջոցները կը ցուցնեն : Ինչպէս միապետական կա-  
 ռավարութիւնը իր բռնակալական ընթացքով  
 մարդկութեան դէմ կը մեղանչէ, նոյնպէս ալ  
 անիշխանականները իրենց քայքայիչ և կոր-  
 ծանիչ արարքներով ընկերութեան դէմ կը դա-  
 ւաճանեն :

Անոնց որդեգրած տեսութիւններէն մին ,  
 ազատ սիրոյ վարդապետութիւնը, վերջերս բա-  
 ւական հետաքրքրութիւն արթնցուցած է եզիպ-  
 տոսի Հայ հասարակութեան մէջ : Թերթերը կը  
 գրեն թէ կարգ մը երիտասարդներ, ուրիշ մի-  
 քանի բարեկարգութիւններու հետ, զայս ալ մշա-  
 ցընել կը ջանան մեր ազգային շրջանակներուն  
 մէջ : Թէև Ազատ Սիրոյ վարկածը մանրամասնօրէն  
 քննելու առիթը չեմ ունեցած, բայց որչափ որ կը  
 հասկնամ՝ անոր պաշտպանները կը սորվեցնեն թէ  
 ինչպէս ուրիշ բաներու մէջ, նոյնպէս սիրոյ մէջ

մարդ կատարելապէս աղատ ըլլալու է : Առն և կնոջ միացումը որևէ նիւթական կամ ընկերական շարժառիթէ զերծ՝ լոկ սիրէ ծնունդ առնելու է : Այսչափը լաւ : Մենք ալ կը պնդենք թէ ամուսնութիւնը նախ և առաջ սիրոյ վրայ հաստատուած ըլլալու է : Բայց ասկէ անդին մեր ճամբաները կը զատուին : Մինչ մենք ամուսնական կապի նուիրականութիւնը կը շեշտենք, անոնց համար ան բնաւ գոյութիւն չունի : Առն և կնոջ միացումը տուփական սէրէ ծագում առած պարզ համաձայնութեան մը արդիւնք է : Բաւական է որ այր մը և կին մը զիրար սիրեն . տարիքի, դիրքի, նիւթականի խնդիրներ յարուցանելու չէ, անոնք կըրնան և պէտք է որ միանան : Կարծեմ պարզապէս ըսել կ'ուզուի թէ երբ մարդ մը տեսնէ կին մը որ իրեն հաճելի կը թուի, զոր կը սիրէ, հոգ չէ թէ ո՛վ է ան, կամ որո՞ւ կենակիցն է, եթէ կրնայ զայն հրապուրել, անոր սէրը գրաւել և համաձայնութիւն գոյացնել, աղատ ըլլալու է անոր հետ միանալու : Այս անշուշտ փոխադարձաբար իգական սեռին համար ալ արդարանալի պիտի ըլլար :

Արդ վայրկեան մը ենթադրենք թէ այս կանոնը ընդունուէր և գործադրութեան դրուէր հասարակութեան կողմէ : Արդարև, ինչպէս որ ոմանք կը պնդեն, սովորական բողանոցները պիտի անհետանային և պոռնիկութեան արգի դրութիւնը պիտի վերնար, բայց ամբողջ երկիրը ընդարձակ բողանոցի մը, և բովանդակ մարդկութիւնը շնա-

ցողներու և պոռնիկներու ընկերութեան մը պիտի վերածուէր : Ոչ միայն ընտանիք ըսուած բանը բոլորովին պիտի անյայտանար աշխարհի վրայէն, այլ նաև բոլոր ընկերական կազմակերպութեանց հիմը պիտի քանդուէր : Յառաջդիմութեան անունով եղած այս պահանջը յետադիմութեան առաջնորդող հզօր ազդակ մը պիտի ըլլար : Փոխանակ մարդկութիւնը բարձրացնելու, զայն ստորնացնելու պիտի ծառայէր : Անոր բնութեան ազնուացման սատարելու տեղ, աւելի անասնական կիրքերը պիտի գրգռէր : Այսպիսի վիճակ մը ի՞նչ տարբերութիւն պիտի ունենար անասուններուն ապրած կեանքէն : Անոնք կը զուգաւորին որո՞ւ հետ որ կ'ուզին : Զօրաւորը տկարին ձեռքէն կը յափշտակէ այն որ իրեն պիտոյ է : Նոյնը պիտի չպատահէր նաև մարդոց մէջ : Բաւական է որ մարդ իր հակաակորդէն զօրաւոր ըլլար . անոր բոլոր ինչքին հետ նաև կինն ու աղջիկներն ալ պիտի իւրացնէր :

Ատոր պատճառը, կ'ըսուի, դաստիարակութեան պակասն է : Երբ մարդկութեան մէն մի անհատը դաստիարակուի այնպէս ինչպէս որ պէտք է, այս անտեղութիւնները պիտի չպատահին : Ահա եռքօրփիւս մը որ իրականանալի չէ, որչափ ատեն որ մարդը մարդ կը մնայ իր բոլոր մարդկային հանգամանքներով : Ինչքինքնին այսպէս դաստիարակուած և այս խէտալ վիճակը իրագործելու կարող կարծող անհատներ, թէ այր և թէ կին, թող

փորձ մը ընեն : Թող անոնք համախմբուին ան-  
ջատուած կղզիի մը մէջ և հոն միատեղ ապրին :  
Արդիւնքը երեւակայել դժուար չէ . . . :

Մարդկային ազգը, դոնէ առ այժմ, այս օրի-  
նակ ապրելակերպի մը չկրնար հանդուրժել : Քա-  
ղաքակրթութիւնը, որ ուրիշ բան չէ, այլ դարե-  
բու փորձառութեամբ մարդոց սորված մեծ դա-  
սերուն համագումար արդիւնքը, ընկերական յա-  
րաբերութիւնները կառավարող օրէնքներ, դրած  
է, զորս բեկանելով կը մեղանչենք իր դէմ :  
Մանաւանդ մեղի նման համայնքի մը մէջ, ուր  
Քրիստոնէական կրօնը իբր հիմ ընդունուած է բո-  
լոր ընտանեկան և ընկերային կարգադրութիւննե-  
րուն, ամուսնութիւնը նուիրական և անկապտելի  
առանձնաշնորհութիւն մը կը նկատուի. անոր դէմ  
գործուած որևէ յարձակում սրբապղծութիւն է :

Կան որ կ'ուրանան թէ անբարոյականութիւնը  
մեղք մըն է ընկերութեան դէմ : Հանդիպած եմ  
երկտասարդներու որոնք ինքզինքնին կը չքմեղա-  
ցընեն՝ ըսելով թէ, երբ հասարակաց կնիկի մը կ'եր-  
թան, ատով ոչ դի վնաս կը հասցնեն, որովհետև  
անիկա իր ազատ կամքով իր անձը տրամադրելի  
ըրած է, ուրիշ խօսքով՝ զայն ծախու հանած է և  
իրենք միայն կը գնեն ինչ որ հրապարակին վրայ  
է : Ասիկա պարզ առեւտուր մըն է և իրենք պա-  
տասխանատու չեն ծախուած ապրանքին որակին  
համար :

Այս ինքնարդարացումը ներկայացնողներուն

պատասխանս միշտ եղած է. « Պիտի ուղէնք որ  
ձեր քոյրը կամ մօտաւոր մէկ աղգականը նոյն  
առեւտուրով զբաղէր » : Երբէք : « Հեռի ըլլայ այդ  
բանը մեր ընտանիքէն » : Ոհ, եթէ ձեր որևէ  
մէկ հարազատ աղգականին նկատմամբ ասոր խոր-  
հուրդը իսկ այդ աստիճան սոսկալի կը թուի, ին-  
չո՞ւ չէք մտաբերեր թէ այդ աղջիկը, զոր դուք մի  
քանի դահեկանի փոխարէն ձեր կրից կը զոհէք և  
որու ստորնանալուն և ընկերութեան պարկեշտ և  
պատուաւոր շրջանակներէն արտաքսուելուն պատ-  
ճառ կ'ըլլաք, նոյնպէս քոյր մըն է, դուստր մըն է,  
և թերեւս եղբայր մը ունի որուն սիրտը անոր սի-  
րովը կը բարախէ, անոր վիճակին վրայ կ'ողբայ և  
կրնայ ըլլալ որ մինչև իսկ անոր համար կ'աղօթէ :  
Վստահաբար անիկա կը սիրուի իր հօրմէն, մօրմէն,  
եղբայրներէն այնչափ որչափ դուք կը սիրէք  
ձեր քոյրը : Ինչո՞ւ, ուրեմն, նկատողութեան չէք  
առներ ուրիշներուն զգացումները : Առանց հաւա-  
տացեալ մը ըլլալու իսկ մարդ կրնայ դնահատել  
Քրիստոսի ոսկեղէն կամոնը : « Ինչ որ կ'ուղէք որ  
մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս  
ըրէք : » Կիրարկեցէք զայն ձեր բոլոր յարաբե-  
րութիւններուն մէջ և ահա պիտի տեսնէք որ ձեր  
կեանքը խիստ տարբեր երեւոյթ մը պիտի ստանայ  
կ'ուղէք որ ուրիշը ձեր կնոջ սիրահարի, ձեր մայրը  
հետապնդէ, ձեր քրոջ անպատուելուն պատճառ ըլ-  
լայ Ոչ, հազար անգամ ոչ : Ուստի դուք ալ ստիպ-  
ուած էք անոնց հետ նոյն կերպով վարուիլ :



ԸՆԴԴԷՄ ԱՍՏՈՒԾՈՅ

Մարդիկ երեք գլխաւոր դասակարգի կրնան բաժնուիլ այն գաղափարներուն համեմատ, զորոնք կը տածեն Աստուծոյ նկատմամբ :

Առաջին՝ անոնք որ Գրիստոնեայ են և Սուրբ Գրոց ի սրտէ և անկեղծօրէն կը հաւատան :

Ասոնց համար ո՛ր աստիճան ալ ծանր ըլլայ անբարոյականութեան մեղքը ընտանիքի և ընկերութեան դէմ, մեծագոյնը զոր մարդ կը գործէ այս կերպով՝ Աստուծոյ դէմ է : Արդէն Գրիստոնէական մեղք բառին նշանակութեան մէջ գաղափար մը կայ թէ անիկա ուղղակի Աստուծոյ դէմ գործուած չարիք մըն է : Բաւական է անոնց ներկայացնել Աստուածաշունչի խօսքերը, և անոնք պիտի համոզուին անբարոյականութեան մեղաց վրայ : Հոն կը կարդանք թէ Նոյի Ժամանակ, երբ երկրի վրայ մարդիկ սկսան չարութիւն գործել և իրարու հետ չնալ, Աստուած սրամտեցաւ և ջրհեղեղը զրկելով զանոնք պատուհասեց : Յովսէփի համար գրուած է թէ անիկա չնութիւնը Աստուծոյ դէմ մեղք նկատելով՝ կարող եղաւ փորձութեան դիմադրել : Դաւիթ դաւաճանօրէն Բերսարէէն իրեն կնութեան առնելէ յետոյ Նաթան մարգարէին յանդիմանութիւններէն զգածուելով երբ ապաշաւի եկաւ, իր գործած չարիքը իբր Աստուծոյ դէմ մեղք համարեցաւ ու աղաղակեց. «Բեզի,

միայն քեզի դէմ մեղանչեցի, և քու աչքերուդ առջև չարութիւն ըրի : » Նոյնպէս Անառակ Որդին ապերասան կեանքէ մը իր հօրը տունը վերադարձին՝ անոր առջեւը ծունր կրկնած կը խոստովանի . « Մեղայ յերկինս և առաջի քո : » Պօղոս առաքեալ մարդկային մարմինը Աստուծոյ տաճարին կը նմանցնէ և կ'ըսէ թէ անիկա սահմանուած է Սուրբ Հոգւոյն բնակութիւնը ըլլալ : Հետեւաբար չնութեան, դիջութեան և ազտոտ կիրքերու գործիք եղած մարմինը այս սրբազան պաշտօնը չկրնար կատարել և Աստուծոյ բարկութիւնը իր վրայ կը հրաւիրէ : « Եթէ որ Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած պիտի ապականէ զնա, քանզի Աստուծոյ տաճարը սուրբ է, որ էք դուք : »

Դարձեալ, այս իմաստով է որ Սուրբ Գրոց մէջ ամէն տեղ անբարոյականութիւնը արգելուած է : Մովսէս իր Տասնաբանեային մէջ իբր արմատական կանոն «Շնութիւն մի ընելի,» կ'ըսէ : Եւ Յիսուս Մովսիսական պատուէրին արմատին վրայ իր մատը դնելով՝ անոր աւելի խորհրդաւոր և լայն իմաստ մը կու տայ և կ'ըսէ. «Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ով որ կնոջ կը նայի ցանկանալու համար անոր, իր սրտին մէջ շնացաւ անոր հետ : » Մարդ նախ աչքովը կը տեսնէ, մտքովը կը յղանայ, և ապա գործադրութեան կը դնէ : Վերջապէս Առաքեալը բացառապէս յայտօրէն կ'ըսէ. « Մի խաբուիք, ոչ պոռնիկները, ոչ շնացողները, ոչ իգացեալները, ոչ արուագէտները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : »

Երկրորդ դասակարգ մըն ալ կայ որ Քրիստոնէութեան և Սուրբ Գրոց խօսքերուն հաւատ չընծայելով հանդերձ կը դաւանին թէ Ամենակարող Աստուած մը կայ, որ տիեզերքը ստեղծած է ու անոր Գերիշխան Տէրն է :

Այսպէս խորհողներուն կը ներկայացնենք զուգընթաց մի ուրիշ ճշմարտութիւն, այսինքն թէ ինչպէս որ ֆիզիքական աշխարհ մը կայ, կայ նաև բարոյական աշխարհ մը որուն կառավարիչն է Աստուած : Կան բնական օրէնքներ, կան նաև բանական օրէնքներ : Մարդ իր ֆիզիքական կազմութեամբ հպատակ է առաջիններուն, զորս բեկանելով Բնութեան դէմ կը մեղանչէ և կը սուտօք : Իսկ իր բնական և բարոյական կարողութիւններով հպատակ է երկրորդներուն զորս բեկանելով անոնց հեղինակին դէմ կը մեղանչէ :

Բարոյական օրէնքը երկու հանգամանք կը պարունակէ : Նախ, պարտականութեան զգացում մը կ'արթնայնէ մեր մէջ : Երբ անոր պահանջները կը ներկայանան մեր մտքին, առաջին խորհուրդը զոր կ'ունենանք՝ սա է թէ պարտ է հնազանդիլ անոնց : Այս « պարտ է » ի գաղափարը Քանթ categorical imperative կը կոչէ, այսինքն՝ բարոյական օրէնքին կու տայ այնպիսի հանգամանք մը որ անջնջելի է, զոր անտես ընել կարելի չէ : Բացարձակապէս հրամայողական է, պայման չընդունիր, պարագաները հաշիւ չընէր, չքմեղանք նկատողութեան չաւաներ : Պարտ է, պիտի է,

անհրաժեշտ է կ'աղաղակէ անընդհատ՝ հողւոյն լսելիքներովը միայն իմանալի այս ձայնը : Երկրորդ, կամքի միջամտութեամբ միայն գործադրելի ըլլալուն՝ անոր հնազանդելու կամ զայն բեկանելու հնարաւորութիւնը միշտ բաց է : Ստիպումը բարոյական է, ոչ թէ ֆիզիքական : Մարդ կատարելապէս ազատ է զայն գործադրելու կամ անոր դէմ ընդվզելու : « Աստուած մեզ ստեղծած է բանական և ազատ, որպէս զի մեզմով իր կամքը կատարուի, ոչ թէ կոյր ստիպման տակ, ինչպէս են բնական գործողութիւնները, այլ խելահասութեամբ և կամաւ : »

Արդ բարոյականութիւնը ի՞նչ դիրք կը բռնէ այս աստուածաբնութեան մէջ : Ոմանք կը սորվեցընեն թէ անիկա լոկ մտասիպար մըն է կեանքի՝ զոր իրագործելու ենք կատարելութեան հասնելու համար : Այս ուսուցումը ընդունելով հանդերձ՝ կ'աւելցնենք թէ բարոյականութիւնը, կամ ուրիշ խօսքով « մարդկային նկարագրի բարձրագոյն գաղափարականին իրագործումը, » Աստուծոյ կամքը և հրամանը ըլլալով անոր բացակայութիւնը կեանքի մէջ, իբր ժխտումը այդ հրամանին, մեղք է Աստուծոյ դէմ : Մարդուն և իր Արարչին միջև գոյութիւն ունեցող բարոյական յարաբերութենէն ծագում առած է մեղքին ըմբռնումը :

Երրորդ դասակարգ մը կայ որ բոլորովին կ'ուրանայ ոչ միայն Քրիստոնէութիւնը, այլ նաև Աստուծոյ մը գոյութիւնը և կը բառնայ մեղաց գաղափարը մարդկային կեանքէն :

Աստուծոյ Գոյութիւնը ուրանալ տգիտութեան արդիւնք է : Ամէն անոնք որ փիլիսոփայութեան վրայ տարրական հմտութիւն մը ունին՝ պիտի յիշեն թէ անոր ընդունած առաջին սկզբունքներէն մին պատճառի և արդիւնքի օրէնքն է : Ամէն պատճառ արդիւնք մը ունի, և երբ արդիւնքի մը կը հանդիպինք՝ անհրաժեշտօրէն պատճառ մը կը փնտռենք : Հրրպըրթ Սփէնսըրի պէս բնապաշտ փիլիսոփայ մը, այս օրէնքին միջոցաւ, տիեզերքին գոյութենէն սկզբնապատճառի մը, այսինքն՝ Արարչի մը, գոյութիւնը մակարերեց :

Բայց երբեմն այնպէս կը պատահի որ պատճառ մը կ'ունենանք առանց երեւելի արդիւնք մը անոր հետ զուգորդուած տեսնելու : Օղին տրուած թեթև բախումը պատճառ մըն է, և թէև անմիջական արդիւնք մը չենք տեսներ, այսու ամենայնիւ գիտենք թէ անիկա միջնորդութիւն մէջ շարժում մը յառաջ բերաւ . հոն փոքրիկ հոսանք մը գոյացուց : Որևէ գործ կողմացեալ չկրնար մնալ : Անիկա հարեւան իրերուն վրայ ազդեցութիւն մը կը թողու և տարբեր ձեւով մը երեւան կու գայ :

Նոյնը ճշմարիտ է նաև բարոյական աշխարհի մէջ : Ամէն տեսակ անառակութիւն, մեղք և չարութիւն արդիւնք մը պիտի ունենայ : Անկէ խուսափիլ կարելի չէ : Եթէ ոչ այս կեանքի մէջ, անպատճառ յաւիտենականութեան մէջ, իւրաքանչիւր գործ, բարի թէ չար, արժանի հատուցում պիտի ընդունի :

Բայց այս ճշմարտութիւնը ուրացողները կարծուածին չափ անհաւատ չեն : Անոնք թէև կ'ուրանան զԱստուած, բայց եթէ կարելի ըլլար անոնց սրտին թաղուն խորհուրդները ի յայտ ածել, պիտի տեսնէինք թէ կը հաւատան Աստուծոյ և շատ մը հոգեւոր ճշմարտութիւններու՝ առանց գիտնալու : Դեռ անցեալ օր հանդիպեցայ « անկրօն » խեղճ երիտասարդի մը, որ թուքախտէ բռնուած կը խնդրէր որ իրեն համար աղօթեմ : Զարմանալի չէ՞ր գտներ այս հակասութիւնը : Բայց ոչ, անոնց անկրօնութիւնը յաճախ կախում ունի այն մոլութենէն որմէ բաժնուիլ չեն ուզեր : Ինչպէս որ կեղծ կրօնասէրներ կան, կան նաև կեղծ անկրօններ : Կեղծ հաւատացեալը գծուծ շարժառիթներով եկեղեցի կը յաճախէ, մարդոց երեւնալու համար Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ . կեղծ անհաւատն ալ իր չար արարքները սքողելու, իր խղճին ձայնը խեղդելու համար անկրօնութեան հովեր կ'առնէ :

Անգամ մը, կիրակի օր մը, եկեղեցիէն վերադարձիս, այս « կեղծ անկրօն » երիտասարդներէն մին տեսայ, որ իր սենեակին պատշգամբ նստած կը ծխէր : Երբ զիս տեսաւ, հրաւիրեց որ վեր ելլեմ : Առաջին հարցումս եղաւ, « Ինչո՞ւ ժողովի չես գար » : Անկեղծօրէն պատասխանեց, « Որովհետև հաւատացեալ չեմ » : « Ի՞նչպէս կ'ըլլայ այդ », ըսի զարմացմամբ : « Շատ պարզ կերպով, քանզի բանի մը չեմ հաւատար, » պատասխան տուաւ : Զմոռնամ

ըսելու որ այս երիտասարդը դուքճական բարձր դաստիարակութիւն ընդունած է, և խորհելու ու տրամաբանելու կարողութիւն ունի: « Իրաւ բանի մը չես հաւատար, » հարցուցի նորէն: « Ամենեւին, » պատասխանեց: « Բայց, » ըսի, « հակառակ քու բացարձակ ժխտման, ես կրնամ ապացուցանել թէ շատ բան կայ որուն կը հաւատաս անդիտակցարար: Անշուշտ դրպանի տետր մը ունիս, հանէ զայն, և անոր մէկ էջին վերելք դրէ, կը հաւատամ, և շարունակէ գրել հետեւեալ դաւանութիւնը: Անշուշտ ազատ ես չգրել ինչ որ քեզի անտրամաբանական կը թուի: »

Գրեց .

Կը հաւատամ

1. Կը հաւատամ սկզբնապատճառի մը որ համայն գոյութեան նախնական աղբիւրն է:

Մարդկային միտքը այնպէս կազմուած է, որ ամէն արդիւնքի պատճառ մը կը պահանջէ: Չկայ բան մը որ իր պատճառը չունենայ: Երբ կը տեսնեմ մեքենայ մը, առանց կասկածի մեքենագործ մը կ'ենթադրեմ: Նմանապէս երբ կը տեսնեմ տիեզերքը, զայն արտադրող Արարիչ մը կ'ենթադրեմ: Խնդիր չէ թէ այս սկզբնապատճառին ինչ անուն կու տանք: Ոմանք զայն Աստուած կը կոչեն:

2. Այս սկզբնապատճառը բանաւոր էակ մը ըլլալու է:

Բնութեան մէջ կը գտնեմ բանականութիւն, կազմակերպութիւն, կանոնաւորութիւն և օրէնք, հետեւաբար չեմ կրնար ըմբռնել թէ զանոնք արտադրող էակը այս յատկութիւններէն զուրկ է:

3. Անսկիզբ, ամենակարող և անսահման ըլլալու է:

Անսկիզբ է, որովհետեւ ամէն բանի սկիզբն է: Ամենակարող է, որովհետեւ ամեն բան ինք ստեղծած է: Անսահման է, որովհետեւ սահմանաւորը չկրնար անսահմանը գոյութեան բերել:

4. Կը հաւատամ թէ իմ մէջս կայ նիւթէն տարբեր բան մը, բան մը՝ որ ունի խորհելու, յիշելու, տրամաբանելու և կամենալու կարողութիւնները: Այսինքն անձս երկու տարբէ կը բաղկանայ — նիւթ և հոգի կամ միտք: Բնագիտութիւնը ինծի սորվեցուցած է թէ տիեզերքին մէջ կորուստ չկայ: Ինչ որ կորուստ կը կարծուի՝ ուրիշ բան չէ, այլ իրի մը մէկ ձեւէ ուրիշ ձեւի փոխուիլը: Նիւթականին համար եթէ այսպէս է, նոյնը ճշմարիտ է նաև հոգեկանին համար: Հոգեկան կարողութիւնները, ուրեմն, մահուանէ վերջ չեն կորսուիր, այլ ուրիշ վիճակի մը փոխուելով իրենց գոյութիւնը կը պահեն: Հանդերձեալ կեանքը այսպէս՝ չէ թէ միայն հաւանական, այլ անհրաժեշտ իրողութիւն մըն է:

5. Ես Բնութեան մէկ մասը կը կազմեմ, և Բնութեան Արարիչը իմ ալ ստեղծիչս է: Կարողութիւնները որոցմով օժտուած եմ՝ նաև կը պատ-

կանին Անոր : Ես անձնաւոր եմ. Աստուած ալ անձնաւոր է : Բարիին և չարին , դեղեցիկին և տղեղին , ուղիղին և սխալին զանազանութիւնը կրնամ ընել . Ան ալ աւելի : Եթէ ուրիշ մտաւոր արարածներու հետ հաղորդակցելու կարողութիւնը ունիմ , Աստուած ալ իբր մտաւոր էակ մը իմ հետս կրնայ հաղորդակցիլ :

6. Կը հաւատամ թէ ասկէ քսան դար առաջ Նազովրեցի Յիսուս անուն մարդ մը աշխարհ եկաւ և Քրիստոնէութեան հիմը դրաւ :

Պատմութիւնը յաճախ սխալ արձանագրութիւններ ըրած է անցեալին մէջ պատահած դէպքերու և ապրած մարդոց վրայ , բայց կան այնպիսի պատմական իրողութիւններ և անձեր որոնց գոյութիւնը կասկած չվերցնելու : Կեսարի կեանքը , Մարաթոնի պատերազմը , Հռովմայ հրդեհը անուրանալի պատմական իրողութիւններ են : Այսպէս է նաև Նազովրեցի Յիսուսի կեանքը :

7. Յիսուսի հռչակը կը կայանայ Անոր վարդապետութեանց և բարոյական կեանքին մէջ : Ան Մեծն Աղեքսանդրի պէս քաջ պատերազմող մը չէր , Շարլըմանի պէս փառապանծ թագաւոր մը չէր , ոչ ալ Պղատոնի պէս խորիմաստ փիլիսոփայութիւն մը քարոզեց : Անոր սորվեցուցածները բարոյական կենցաղի վրայ հիմնուած երկնային վարդապետութիւններ էին :

8. Կը հաւատամ թէ Անոր կեանքը նոր դարադրուիս մը բացաւ պատմութեան մէջ և վարդապետութիւնները բարոյական ահագին տպաւորութիւն մը թողուցին մարդկութեան վրայ : Վերջին քսան դարերուն մէջ ապրող ամենամեծ տաղանդները Անոր ազդեցութիւնը կրած են , և Անոր հոգիովը տողորուած ազդերը միւսներէն աւելի — անհամեմատապէս աւելի — զարդացած և ամէն ճիւղի մէջ յառաջացած կը գտնենք : Անհնարին է այժմ վերցնել աշխարհի գրականութենէն Քրիստոնէութեան տարրը : Քրիստոսի աշխարհ գալէն ետքը մարդկութիւնը խիստ յոյժ աւելի բարոյական վիճակ մը ստացաւ քան զոր ունէր առաջ :

9. Յիսուս գերմարդկային պահանջներ ըրաւ . Բացառիկ իմաստով մը Որդի Աստուծոյ կոչուեցաւ : Ինքզինք Աստուծոյ հաւասար սեպեց : Պահանջեց որ մարդիկ իրեն երկրպագութիւն ընեն , զինքը իբր Աստուած պաշտեն : Ուստի սա երկու եզրակացութիւններէն մին կամ միւսը ընդունելու ենք . Յիսուս կամ արգահատելի խաբեբայ մտրեցուցիչ մըն էր , և կամ էր ինչ որ կ'ըսէր թէ էր :

Բայց չեմ կրնար ըմբռնել թէ խարդախ և անբարոյական անհատ մը կրնայ աշխարհի վրայ քսան երկար դարեր այսպիսի բարոյական տպաւորութիւն թողուլ : Չար ծառը բարի պտուղ չկրնար տալ : Ասիկա հակասութիւն մըն է զոր մարդկային միտքը կը մերժէ ընդունիլ :


10. Այս անձին կենաց և գործերուն պատմութիւնը գրուած է Աւետարան կոչուած չորս գիրքե-

րուն մէջ: Նոր Կտակարանին միւս մասերը կը մեկնեն  
և կը լրացնեն Յիսուսի կեանքին, գործերուն և վար-  
դապետութեանց արձանագրութիւնները:


Այս գիրքը՝ Յիսուսը լաւ ճանչցող, անոր հետ  
մօտէն յարաբերութիւն ընող անձանց կողմէ գրուած  
ըլլալուն համար՝ անոր ճշմարտութեանը կասկած ելու  
պատճառ մը չունիմ: Չեմ կրնար դտնել արժանի  
չարժառիթ մը որ Նոր Կտակարանի հեղինակները  
մղած ըլլայ գրել այնպիսի բաներ որ գիտէին թէ ան-  
հիմն և սուտ են: Ասոր կը համոզուիմ, մանաւանդ  
երբ նկատողութեան կ'առնում այն հալածանք-  
ները և չարչարանքները, որոնց ենթարկուեցան  
անոնք այս վկայութիւնները տուած ըլլալուն համար:

11. Աւետարանը կ'ըսէ թէ Յիսուսի կեանքը  
իմ հետս անձնական և կենսական առնչութիւն մը  
ունի, Անոր հաւատալը կեանք, և զայն մերժելը  
մահ է: Ասիկա չեմ կրնար ընդունիլ: Այսու ամե-  
նայնիւ քանի որ այսպիսի կենսական խնդիր մըն  
է, քննելով ճշմարտութիւնը երեւան հանելու եմ:  
Մութին մէջ քալած ատենս եթէ մէկը ինձի ըսէ,  
«Առջեւդ խորունկ վիհ մը կայ», կրնամ անոր  
ըսածին չհաւատալ, բայց խնդիրը չքննել ալ  
չեմ կրնար ընել:

12. Աստուածաշունչը ուսումնասիրել իւրաքան-  
չիւր անհատի անխոստացիւր պարտաւորութիւնն է:



Վ Ե Ր Ձ



30

19853

« Ազգային գրադարան



NL0055649

19852

« Ազգային գրադարան



NL0055650

19851

« Ազգային գրադարան



NL0055651

19850

« Ազգային գրադարան



NL0055652

